



«Ոչ կառավարական դերակատարների հզորացում  
բարեփոխումների խթանման և հանրային  
հաշվետվողականության բարելավման նպատակով»



## **ՔՅԿ-ՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԳՈՐԾՈՒՄ. ԿԱՐԻՔՆԵՐ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**ՀԱՅԱՍՏԱՆ**

**Տաթևիկ Մարգարյան, Արփինե Հակոբյան**

Երևան, 2015 թ.




Սույն հրատարակությունը չի արտացոլում Եվրոպական հանձնաժողովի կամ ԵՄ այլ կառույցների պաշտոնական տեսակետը: Եվրոպական հանձնաժողովը որևէ պատասխանատվություն չի կրում սույն նյութի բովանդակության համար:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ .....	2	Կամավորություն .....	28
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ .....	4	Լուծարում .....	28
ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ .....	5	ՔՀԿ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄՅՈՒՍ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԻ ՀԵՏ .....	29
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....	9	ՔՀԿ-ների միջև համագործակցությունը, ցանցեր և կոալիցիաներ .....	29
Հիմնական հասկացություններ .....	9	Համագործակցություն կառավարման մարմինների հետ .....	31
ՄԵԹՈԴՈՂՈԳԻԱ .....	11	Համագործակցություն մասնավոր հատվածի հետ .....	34
Մեթոդոլոգիական սահմանափակումներ .....	11	Համագործակցություն ՁԼՄ-ների հետ .....	36
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՀԿ-ՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ .....	13	ՔՀԿ ՖԻՆԱՆՍԱՎԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ .....	39
Երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակը և ՔՀԿ գործունեությունը .....	13	Հայաստանի ՔՀԿ-ների ֆինանսական կայունության համապատկերը .....	39
ՔՀԿ տիպերը և հիմնական կանոնակարգումները .....	15	ՔՀԿ ֆինանսավորման աղբյուրները .....	40
ՔՀԿ գործունեության ոլորտները և ուղղությունները .....	17	Միջազգային կազմակերպություններ .....	41
ՔՀԿ կազմակերպական կարողությունները .....	19	Պետական ֆինանսավորում .....	42
Ոչ ֆորմալ խմբերի առանձնահատկությունները .....	20	Մասնավոր նվիրատվություններ և անհատական ներդրումներ .....	43
ՔՀԿ ԻՐԱՎԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ .....	22	Անդամավճարներ .....	44
ՔՀԿ գործունեությանն առնչվող հիմնական իրավունքները և ազատությունները .....	22	Վճարովի ծառայություններ .....	44
ՔՀԿ գրանցման և գործունեության կանոնակարգումներ .....	25	ՔՀԿ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ .....	46
Գրանցում .....	25	Քաղաքականության ձևավորման և շահերի պաշտպանության գործընթացում ՔՀԿ մասնակցության ընդհանուր նկարագիր .....	46
Ղեկավարում .....	26	Քաղաքականության ձևավորման գործընթացում ՔՀԿ մասնակցության և շահերի պաշտպանության փորձը և առկա ինստիտուցիոնալ մեխանիզմները .....	47
Հաշվետվողականություն .....	26		
Ֆինանսավորում .....	27		



Քաղաքական երկխոսություն. պետական կառավարման մակարդակ .....	49
Քաղաքական երկխոսություն. համայնքային մակարդակ .....	51
Ոչ ֆորմալ շարժումներ .....	53
ՔՀԿ-ների կարողությունները և կարիքները՝ քաղաքականության մշակմանը մասնակցելու համար .....	54
Հանրային քաղաքականության վրա ՔՀԿ-ների ազդեցության ռազմավարությունը .....	54
ՔՀԿ կարիքներն ու կարողությունները քաղաքականության մշակման գործընթացում արդյունավետ մասնակցության համար .....	56
<b>ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b> .....	<b>60</b>
Ընդհանուր միջավայրը և ՔՀԿ գործունեությունը .....	60
ՔՀԿ իրավական միջավայր .....	60
Համագործակցություն մյուս դերակատարների հետ.....	61
ՔՀԿ ֆինանսական կայունություն .....	62
ՔՀԿ մասնակցությունը և կարողությունները քաղաքականության մշակման ոլորտում .....	63
<b>ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՂՈՒՄՆԵՐ</b> .....	<b>65</b>



## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԱՀ	Ավելացված արժեքի հարկ	ՄԱԶԾ	Միավորված ազգերի զարգացման ծրագրեր
ԱԼԳ	Արևելյան գործընկերություն	ՄԶՄԿ	Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
ԱԺ	Ազգային ժողով	ՊՀԲՀ	Պրոֆեսիոնալները՝ հանուն քաղաքացիական հասարակության
ԱՄՆ ՄԶԳ	Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալություն	ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ԱՊՀ	Անկախ Պետությունների Համագործակցություն	ԶՀՀ	Զինիշյան հիշատակի հիմնադրամ
ԴՊ	դժվարանում եմ պատասխանել	ՍՊԸ	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ԵՀՀ	Եվրասիա համագործակցության հիմնադրամ	ՏԱ	Տեխնիկական առաջադրանք
ԵՄ	Եվրամիություն	ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ԶԼՄ	Զանգվածային լրատվամիջոցներ	ՔԶՀՀ	Քաղաքացիական զարգացման և համագործակցության հիմնադրամ
ԻԱՄ	Իրավաբանական անձանց միություն	ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ԿՍՊ	Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն	ՔՀՖ	Քաղաքացիական հասարակության ֆորում
ՀԿ	Հասարակական կազմակերպություն	ՕՕԲՕ	Օրենսդրական օրակարգի քննարկման օրեր
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն		
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք		



# ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

Տվյալ ուսումնասիրությունն ուղղված է բացահայտելու և վերլուծելու քաղաքացիական հասարակության դերակատարների կարիքներն ու կարողությունները քաղաքականության երկխոսության մասնակցության գործում, ինչպես նաև այն ուղիները, որոնցով այս դերակատարները կարող են ներդրում ունենալ առանձին ոլորտների քաղաքականության երկխոսության մեջ: Ուսումնասիրության կոնկրետ նպատակն է խորքային վերլուծություն ներկայացնել Հայաստանի ՔՀԿ-ների դաշտի, քաղաքականության երկխոսության գործընթացում նրանց մասնակցության կարիքների ու կարողությունների վերաբերյալ: Զեկույցը մշակվել է ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող «Ոչ կառավարական դերակատարների հզորացում բարեփոխումների խթանման և հանրային հաշվետվողականության բարելավման նպատակով» տեխնիկական աջակցության ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի առաջնորդությամբ՝ կազմակերպությունների կոնսորցիումի կողմից:

Զեկույցի մշակման նպատակով ՔՀԿ դաշտի վերաբերյալ մի շարք հետազոտություններ ու հրապարակումներ են ուսումնասիրվել, և վերլուծության են ենթարկվել 2014թ. առաջին եռամսյակում իրականացված էմպիրիկ հետազոտության արդյունքները: Հետազոտությունը ներառում է քանակական և որակական բաղադրիչներ, այդ թվում 150 ՔՀԿ-ների հետ հարցում և 12 ֆոկուս-խմբային քննարկումներ՝ տեղական ու միջազգային ՔՀԿ-ների, պետական մարմինների ներկայացուցիչների ու ՔՀԿ ոլորտի փորձագետների մասնակցությամբ:

Ըստ ուսումնասիրության մեջ ներառված թեմաների՝ կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական բացահայտումները:

## Հայաստանի ՔՀԿ-ների ընդհանուր նկարագիր

Վերջին 20 տարվա ընթացքում Հայաստանը քաղաքական, տնտեսական և սոցիալական տարբեր զարգացումների դժվարին ճանապարհ է անցել, այդ թվում՝ անցումային շրջան, պատերազմի և երկրաշարժի հետևանքներ, տնտեսական և սոցիալական ճգնաժամ: Կոռուպցիան

և արտագաղթի բարձր ցուցանիշները համարվում են երկրի առավել նշանակալի խնդիրները: Մինևույն ժամանակ միջազգային զեկույցները Հայաստանի քաղաքացիական հասարակությունը գնահատում են որպես համեմատաբար լավ զարգացած:

Հայաստանում ՔՀԿ-ների շարքին են դասվում հասարակական կազմակերպությունները, հիմնադրամները և իրավաբանական անձանց միությունները, ինչպես նաև ոչ ֆորմալ (իրավաբանական գրանցում չունեցող) խմբերը ու շարժումները: 2014 թ. հոկտեմբերի դրությամբ Հայաստանում գրանցված էին ավելի քան 5200 հասարակական կազմակերպություն, հիմնադրամ և իրավաբանական անձանց միություն, սակայն փորձագետների գնահատմամբ այս կազմակերպությունների միայն 15-20% է գործում: Շատ կազմակերպություններ առկա են միայն թղթի վրա, քանի որ բազմաթիվ ՔՀԿ-ներ ծրագրերի ավարտից հետո փաստացի դադարեցնում են իրենց գործունեությունը:

Գրանցված ՔՀԿ-ների մոտ կեսը տեղակայված են Երևանում, իսկ մյուս կեսը գրեթե հավասարապես բաշխված են մարզերի միջև, ընդ որում ավելի շատ կազմակերպություններ են գրանցված Շիրակի, Լոռու և Արարատի մարզերում: Գյուղական ՔՀԿ-ները Հայաստանում շատ փոքր քանակ են կազմում, իսկ մարզային ՔՀԿ-ների մեծ մասը տեղակայված է մարզկենտրոններում: Ըստ հարցման տվյալների՝ ընտրանքում ընդգրկված ՔՀԿ-ները առավել հաճախ աշխատում են կրթության, համայնքային զարգացման, սոցիալական ծառայությունների, բարեգործության և երիտասարդության ոլորտներում: ՔՀԿ-ների ավելի քան մեկ երրորդն իր գործունեությունը ծավալում է ամբողջ հանրապետությունում, իսկ մարզային և համայնքային կազմակերպությունները կազմում են ընտրանքի մոտ կեսը:

Միջազգային ֆոնդերից կախվածությունը մինչ օրս մնում է ՔՀԿ-ների ֆինանսական կայունության խոցելիության հիմնական դրսևորումը, ինչպես նաև ՔՀԿ-ների հանդեպ վստահության պակասի պատճառներից մեկը: Կարիքների պատշաճ գնահատման ու սեփական առաքելության վրա հիմնված ռազմավարության պակասը ՔՀԿ-ների թույլ կողմն է համարվում և խոչընդոտում է հասարակության կողմից վստահության ձեռքբերմանը:

հանրային քաղաքականության արդյունավետ երկխոսությանն ու տեղական աղբյուրներից ֆինանսավորման հայթայթմանը: Որպես Հայաստանի ՔՀԿ-ների ուժեղ կողմ են նշվում նրանց փորձագիտական հմտությունը և վերլուծական կարողությունը, թեև այս գործոններն ավելի շատ վերաբերում են աշխատակազմի մասնագիտական հմտություններին, քան ՔՀԿ ինստիտուցիոնալ կարողություններին:

Ուսումնասիրության մեջ առանձնահատուկ ուշադրություն է հատկացվում չգրանցված քաղաքացիական խմբերին, որոնք վերջերս նշանակալի դեր են խաղում քաղաքականության երկխոսության ասպարեզում: Ոչ ֆորմալ քաղաքացիական շարժումները Հայաստանում զգալիորեն շատացան 2008 թ.-ից հետո, հիմնականում բնապահպանական և հանրային տարածքների պահպանման ոլորտներում: Քաղաքացիական ակտիվության դրսևորումները առավել աչքի են ընկնում Երևանում, թեև համայնքային և մարզային մակարդակով գործող բազմաթիվ ակտիվ խմբեր կան, որոնք այնքան էլ տեսանելի չեն լրատվամիջոցներում և սոցիալական ցանցերում: Բազմաթիվ համայնքային խմբեր են ստեղծվել միջազգային կազմակերպությունների ծրագրերի շրջանակներում: Թեև ոչ ֆորմալ խմբերի գործունեությունը հաճախ կարճաժամկետ է, այս նախաձեռնությունները մեծապես նպաստում են ինքնակազմակերպման մշակույթին և երիտասարդների քաղաքացիական կրթությանը:

## ՔՀԿ իրավական միջավայրը

Իրավական միջավայրը ՔՀԿ գործունեության համար հիմնականում բարենպաստ է, և քաղաքացիների՝ կարծիք արտահայտելու, միավորումներ կազմելու, հավաքներին մասնակցելու և պետական մարմիններից հանրային հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվություն ստանալու իրավունքներն ու ազատությունները երաշխավորված են ՀՀ Սահմանադրությամբ: Այնուամենայնիվ, այս ասպարեզում խնդիրներ ևս կան՝ մասնավորապես կապված մամուլի և հավաքների ազատությունների հետ: ՔՀԿ օրենսդրությունը գրանցման և հաշվետվողականության առումով խստապահանջ չէ, սակայն հասարակական կազմակերպությունների համար սահմանված է վճարովի ծառայությունների մատուցման արգելք, որը ՔՀԿ ֆինանսական կայունության ապահովման կարևոր խոչընդոտ է համարվում: 2014 թ. կառավարության կողմից «Հասարակական կազմակերպությունների օրենսդրական ու ինստիտուցիոնալ բարեփոխումների հայեցակարգի» հաստատումից հետո մոտ ապագայում օրենսդրական փոփոխություններ են ակնկալվում ՔՀԿ իրավական ձևերի, գրանցման, հաշվետվողականության և ֆինանսավորման հնարավորությունների վերաբերյալ:

## ՔՀԿ հարաբերությունները մյուս դերակատարների հետ

ՔՀԿ-պետական մարմիններ համագործակցության համատեքստում վերջին տարիներին մի շարք քաղաքականություններ, կանոնակարգեր և խորհրդատվական մարմիններ են ստեղծվել, թեև նրանցից ոչ բոլորն են արդյունավետ համարվում ՔՀԿ-ների կողմից: Տեղական իշխանությունների հետ համագործակցությունն ավելի սերտ է գնահատվում, քան պետական կառավարման մարմինների հետ համագործակցությունը: Մի շարք ՔՀԿ-ներ գործընկերային հարաբերություններ են հաստատել համայնքային և մարզային իշխանությունների հետ: Այնուամենայնիվ, այս համագործակցությունը տարերային բնույթ է կրում և հիմնված է ավելի շատ անձնական գործոնի, ոչ թե ինստիտուցիոնալ մեխանիզմների վրա: ՔՀԿ-ների և մասնավոր ընկերությունների միջև համագործակցության մակարդակը ցածր է, որը պայմանավորված է ՔՀԿ-ների հանդեպ վստահության պակասի, երկու հատվածի միջև անբավարար հաղորդակցության և մասնավոր հատվածից ֆինանսավորման հայթայթման սահմանափակ փորձով: Ջանգվածային լրատվամիջոցների հետ հարաբերությունները կենտրոնական տեղ են զբաղեցնում ՔՀԿ-ների հանրային կապերի գործունեության մեջ: Հարցման մասնակից ՔՀԿ-ները ԶԼՄ-ների հետ համագործակցության բարձր ցուցանիշ են նշում, իսկ ՔՀԿ-ների մեծ մասը նշում է, որ լրատվամիջոցներին հրավիրում է իրենց միջոցառումներին և համագործակցում նրանց հետ իրազեկման կամ հանրային արշավների շրջանակներում: ԶԼՄ-ները հակված են լուսաբանելու այն ՔՀԿ-ների գործունեությունը, որոնց լավ են ճանաչում, որոնց գործունեությունն ավելի տեսանելի է և արդիական խնդիրներին է վերաբերում: Մարզային ՔՀԿ-ներն ավելի շատ են համագործակցում տեղական ԶԼՄ-ների հետ՝ հաստատելով գործընկերային հարաբերություններ:

## ՔՀԿ ֆինանսական կայունություն

Ֆինանսական կայունությունը Հայաստանի ՔՀԿ-ների ամենաառաջնային խնդիրն է: Հայաստանի ՔՀԿ-ների ֆինանսավորման հիմնական աղբյուրը միջազգային կազմակերպություններն են: Ըստ հարցման արդյունքների՝ որպես վերջին երեք տարվա ընթացքում ֆինանսավորման հիմնական աղբյուր ՔՀԿ-ների 75%-ը նշել են միջազգային կազմակերպությունները, իսկ 14%-ը՝ պետական մարմինները: Հետազոտությունների համաձայն՝ պետական մարմինների մեծ մասը ֆինանսավորման հստակ մեխանիզմ



չունի և դրամաշնորհների հատկացումը մրցութային սկզբունքով չի իրականացնում, թեև այս առումով կան նաև դրական տեղաշարժեր: Անդամավճարները և մասնավոր նվիրատվությունները ևս ՔՀԿ ֆինանսավորման շատ փոքր մասնաբաժին են կազմում: Բարեգործական նվիրատվությունների համար հարկային խթանների բացակայությունն ու ՔՀԿ-ների նկատմամբ վստահության ցածր աստիճանը մասնավոր սեկտորի կողմից ֆինանսավորման հիմնական խոչընդոտներն են: Վճարովի ծառայությունները գրեթե եկամտի աղբյուր չեն, հիմնականում օրենսդրական սահմանափակումների պատճառով: Ֆինանսական կայունության պակասը խոչընդոտում է Հայաստանի ՔՀԿ-ների ռազմավարական զարգացմանը և բացասաբար է անդրադառնում նրանց կազմակերպական կարողությունների վրա՝ այսպիսով բացասական ազդեցություն գործելով քաղաքականության մշակման գործում ՔՀԿ-ների մասնակցության վրա:

## ՔՀԿ մասնակցությունը և կարողությունները քաղաքականության մշակման ոլորտում

Հայաստանի ՔՀԿ-ների՝ շահերի պաշտպանության կարողությունները ՔՀԿ կայունության ցուցանիշի գեկույցում առավել բարձր գնահատականի են արժանացել՝ մյուս ինստիտուցիոնալ կարողությունների համեմատ: ՔՀԿ-ները կարողանում են ներգրավվել քաղաքականության երկխոսության գործընթացում, համախմբել համախոհներին և շահերի պաշտպանության քարոզարշավներ կազմակերպել, թեև նրանց ոչ միշտ է հաջողվում ազդեցություն ունենալ: Դիտարկված հաջողությունները համակարգային փոփոխությունների չեն բերել, այլ ավելի շուտ ժամանակավոր լուծումներ են դարձել: Ավելին՝ ՔՀԿ-ները նշում են, որ նրանք հաջողակ կարող են լինել միայն այն դեպքում, երբ չեն ընդհարվում իշխանություն կրողների շահերին, մինչդեռ բողոքի շարժումներն ու իրավապաշտպան խմբերը կարող են անտեսվել կամ ճնշման ենթարկվել: Միևնույն ժամանակ առաջընթաց է նկատվում հանրային քաղաքականության ձևավորման և մոնիթորինգի գործընթացում ՔՀԿ-ների մասնակցության ընդլայնված հնարավորությունների առումով, որին զուգահեռ՝ նկատվում է նաև արդյունավետ քաղաքական երկխոսության մեջ ներգրավվելու՝ պետական մարմինների և ՔՀԿ-ների կարողությունների երկկողմանի աճ:

Հանրային քաղաքականության ձևավորման գործընթացում ՔՀԿ-ների մասնակցության ինստիտուցիոնալ հնարավորությունների շարքում առավել նշանակալի են՝

- հանրային քննարկումները՝ որպես իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ կարծիք ներկայացնելու հանրության հնարավորություն,
- ՔՀԿ-ների ցանցերի և պետական մարմինների միջև առկա տարբեր հուշագրերն ու համաձայնագրերը,
- ՔՀԿ-ների և պետական մարմինների ներկայացուցիչներից բաղկացած համատեղ խորհուրդները, աշխատանքային խմբերը և այլ խորհրդատվական մարմինները:

Հաճախ կոնկրետ պետական մարմնի հայեցողությունից է կախված՝ քաղաքականության քննարկման գործընթացում ՔՀԿ-ների ներգրավման համար աշխատանք կտարվի, թե՛ ոչ: Որպես կանոն, քաղաքականության և օրենքների նախագծերը տեղադրվում են համապատասխան պետական մարմնի ինտերնետային կայքում, և ՔՀԿ-ներն իրենք պետք է ջանքեր գործադրեն քննարկմանը մասնակցելու և առաջարկներ ներկայացնելու համար: Կոալիցիաները և ցանցերը շահերի պաշտպանության իրենց գործունեության արդյունքում հաճախ կարողանում են փոփոխությունների բերել և հաջողության հասնել: Այս առումով առավել ակտիվ են բնապահպանական և հաշմանդամության հիմնախնդիրներին վերաբերող կոալիցիաները: ՔՀԿ կոալիցիաների՝ հաջողության հասած քարոզարշավներից շատերը ֆինանսավորվել են միջազգային կազմակերպությունների կողմից: Ոչ ֆորմալ խմբերին հաջողվում է ներագրել քաղաքականության վրա, եթե նրանք աջակցություն են ստանում լայն հանրության և լրատվամիջոցների կողմից:

Տեղական ինքնակառավարման մասին օրենքը հանրային մասնակցության մի շարք հնարավորություններ է ընձեռում, ներառյալ հանրային լսումները, մասնակցությունը համայնքի ավագանու նիստերին, ներառումը աշխատանքային խմբերում: Համայնքային ժողովները հանրային քննարկման առավել տարածված մեխանիզմ են: Այնուամենայնիվ, ներկայումս հայաստանյան համայնքներում հանրային մասնակցությունը հաճախ սահմանափակվում է հանրության իրազեկմամբ և քննարկումներով, մինչդեռ մասնակցությունը և ազդեցությունը որոշումներ կայացնելու մակարդակում մեծապես կախված են տեղական ՔՀԿ-ների, այդ թվում կազմակերպված համայնքային խմբերի ակտիվությունից և կարողություններից, ինչպես նաև տվյալ համայնքապետի մոտիվացիայից: Ամեն դեպքում վերջին 5 տարիներին նկատվում են ՔՀԿ-ների մասնակցության ընդլայնում և համայնքային որոշումների կայացման գործընթացում ազդեցության աճ: Տարբեր տեղական և միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող համայնքային զարգացման ծրագրերը կարևոր դեր են խաղում

մասնակցային մշակույթի ստեղծման և արդյունավետ քաղաքական երկխոսության նպատակով ՔՀԿ-ների, տեղական իշխանությունների և քաղաքացիների կարողությունների զարգացման գործում:

Հարցված ՔՀԿ-ները պետական ծրագրերի և հանրային քաղաքականության վրա ազդելու մեխանիզմներից առավել հաճախ նշում են կոնկրետ հարցի վերաբերյալ տեղեկատվության տարածումը, այնուհետև մասնակցությունը հավաքներին, կոնֆերանսներին և քննարկումներին: Մարզային և տեղական մակարդակի քարոզարշավներն էլ են նշվում, սակայն պակաս հաճախականությամբ: Ընդհանուր միտումն այն է, որ ՔՀԿ-ներն ավելի շատ ընդգրկված են լայնածավալ միջոցառումների իրականացման գործընթացին, որոնք սահմանափակ ազդեցություն ունեն քաղաքականության վրա. այնուամենայնիվ, իրազեկման միջոցառումները ևս դեր ունեն մտածելակերպի փոփոխության և հասարակական կարծիք ձևավորելու գործում: Առցանց գործիքների օգտագործումը նպաստում է տեղեկատվության ավելի արագ տարածմանը և ավելի մեծ քանակով մարդկանց՝ հատկապես երիտասարդների ընդգրկմանը հանրային գործունեության մեջ:

Քաղաքական երկխոսությանը մասնակցության հարցում նկատելի տարբերություն կա Երևանի և մարզային ՔՀԿ-ների պատասխանների միջև: Մարզային մի քանի ՔՀԿ-ներ կանոնավոր մասնակցություն ունեն մարզային և համայնքային խորհուրդներում և մարզային ու համայնքային արշավներում, մինչդեռ Երևանյան կազմակերպությունները ավելի հաճախ են մասնակցում խորհրդարանական հանձնաժողովների և հանրապետական խորհուրդների աշխատանքներին: Այս տարբերությունը բացատրվում է ոչ միայն կազմակերպությունների տեղակայման վայրով, այլ նաև ՔՀԿ-ների կարողությունների տարբերությամբ:

Հետազոտության՝ կարողությունների զարգացման կարիքների վերաբերյալ տվյալների համաձայն՝ ՔՀԿ-ները դասական ուսուցումը նախընտրում են առցանց ուսուցումից: Երևանյան ՔՀԿ-ներն ավելի մեծ պատրաստակամություն են հայտնում մասնակցելու առցանց դասընթացներին: Կազմակերպական զարգացման ոլորտում դասընթացների առավել պահանջված թեմաներն են ֆինանսների կառավարումը և դրամահավաքը, արդյունավետ հաղորդակցությունը և հանրային կապերը, մարդկային ռեսուրսների կառավարումը և առաջնորդությունը, իսկ քաղաքականության մշակման ոլորտում առաջին տեղում է քաղաքական բարեփոխումներում ՔՀԿ դերի մասին տեղեկատվության տարածման թեման, որին հետևում են հանրային մոնիթորինգն ու գնահատումը, «Արևելյան գործընկերության» դերը բարեփոխումների գործընթացում և պետական քաղաքականության բոլոր մակարդակների

մոնիթորինգը: Բացի այդ՝ ուսումնասիրությունն ընդգծում է ՔՀԿ-ների հաշվետվողականության ու տեսանելիության կարողությունների զարգացման անհրաժեշտությունը հատվածի հանդեպ վստահության բարելավման համար, ինչպես նաև կազմակերպության կառավարման գործընթացում, մասնավորապես արտաքին հարաբերությունների, ֆոնդի հայթայթման և քաղաքական երկխոսության ոլորտներում ռազմավարական մոտեցման կիրառման կարևորությունը: Ուսումնասիրությունն ամփոփվում է այն դիտարկմամբ, որ ՔՀԿ-ներն ավելի շատ ջանք պետք է գործադրեն իրենց կարողությունների հզորացման, հմտությունների զարգացման և մյուսների ուսուցանման ուղղությամբ՝ ազդեցության շրջանակներն ընդլայնելու համար:





# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն վերլուծությունը մշակվել է ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող «Ոչ կառավարական դերակատարների հզորացում բարեփոխումների խթանման և հանրային հաշվետվողականության բարելավման նպատակով» տեխնիկական աջակցության ծրագրի շրջանակներում: Այս ծրագիրն իրականացվում է կազմակերպությունների կոնսորցիումի կողմից, որտեղ ղեկավար դերը ստանձնել է «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամը: Հայաստանում կոնսորցիումի ներկայացուցիչն է «Եվրոպական ինտեգրացիա» ՀԿ-ն:

Ծրագիրն իրականացվում է ԵՄ Արևելյան գործընկերության ծրագրի համատեքստում, որը նպատակ ունի բարելավելու ԵՄ արևելյան հարևան հանդիսացող երկրների կայունությունը, կառավարումը, անվտանգությունն ու բարեկեցությունը: Քաղաքացիական հասարակության դերակատարները կարևոր դեր ունեն այս գործընթացում, քանի որ նրանք խթանում են ժողովրդավարական արժեքները և մարդու իրավունքները և հաշվետու են պահում կառավարությանը: Աջակցելով քաղաքացիական հասարակության կազմակերպություններին (ՔՀԿ) շահերի պաշտպանության ու բարեփոխումների մոնիթորինգի կարողությունների զարգացման գործում՝ ԵՄ-ն ձգտում է ընդլայնել համագործակցությունը տարածաշրջանի հետ՝ այդպիսով աջակցելով տարածաշրջանի ժողովրդավարական և տնտեսական զարգացմանը:

Ուսումնասիրության ընդհանուր նպատակն է բացահայտել և վերլուծել քաղաքացիական հասարակության դերակատարների կարիքներն ու կարողությունները քաղաքականության երկխոսության մասնակցության գործում, ինչպես նաև այն ուղիները, որոնցով այս դերակատարները կարող են ներդրում ունենալ առանձին ոլորտների քաղաքականության երկխոսության մեջ: Ուսումնասիրության կոնկրետ նպատակն է խորքային վերլուծություն ներկայացնել Հայաստանի ՔՀԿ-ների դաշտի, քաղաքականության երկխոսության գործընթացում նրանց մասնակցության կարիքների ու կարողությունների վերաբերյալ:

Ակնկալվում է, որ վերլուծությունը կօգնի ԵՄ պատվիրակությանը և այլ դոնորներին ավելի լավ ընկալելու քաղաքացիական հասարակության ներկա պատկերը և դրա հիման վրա սահմանելու ազգային ու տարածաշրջանային մակարդակով ՔՀԿ-ների հետ աշխատանքի առաջնայնությունները:

## Յիմնական հասկացություններ

**Քաղաքացիական հասարակությունը** սովորաբար բնութագրվում է որպես ընտանիքից, պետական կառավարման մարմիններից և առևտրային հատվածից զատ մի տարածք, որը ստեղծվում է անհատական և կոլեկտիվ գործողությունների, կազմակերպությունների ու ինստիտուտների կողմից՝ հանրային շահը պաշտպանելու համար<sup>1</sup>: Ըստ ԵՄ քաղաքականության փաստաթղթերի՝ **քաղաքացիական հասարակության կազմակերպությունը (ՔՀԿ)** ոչ պետական, շահույթ չհետապնդող և առևտրային շահ չներկայացնող իրավաբանական անձ է, որը հետապնդում է հանրային շահից բխող ընդհանուր նպատակ<sup>2</sup>: Այս զեկույցում, ՀՀ օրենսդրությանը համապատասխան, գրանցված ՔՀԿ-ների հասկացության ներքո ընդգրկված են հասարակական կազմակերպությունները, հիմնադրամները և իրավաբանական անձանց միությունները. միաժամանակ՝ չգրանցված քաղաքացիական խմբերը և շարժումները ևս ներառվել են որպես ՔՀԿ-ներ, քանի որ դրանք ձևավորվել են որպես հանրային շահը պաշտպանող կոլեկտիվ ջանք:

**Հանրային քաղաքականություն** հասկացությունը տվյալ ուսումնասիրության մեջ օգտագործվում է որպես պետության կողմից ընդունված և/կամ քննարկվող կանոնակարգումների, օրենքների և այլ իրավական

1. CIVICUS Civil Society Index Rapid Assessment: Armenia Country Report, Yerevan, 2014  
2. ANNEX III SPECIFIC PROVISIONS related to “Research for the benefit of specific groups”  
[http://ec.europa.eu/research/participants/data/ref/fp7/92973/annex3cso\\_en.pdf](http://ec.europa.eu/research/participants/data/ref/fp7/92973/annex3cso_en.pdf)

ակտերի, ինչպես նաև գերակայությունների ու ռազմավարությունների համակարգ: Մասնակցային հանրային քաղաքականությունը ենթադրում է, որ հասարակության բոլոր խմբերի շահերը հաշվի են առնված: Հայերենում «քաղաքականություն» բառը երկիմաստ է և օգտագործվում է թե՛ հանրային քաղաքականության, և թե՛ քաղաքական գործընթացների համար: ՔՀԿ-ները չեն կարող ներգրավվել քաղաքական գործընթացներում և կրել քաղաքական հայացքներ, սակայն նրանք կարող են և պետք է մասնակցեն հանրային քաղաքականությունների մշակմանը, քննարկմանը, մոնիթորինգին և գնահատմանը, քանի որ շատ հաճախ ՔՀԿ առաքելությունը սերտորեն կապված է որևէ ոլորտի հանրային քաղաքականության հետ:

**Հանրային քաղաքականության երկխոսությունը** (օգտագործվում է նաև «քաղաքական երկխոսություն» տարբերակը) քաղաքականության մշակման գործընթացի տարբեր փուլերում պետական մարմինների և ՔՀԿ-ների միջև հաղորդակցությունն է գիտելիքի և փորձի փոխանակման նպատակով, որպեսզի հնարավորինս լավագույն հանրային քաղաքականություն մշակվի<sup>3</sup>: Հանրային քաղաքականության վրա ներազդելու մեխանիզմներից մեկը ՔՀԿ-ների և, ընդհանուր առմամբ, քաղաքացիների կողմից շահերի պաշտպանության քարոզարշավների իրականացումն է:

**Շահերի պաշտպանությունը** քաղաքականությունների, պրակտիկայի ու վարքի վրա ներազդելու նպատակով ոչ բռնի գործողությունների կիրառումն է: Այն ներառում է լոբբինգը և այլ ոչ բռնի, օրինական գործողություններ<sup>4</sup>: **Շահերի պաշտպանության քարոզարշավը** որոշակի տևողությամբ նախաձեռնություն է, որը ներառում է տեղեկատվության և գիտելիքի ռազմավարական կառավարման գործընթաց՝ ուղղված կոնկրետ քաղաքականությունների և գործելակերպի փոփոխությանը կամ դրա վրա ազդեցությանը: Շահերի պաշտպանության քարոզարշավի առաջնային նպատակը կառավարության և միջկառավարական գերատեսչությունների քաղաքականությունների և գործելակերպի վրա ներազդեցությունն է՝ առավել խոցելի մարդկային կյանքերի վրա ազդող առանձին երևույթների վերաբերյալ: **Լոբբինգը** մասնավոր կամ հանրային շահերի պաշտպանության առանձին տեսակ է, որի նպատակն

է փոփոխել (ընդունել կամ կասեցնել) կոնկրետ օրենքը (կամ դրա մի մասը) կամ որոշումը:

1. Արապտացված է հետևյալ աղբյուրից՝ Code of Good Practice on Policy Dialogue, Developed by the Joint Accord Table of the Voluntary Sector Initiative, October 2002, [http://www.vsi-isbc.org/eng/policy/policy\\_code.cfm](http://www.vsi-isbc.org/eng/policy/policy_code.cfm), վերջին դիտումը՝ 25.11.2014թ.  
2. Manual on Advocacy and Policy Influencing for Social Change, Technical Assistance for Civil Society Organisations – TACSO Regional Office, 2011



# ՄԵԹՈԴՈԼՈԳԻԱ

Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են տեղեկատվության ստացման հետևյալ մեթոդները.

**1) Փաստաթղթերի վերլուծություն:** Ուսումնասիրվել են ՔՀԿ դաշտի վերաբերյալ մի շարք հետազոտություններ ու վերլուծություններ, ներառյալ CIVICUS Քաղաքացիական հասարակության ինդեքսը, ԱՄՆ ՄԶԳ ՔՀԿ կայունության ցուցանիշը, տարբեր ՔՀԿ-ների կողմից հրապարակված զեկույցներ, գիտական աշխատանքներ, հետազոտական տվյալներ:

**2) Էմպիրիկ հետազոտության տվյալների վերլուծություն:** Զեկույցում օգտագործվել են 2014 թ. առաջին եռամսյակում «ՍՈՑԻՈՄԵՏԻ անկախ սոցիոլոգիական կենտրոնի» կողմից իրականացված հետազոտության արդյունքները: Հետազոտությունը ներառում էր քանակական և որակական բաղադրիչներ.

ա) Իրականացվել է հարցում 150 ՔՀԿ-ների հետ, որոնք ընտրվել են տարածքային շերտավորված ընտրանքի միջոցով՝ մարզերի բնակչության քանակի հարաբերակցությամբ: Կազմակերպությունների տվյալները ձեռք են բերվել տարբեր տեղեկատվական աղբյուրներից, ինչպես նաև «ձնագնդի մեթոդով»: Հարցաթերթը մշակվել է հետազոտական հարցերի հիման վրա, ներառելով բաց և փակ հարցեր: Մինչ հարցման իրականացումը հարցաթերթը փորձարկվել է, իրականացվել են համապատասխան լրամշակումներ: Հարցազրուցավարները համապատասխան դասընթաց են անցել՝ յուրաքանչյուր հարցը և ընդհանուր առմամբ հարցման նպատակն ավելի լավ հասկանալու համար: Յուրաքանչյուր հարցազրույց տևել է 20-ից 70 րոպե՝ կախված տրամադրված տեղեկատվության ծավալից:

բ) Հետազոտության որակական մասը ներառում է 12 ֆոկուս-խմբային քննարկումներ («ֆոկուս խմբեր»), որոնցից երկուսն իրականացվել են Երևանում, մնացածը՝ Հայաստանի բոլոր մարզկենտրոններում: Քննարկումներում ընդգրկվել են թե՛ ՔՀԿ-ների և թե՛ պետական մարմինների ներկայացուցիչներ՝ քննարկվող հարցերի վերաբերյալ

բազմակողմանի կարծիքներ ստանալու համար: Ընդհանուր առմամբ, քննարկումներին մասնակցել են 23 քաղաքներում գործող ՔՀԿ-ների 111 և ՏԻՄ-երի 10 ներկայացուցիչներ: Ֆոկուս խմբերն իրականացվել են «ֆասիլիտատորի» կողմից՝ նախապես մշակված ուղեցույցի հիման վրա, առաջադրելով մի շարք հարցեր, որոնց շուրջ ծավալվում էր քննարկում և կարծիքների փոխանակում: Յուրաքանչյուր քննարկման տևողությունը 1,5 - 2,5 ժամ էր:

Հարցման տվյալները մշակվել են SPSS վիճակագրական ծրագրի միջոցով: Վերլուծության ընթացքում մշակվել են հաճախականության աղյուսակներ՝ առանձին փոփոխականների բաշխումը բացահայտելու համար, ինչպես նաև խաչաձև աղյուսակներ՝ տարբեր փոփոխականների համեմատության և դրանց միջև կապեր բացահայտելու նպատակով: Ֆոկուս-խմբային քննարկումների արդյունքները մշակվել են տեղեկատվության խմբավորման միջոցով՝ ըստ կատեգորիաների, ինչպես նաև առանձնացվել են առավել հետաքրքրական մեջբերումները՝ վերլուծության մեջ օգտագործելու նպատակով:

## Մեթոդոլոգիական սահմանափակումներ

*Փաստաթղթերի վերլուծության մասով:* Զեկույցում հիմնականում ներառվել են 2010 թ.-ից հետո հրատարակված հետազոտություններն ու զեկույցները, սակայն հնարավոր է, որ այդ ուսումնասիրությունների հրապարակումից հետո որոշակի ոչ այնքան նշանակալի փոփոխություններ են տեղի ունեցել: Այդ իսկ պատճառով հնարավորության դեպքում օգտագործվել են մի քանի աղբյուրներ, իսկ փաստաթղթերի վերլուծության արդյունքները համադրվել են էմպիրիկ տվյալների հետ: Փաստաթղթերի վերլուծության մեկ այլ սահմանափակում է բուն ուսումնասիրությունների սահմանափակումները, այսինքն՝ կիրառվում է այն վարկածը, որ այդ զեկույցների տվյալները հավաստի են և հուսալի:

*Էմպիրիկ տվյալների մասով:* Քանի որ ՔՀԿ-ների տվյալների լիարժեք և համակողմանի որևէ շտեմարան չկա, հետազոտության մեջ ընդգրկված ՔՀԿ-ների տվյալները վերցվել են տարբեր աղբյուրներից, և հաճախ նրանց կոնտակտային տվյալները անհասանելի են եղել: Այդ իսկ պատճառով հարցման մեջ ընդգրկված ՔՀԿ-ների ընտրանքը Հայաստանի ՔՀԿ-ների ներկայացուցչական ընտրանք չէ: Բացի այդ՝ Հայաստանի գյուղական ՔՀԿ-ների վերաբերյալ հստակ տվյալներ չկան՝ նրանց ավելի դժվար է գտնելը, քանի որ հաճախ նրանք գրանցված չեն ինտերնետային կայքերում, իսկ հետազոտությունն իրականացվել է գլխավորապես մարզկենտրոններում: Այս բացը որոշ չափով շտկելու համար ֆոկուս-խմբային քննարկումներին են հրավիրվել գյուղական համայնքային խմբերի ներկայացուցիչներ:



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՅԿ-ՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

## Երկրի սոցիալ - տնտեսական իրավիճակը և ՔՅԿ գործունեությունը

Հայաստանը փոքր, ցամաքով շրջափակված, մոնոէթնիկ, մոտ երեք միլիոն բնակչություն ունեցող երկիր է: Ինչպես բոլոր մյուս հետխորհրդային երկրները, 1991 թ. անկախության հռչակումից հետո Հայաստանը դժվարին քաղաքական և տնտեսական անցումային շրջան է անցել, որն առավել ծանր էր 1988 թ. երկրաշարժի հետևանքների, 1990-ականների սկզբի Ղարաբաղյան պատերազմի և դրա հետևանքով առաջացած շրջափակման, էլեկտրաէներգիայի ու ապրանքների սղության պայմաններում: Թեև ներկայումս տնտեսական իրավիճակն այն տարիների համեմատությամբ զգալիորեն բարելավվել է՝ շուկայական տնտեսության զարգացման ուղղությամբ բարեփոխումների, արտաքին մուտքերի ու փոխանցումների շնորհիվ, Հայաստանը դեռևս ցածր ՀՆԱ և աղքատության բարձր ցուցանիշ ունեցող երկիր է և Համաշխարհային բանկի կողմից բնութագրվում է որպես ցածր միջին եկամուտ ունեցող երկիր<sup>5</sup>: 2013 թ.-ին աղքատության ցուցանիշը Հայաստանում 32% էր, իսկ միջին նումինալ աշխատավարձը կազմում էր 146 524 ՀՀ դրամ (մոտ 358 ԱՄՆ դոլար)<sup>6</sup>:

Անբարենպաստ տնտեսական իրավիճակը վատթարանում է կոռուպցիայի պատճառով. «Թրանսփարենսի Ինթերնեշլ»-ի գնահատմամբ կոռուպցիայի ընկալման ցուցանիշով Հայաստանը 177 երկրների շարքում գտնվում է 94-րդ տեղում՝ 0-ից (ծայրահեղ կոռումպացված) 100 (կոռուպցիայից զերծ) միավորների սանդղակում ստանալով 36 միավոր<sup>7</sup>: Քաղաքական և տնտեսական իշխանությունը համախմբված է իշխող էլիտայի ձեռքում, ու չնայած մի շարք ընդդիմադիր կուսակցությունների առկայությանը՝ իշխանության վերարտադրումը՝ ընդդիմության ու բնակչության կողմից թույլ դիմադրությամբ, Հայաստանի ներկայիս քաղաքականության իրականությունն է: «Ֆրիդոմ Հաուզ»-ի վերջին գեկույցում Հայաստանը բնութագրվում է որպես կիսահամախմբված ավտորիտար ռեժիմ՝ իշխող կուսակցության գերիշխանությամբ ու ռեսուրսների վերահսկմամբ<sup>8</sup>:


Մյուս կողմից՝ մարդկային զարգացման այնպիսի ցուցանիշները, ինչպիսին, օրինակ, գրագիտությունն է, կյանքի սպասվող տևողությունը, Հայաստանում ավելի բարձր են, քան տարածաշրջանի այլ երկրներում: Հայաստանի մարդկային զարգացման ցուցանիշը 2013 թ.-ին կազմել է 0.730, որի շնորհիվ Հայաստանը դասվում է մարդկային զարգացման բարձր մակարդակ ունեցող երկրների խումբ և 187 երկրների ու տարածքների շարքում գտնվում է 87-րդ տեղում<sup>9</sup>: Այնուամենայնիվ, Հայաստանը ծերացող երկրների շարքում է, քանի որ նրա բնակչության 10,6%-ը 65 տարեկանից մեծ են<sup>10</sup>: Այս միտումը առավել մտահոգիչ է, եթե հաշվի առնենք երկրից հեռացող երիտասարդների աճող թիվը:

Արտագաղթը Հայաստանի առավել ցավալի խնդիրներից է: Ըստ պետական վիճակագրական ծառայության՝ բնակչության միգրացիայի մնացորդը վերջին տարիներին բացասական է եղել և կազմել է 8,1 հոգի 1000 հոգու հարաբերակցությամբ, որը վերջին 5 տարիների համար ամենամեծ ցուցանիշն է<sup>11</sup>, իսկ 2010-2013 թթ.-ին 3 ամիս և ավելի ժամկետով Հայաստանից մեկնած և 2013 թ. դրությամբ դեռևս չվերադարձած՝ 15 և բարձր տարիքի միգրանտների միջին տարեկան թիվը կազմել է շուրջ 25700 մարդ<sup>12</sup>:

Գործազրկությունը և սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմանները համարվում են միգրացիայի առաջնային պատճառ, սակայն վերջին տարիներին անտարբերության ու անվստահության մթնոլորտը, սեփական իրավունքները պաշտպանելու անկարողությունը ևս հաճախ

5. The World Bank, Armenia Overview, <http://www.worldbank.org/en/country/armenia/overview>  
6. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2014թ., ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն  
7. Transparency International Corruption Perceptions Index 2013

8. Freedom House, Nations in Transit 2014: Armenia  
9. Armenia HDI values and rank changes, Human Development Report 2014  
10. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2014թ., ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն



նշվում են որպես էմիգրացիայի կարևոր դրդապատճառներ: Ըստ մարդկային զարգացման ազգային զեկույցի՝ մարդիկ ավելի ու ավելի շատ են ձգտում արտագաղթել՝ ավելի անտարբեր դառնալով երկրի ապագայի հանդեպ և չջանկանալով պայքարել երկրի զարգացման համար կամ անարդարության ու մարդու իրավունքների ռոտահարման դեմ<sup>13</sup>:

Այս միջավայրը ՔՀԿ-ների համար մի կողմից մարտահրավերներ է ստեղծում, մյուս կողմից՝ գործունեության լայն հնարավորություններ: Ինչպես նշում են ֆոկլուս-խմբային քննարկման մասնակիցները, սոցիալ-տնտեսական դժվար պայմաններում, անվստահության ու հավատի բացակայության այս մթնոլորտում ՔՀԿ-ների գործունեությունը կարող է բարդանալ, թեև մյուս կողմից, ՔՀԿ-ներն այս պարագայում ավելի շատ աշխատանք ունեն կատարելու և ավելի պահանջված են. «Այսօրվա պայմանները հենց այն պայմաններն են, որ այն մարդը, որ ներսից քաղ. հասարակության ներկայացուցիչ է, վեր կենա, այդ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչի դերը ստանձնի ու սկսի ակտիվորեն պայքարել» (ՔՀԿ ներկայացուցիչ, Վանաձոր):

Հարցման մասնակից ՔՀԿ-ները նշում են կաշառակերությունը՝ որպես Հայաստանի քաղաքացիական հասարակության վրա ազդող առավել նշանակալի գործոն (տես Աղյուսակ 1): Համատարած աղքատությունն ու տնտեսական ճգնաժամը, ինչպես նաև սոցիալական/ տնտեսական անհավասարությունն ու սոցիալական ճգնաժամը հաջորդ՝ առավել հաճախ նշված գործոններն են:

Աղյուսակ 1. **Ձեր տեսանկյունից՝ ի՞նչ չափով են հետևյալ գործոնները ազդում Հայաստանի քաղաքացիական հասարակության վրա**

	very much	much	some	minor	none
1 Կաշառակերությունը	41,3	27,3	26,7	4,7	5,3
2 Համատարած աղքատությունը	40,7	33,3	16,7	0,7	4,7

11. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2014թ., 33 ազգային վիճակագրական ծառայություն  
 12. Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2014թ., 33 ազգային վիճակագրական ծառայություն  
 13. National Human Development Report 2009: Migration and Human Development, UNDP Armenia

3	Տնտեսական ճգնաժամը	36,0	36,7	18,0	0,7	4,0
4	Սոցիալական/տնտեսական անհավասարությունը	30,7	40,7	18,0	2,7	3,3
5	Սոցիալական ճգնաժամը	29,3	39,3	20,7	0,7	3,3
6	Հասարակության ընկալումները	29,3	32,7	23,3	4,7	4,7
7	Քաղաքական կայունությունը	22,0	34,0	30,7	3,3	5,3
8	Ավելորդ բյուրոկրատիան	21,3	27,3	30,7	7,3	6,7
9	Տեղեկատվության սակավ մատչելիությունը	16,7	28,7	32,7	7,3	10,0
10	Իշխանության ճնշումները	14,7	26,0	29,3	10,7	11,3
11	Ղարաբաղյան հակամարտությունը	14,7	12,7	32,7	10,0	20,7

Աղբյուր՝ «ՍՈՑԻՈՍԵՏԻ» կենտրոնի հարցման տվյալներ, 2014 թ.

Հասարակության ընկալումները նշվում են որպես Հայաստանի քաղաքացիական հասարակության վրա ազդող մեկ այլ նշանակալի գործոն, որին կվերադառնանք զեկույցի հաջորդ մասերում: Բացի այդ՝ հարցված ՔՀԿ-ների մեծամասնության կողմից կարևորվել են նաև քաղաքական կայունության և ավելորդ բյուրոկրատիայի խնդիրները: Տեղեկատվության սահմանափակ մատչելիությունը և իշխանության ճնշումները ավելի հազվադեպ են նշվել որպես շատ մեծ չափով ազդող գործոններ, թեև դրանք ևս ազդեցիկ են համարվել: Այս խնդիրներին կանդիդատանք զեկույցի հաջորդ գլխում, որտեղ քննարկվում են քաղաքացիական իրավունքներն ու ազատությունները:

Վերջապես, ղարաբաղյան հակամարտությունը համարվել է թվարկված բոլոր գործոններից համեմատաբար ավելի պակաս ազդեցիկը: Հարցված ՔՀԿ-ների մեկ երրորդը այս գործոնը որոշ չափով ազդեցիկ է համարել: Հարկ է նշել, որ թեև 1994 թ.-ին զինադադար է հայտարարվել, Լեռնային Ղարաբաղի տարածքի վերաբերյալ Ադրբեյջանի հետ հակամարտությունը ներկայումս «ստեղծված» փուլում է: Չնայած հակամարտության լուծման մի շարք նախաձեռնություններին՝ երկրները համաձայնության չեն եկել, և սահմանային տարածքներում պարբերաբար զինադադարի խախտման դեպքեր են արձանագրվում: Ղարաբաղյան հակամարտության խնդիրը Հայաստանի միջազգային հարաբերությունների քաղաքականության վրա ազդող կարևոր գործոն է:

Հայաստանի սահմանների անվտանգության ապահովումը համարվում է 2014 թ. հոկտեմբերին Եվրասիական տնտեսական միությանը միա-



նալու համաձայնագրի ստորագրման պատճառներից մեկը: Այս իրադարձությունը երկրի քաղաքական ու տնտեսական կյանքի կարևորագույն զարգացումներից էր: Չնայած մինչ 2013 թ.-ը տեղի ունեցող ԵՄ հետ ստացացման համաձայնագրի ստորագրման նախապատրաստություններին՝ Հայաստանը փոխեց իր քաղաքական կուրսը դեպի Ռուսաստանի կողմից ղեկավարվող միությունը, որի մասին 2013 թ. սեպտեմբերին հայտարարեց ՀՀ նախագահը: Այս հայտարարությունը բազմաթիվ մտահոգությունների, ցույցերի, քննարկումներ ու բանավեճերի առիթ տվեց. այսպես թե այնպես, մինչ ձեռնարկվում էին փաստաթղթի ստորագրման ուղղությամբ հետագա քայլերը, հանրությունը և ՔՀԿ-ները որևէ հնարավորություն չունեցան այս որոշումը բողոքարկելու կամ փոփոխելու համար: Համաձայնագրի ստորագրումից մեկ ամիս անց ԱլԳ ՔՀՖ Հայաստանի ազգային պատճառները իր մտահոգությունն արտահայտեց այն առիթով, որ Հայաստանը կարող է կորցնել իր ինքնավարությունը. «Հայաստանը մտնում է մի տնտեսական միության մեջ, որի անդամները ավտորիտար, ոչ ժողովրդավարական երկրներ են, որտեղ մարդու իրավունքների և ազատությունների ոտնահարումները աղաղակող չափերի են հասնում<sup>14</sup>»: Ուսումնասիրության շրջանակներում իրականացված ֆոկլու-խմբի մասնակիցները ևս իրենց մտահոգությունն են հայտնել սպառնալից փոփոխությունների վերաբերյալ. «Մեպրեմբերի 3-ից հետո վառ արտահայտված ճնշում կա քաղաքացիական հասարակության վրա: Ռուսաստանի օրենսդրության և գործելակերպի ընդօրինակումը, որը լավագույն օրինակը չէ քաղաքացիական հասարակության զարգացման համար, իսկ հարևանությամբ՝ նաև Ղազախստան, Բելառուս, փակ հասարակություններ են, որոնք ինչ քայլ էլ որ հիմն ձեռնարկում են՝ սահմանափակել, փակել, [...] և եթե մենք գնում ենք այնպեղ, մենք գնում ենք [դեպի] փակ հասարակություն» (ՔՀԿ ներկայացուցիչ, Գյումրի):

Այս բոլոր քաղաքական, տնտեսական և սոցիալական զարգացումների համատեքստում Հայաստանի քաղաքացիական հասարակությունը միջազգային զեկույցներում գնահատվում է որպես համեմատաբար լավ զարգացած: Ըստ «Ֆրիդոմ Հաուզ»-ի զեկույցի՝ Հայաստանի քաղաքացիական հասարակությունը «մնում է ակտիվ, բազմազան և անկախ», և ժողովրդավարության մյուս ցուցանիշների շարքում ամենից բարձր է

14. ԵՄ ԱլԳ ՔՀՖ Հայաստանի ազգային պատճառների հայտարարությունը Հայաստանի՝ ԵՄ-ին անդամակցելու վերաբերյալ, 2014թ. նոյեմբերի 10, <https://eaparmenianews.wordpress.com/2014/11/11/%D5%A9%D5%B8%D5%B2%D5%A1%D6%80%D5%AF%D5%B8%D6%82%D5%B4-194/>

գնահատվել (3,75 միավոր՝ 1-ից 7 միավորանոց սանդղակով, որտեղ 1-ը ամենաբարձր միավորն է)<sup>15</sup>: ԱՄՆ ՄԶԳ ՔՀԿ կայունության ցուցանիշը Հայաստանում 3,9 է (1-7 միավորի սանդղակում, որտեղ 1-ը լավագույնն է), որն ԱՊՀ երկրների տարածաշրջանում երկրորդ ամենաբարձր միավորն է՝ Ուկրաինայից հետո<sup>16</sup>:

## ՔՀԿ տիպերը և հիմնական կանոնակարգումները

Հայաստանում ՔՀԿ-ների զարգացումը սկսվել է հիմնականում հետխորհրդային շրջանում: 1988 թ.-ից հետո ՔՀԿ-ները ստեղծվում էին ինքնաբերական՝ երկրաշարժի հետևանքով, անկախացման շրջանում ու պատերազմական իրավիճակում ստեղծված ծանր սոցիալական, տնտեսական ու հումանիտար կարիքների լուծման նպատակով: Մյուս կողմից՝ հետխորհրդային շրջանում միջազգային հումանիտար ու զարգացման կազմակերպությունների աջակցությունը և դրամաշնորհային ֆոնդերը նպաստեցին ՔՀԿ-ների արագ աճին, որոնք իրենց առաքելությունները սահմանում էին ավելի շատ արտաքին միջավայրից եկող ազդակների, քան տեղական կարիքների վրա հիմնվելով:

Հայաստանում ՔՀԿ-ների շարքին կարելի է դասել հասարակական կազմակերպությունները, հիմնադրամները և իրավաբանական անձանց միությունները, որոնք կարգավորվում են օրենքով, ինչպես նաև ոչ ֆորմալ (իրավաբանական գրանցում չունեցող) խմբերն ու շարժումները, որոնք գործում են օրենքի շրջանակներում՝ միավորումների և հավաքների ազատությունների և այլ դրույթների հիման վրա:

**Հասարակական կազմակերպությունը** (ՀԿ) անդամության վրա հիմնված կազմակերպություն է, որտեղ անդամների ժողովը որոշում ընդունող գերագույն մարմին է: Ըստ օրենքի՝ ՀԿ կարող է հիմնադրվել միայն ֆիզիկական անձանց կողմից՝ իրենց ոչ կրոնական-հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջմունքները բավարարելու, իրենց և այլոց իրավունքները և շահերը պաշտպանելու, հասարակությանը, նրա առանձին խմբերին նյութական և ոչ նյութական աջակցություն ապահովելու, հանրագույն այլ գործունեություն իրականացնելու նպատակներով<sup>17</sup>:

15. Freedom House, Nations in Transit 2014: Armenia  
 16. 2013 CSO Sustainability Index for Central and Eastern Europe and Eurasia, USAID, June 2014  
 17. Գր օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 2001թ., հոդ. 3.1

«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով ամրագրված են հասարակական կազմակերպությունների գործունեության սկզբունքները, այդ թվում՝ օրինականությունը, հրապարակայնությունը, անդամության կամավորությունը, անդամների իրավահավասարությունը, ինքնակառավարումը, ղեկավարման կոլեգիալությունը:

**Հիմնադրամը** քաղաքացիների և (կամ) իրավաբանական անձանց կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը հետապնդում է սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, բնապահպանական կամ այլ հանրօգուտ նպատակներ<sup>18</sup>: Հիմնադրամները ղեկավարվում են Հոգաբարձուների խորհրդի կողմից:

**Իրավաբանական անձանց միությունները** կարող են ստեղծվել առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կողմից՝ իրենց գործունեությունը համակարգելու, ինչպես նաև ընդհանուր շահերը ներկայացնելու և պաշտպանելու նպատակներով<sup>19</sup>: Այս միություններում որոշում կայացնող մարմինը, որպես կանոն, իրենց անդամ կազմակերպությունների ղեկավարների խորհուրդն է:

**Ոչ ֆորմալ քաղաքացիական խմբերն ու շարժումները** հիմնականում կազմակերպվում են հանրային նշանակության որևէ խնդրի շուրջ կամ որպես համայնքային նախաձեռնող խումբ, որն աշխատում է տվյալ համայնքի զարգացման ուղղությամբ: Այս խմբերը իրավաբանական գրանցում չունեն, իսկ անդամությունը հիմնականում չի փաստաթղթավորվում:

Ըստ Արդարադատության նախարարության՝ 2014 թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ Հայաստանում գրանցված էին 4066 հասարակական կազմակերպություն, 902 հիմնադրամ և 296 իրավաբանական անձանց միություն<sup>20</sup>: Փորձագետների գնահատմամբ այս կազմակերպությունների միայն 15-20%-ն է գործում<sup>21</sup>: Այս իրավիճակի պատճառներից մեկն այն է, որ ի տարբերություն առևտրային կառույցների՝ ՔՀԿ-ները կարող են տարիներ շարունակ ունենալ զրոյական եկամուտ և աշխատակազմ,

սակայն չլուծարվել. այդպիսով՝ շատ կազմակերպություններ առկա են միայն թղթի վրա: Մյուս կողմից՝ շատ ՔՀԿ-ներ ստեղծվում և գործառույթներ են իրականացնում կոնկրետ ծրագրերի շրջանակներում և ծրագրերի ավարտից հետո փաստացիորեն դադարեցնում գործունեությունը:

Գրանցված ՔՀԿ-ների մոտ կեսը տեղակայված են Երևանում, իսկ մյուս կեսը գրեթե հավասարապես բաշխված են մարզերի միջև, ընդ որում, համեմատաբար ավելի շատ կազմակերպություններ են գրանցված Շիրակի, Լոռու և Արարատի մարզում, իսկ Արագածոտնում և Վայոց Ձորում՝ համեմատաբար ավելի քիչ : Թեև որևէ վիճակագրական տվյալ չկա քաղաքային ու գյուղական բնակավայրերում ՔՀԿ-ների բաշխվածության վերաբերյալ, առկա զեկույցները և փորձագիտական գնահատականները վկայում են, որ գյուղական ՔՀԿ-ները Հայաստանում շատ փոքր քանակ են կազմում, իսկ մարզային ՔՀԿ-ների մեծ մասը տեղակայված են մարզկենտրոններում:

Ըստ ՀԿ մասին օրենքի՝ արգելվում է պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների ու նրանց պաշտոնատար անձանց միջամտությունը կազմակերպության գործունեությանը: Միաժամանակ պետական մարմինները կարող են ստեղծել պետական ոչ առևտրային կազմակերպություններ (ՊՈԱԿ), որոնք կարգավորվում են առանձին օրենքով: Այս կազմակերպությունները կարող են հիմնադրվել միայն կառավարության կողմից, որն ունի ՊՈԱԿ-ի գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք: Լիազորված պետական մարմինն իրականացնում է ՊՈԱԿ-ի ընդհանուր կառավարումը, իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ իրականացման համար : Որպես կանոն, լիազորված մարմնի դերում հանդես են գալիս այն նախարարությունները կամ պետական գործակալությունները, որոնց ՊՈԱԿ-ները կցված են, և ՊՈԱԿ-ների գործունեությունը ծառայում է այդ մարմինների քաղաքականությունների մշակման, իրականացման և մոնիթորինգի նպատակներին: ՊՈԱԿ-ները ծառայություններ են տրամադրում առողջապահության, կրթության, մշակույթի, հետազոտական բնագավառներում այնպես, ինչպես հասարակական կազմակերպությունները: Բացի այդ՝ որպես ՊՈԱԿ են գրանցված նաև պետական բոլոր կրթական և մշակութային հաստատությունները (դպրոցներ, բուհեր, թանգարաններ, թատրոններ և այլն): ՊՈԱԿ-ները ֆինանսավորվում են առաջին հերթին պետության կողմից, սակայն կարող են օգտվել նաև ֆինանսական այլ աղբյուրներից, ներառյալ դրամաշնորհները, նվիրատվությունները և վճարովի ծառայություններից

18. ՀՀ օրենքը «Հիմնադրամների մասին», 2002թ., հոդ. 3.1  
19. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդ. 125  
20. ՀՀ իրավական անձանց ղեկավարի գործակալության գրանցված կազմակերպությունների վիճակագրություն 01.10.2014թ. դրությամբ, [http://moj.am/storage/files/legal\\_acts/legal\\_acts\\_1224865184711\\_stat2014-10\\_1\\_.pdf](http://moj.am/storage/files/legal_acts/legal_acts_1224865184711_stat2014-10_1_.pdf)  
21. ՔՀԿ կայունության ցուցանիշ 2013 - Հայաստան, ՔՁՀԿ/ԱՄՍ ՄԶԳ, հունիս, 2014թ.





ստացած եկամուտները: Տվյալ զեկույցում ՊՈԱԿ-ները չեն դիտարկվում որպես ՔՀԿ, քանի որ ՔՀԿ-ն սահմանվում է որպես ոչ պետական կազմակերպություն:

Այնուամենայնիվ, թեև հիմնադրամները դիտարկվում են որպես քաղաքացիական հասարակության կազմակերպություն, հարկ է նշել, որ ի տարբերություն հասարակական կազմակերպությունների, դրանք կարող են հիմնադրվել Հայաստանի Հանրապետության ու նրա համայնքների կողմից : Մի շարք խոշոր հիմնադրամներ հիմնադրվել են պետության կողմից ՀՀ կառավարության որոշմամբ, և ֆինանսավորվում են պետական բյուջեից, իսկ նրանց հոգաբարձուների խորհրդում հաճախ ընդգրկված են պետական պաշտոնյաներ: Այս առումով պետության կողմից ստեղծված հիմնադրամները նման են ՊՈԱԿ-ների: Սակայն, քանի որ ներկա օրենսդրությամբ որևէ տարբերակում չի դրված պետության կողմից ստեղծված և մնացած հիմնադրամների միջև, հիմնադրամները, որպես այդպիսին, այս զեկույցում ընդգրկվել են որպես ՔՀԿ-ներ:


Բացի պետության կողմից հիմնադրված հիմնադրամներից ու ՊՈԱԿ-ներից՝ Հայաստանում կան բազմաթիվ հիմնադրամներ ու ՀԿ-ներ, որոնք, թեև գրանցված չեն որպես պետական կամ պետության որոշմամբ ստեղծված, սակայն հիմնադրվել ու ղեկավարվում են պետական պաշտոնյաների կամ նրանց մտերիմների կողմից: Այս ՔՀԿ-ները կարելի է դասել «պետական ՀԿ-ների» կամ «գոնգո»-ների շարքին (GoNGO). նրանք ստանում են պետական ֆինանսավորման զգալի մասնաբաժին: Այս կազմակերպությունները կարող են օգտագործվել քաղաքականության քննարկումներում, իսկ ընտրությունների ժամանակ՝ դիտորդի դերում՝ դրական գնահատականներ ստանալու նպատակով. ՔՀԿ-ների կողմից սա նշվում է որպես բացասական երևույթ, որը վարկաբեկում է ՔՀԿ վարկանիշն ու դերը:

### ՔՀԿ գործունեության ոլորտները և ուղղությունները

Գործնականում անհնար է գտնել Հայաստանի ՔՀԿ-ների տվյալների համալիր բազա, որտեղ ամփոփված լինեն գործող բոլոր ՔՀԿ-ների գործունեության ոլորտները, նպատակները և այլ տվյալներ: Հարցմանը մասնակցած 150 ՔՀԿ-ների տվյալները, սակայն, կարող են ընդհանուր պատկերացում տալ Հայաստանի ՔՀԿ-ների գործունեության ոլորտների և բնույթի մասին:

Ընտրանքում ներառված ՔՀԿ-ների բաշխումը, ըստ գործունեության ոլորտների, հետևյալն է:


Գծապատկեր 1. **Չեռագրողված ՔՀԿ-ների գործունեության ոլորտները (%)**



Աղբյուր՝ «ՍՈՑԻՈՍԵՏԻ» կենտրոնի հարցման տվյալներ, 2014 թ.

Ըստ գործունեության տարածքի ՔՀԿ-ների բաշխումը ցույց է տալիս, որ ՔՀԿ-ների ավելի քան մեկ երրորդն իր գործունեությունը ծավալում է ամբողջ հանրապետությունում, իսկ մարզային և համայնքային կազմակերպությունները կազմում են ընտրանքի մոտ կեսը: Կազմակերպություններից 24-ը գործունեություն են ծավալում միջազգային մակարդակում:

Գծապատկեր 2.  
Չետագոտված ՔՀԿ-ների գործունեության տարածքը (%)



Աղբյուր՝ «ՍՈՑԻՈՍԵՏՐ» կենտրոնի հարցման տվյալներ, 2014 թ.

Իրենց աշխատանքն իրականացնելիս ՔՀԿ-ները տարբեր միջոցառում ներ են կազմակերպում՝ հանդիպումներ, դասընթացներ, մամուլի ասուլիսներ և այլն: Գործունեության այս տեսակներն առավել հաճախ են նշվում ՔՀԿ-ների կողմից: ՔՀԿ-ների 12,7%-ը ծառայություններ է մատուցում տարբեր սոցիալական խմբերի: Քաղաքականության մշակման գործընթացում մասնակցության և մոնիթորինգի գործունեության տեսակների վերաբերյալ առանձնացնենք հետևյալ տվյալները. մոնիթորինգ են իրականացնում ՔՀԿ-ների 8%-ը, ստորագրահավաք, դիմումների հղում՝ 4%-ը, լոբբինգ՝ 3,3%-ը: Անձնական հանդիպումները և հետազոտությունները նույնպես կարելի է դիտարկել որպես քաղաքականության մշակման մասնակցության հնարավոր գործիքներ. նմանատիպ գործունեություն են իրականացնում ՔՀԿ-ների 6 տոկոսը:

Աղյուսակ 2. ՔՀԿ գործունեության տեսակները

Տարբերակ	Պորcent
1 Ժողով, կոնֆերանս, ֆորում, «կլոր սեղան», քննարկում	58.1
2 Թրեյնինգ, դասընթաց, սեմինար	40.7
3 Օրենքների, նախագծերի, ծրագրերի մշակման կազմակերպում	22.0
4 Իրագեկում, լուսաբանում ՁԼՄ-ներով, քարոզչություն, ասուլիս	16.7
5 Օգնության, ծառայությունների մատուցում, դրամահավաք	12.7
6 Մոնիթորինգ, դիտորդական առաքելություն	8.0
7 Ուխտագնացություն, հանրային արշավների անցկացում	8.0
8 Չետագոտություններ	6.0
9 Անձնական հանդիպումներ	6.0
10 Խորհրդատվություն	6.0
11 Կենտրոն, ակումբ, խմբակներ	5.3
12 Դիմումների, նամակների, ստորագրությունների հավաք	4.0
13 Լոբբինգ	3.3
14 Այլ	8.0

Աղբյուր՝ «ՍՈՑԻՈՍԵՏՐ» կենտրոնի հարցման տվյալներ, 2014 թ.

ՔՀԿ-ների թիրախ/շահառու խմբերի ցանկում առավել հաճախ նշվել են երիտասարդները, երեխաները և կանայք: ՔՀԿ-ների մոտ կեսը աշխատում է ողջ բնակչության հետ, իսկ 22%-ը՝ այլ ՔՀԿ-ների հետ: Կազմակերպությունների 30%-ը որպես թիրախ խումբ է նշել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին:

Աղյուսակ 3. ՔՀԿ-ների թիրախ/ շահառու խմբերը

Խումբ	Պորcent
1 Երիտասարդներ	46.7
2 Չասարակություն/բնակչություն	44.7
3 Երեխաներ	36.0
4 Կանայք	26.0



5	Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (ՔՀԿ)	22.0
6	Տեղական ինքնակառավարման մարմիններ (ՏԻՄ)	17.3
7	Պետական կառավարման կառույցներ	12.7
8	Տնտեսվարող սուբյեկտներ (գործարարներ)	12.7
9	Տարեցներ	12.7
10	Հաշմանդամները և իրենց ընտանիքները	12.7
11	Սոցիալապես անապահով և խոցելի խմբեր	5.3
12	Գյուղացիական տնտեսություններ	2.7
13	Փախստականներ, զինգերիներ, դատապարտյալներ	2.0
14	Սպառողներ	1.4
15	Այլ	4.7

Աղբյուր՝ «ՍՈՑԻՈՍԵՏԻ» կենտրոնի հարցման տվյալներ, 2014 թ.

## ՔՀԿ կազմակերպական կարողությունները

Հայաստանի ՔՀԿ-ները շարունակում են զարգացնել իրենց կազմակերպական կարողությունները, սակայն բազմաթիվ զեկույցների համաձայն, ՔՀԿ-ների մեծամասնությունը դեռևս իր կենսասցիկլի զարգացող փուլում է գտնվում: Շատ կազմակերպություններում դեկավար խորհուրդը փաստացիորեն չի կատարում իր գործառույթները, ռազմավարական պլանավորումը պատշաճ կերպով չի իրականացվում, ֆինանսական կայունության և կարողությունների պակաս կա. այս բոլոր խնդիրները ՔՀԿ կազմակերպական զարգացման հիմնական բացերն են: ՔՀԿ-ների աշխատակազմը ներգրավվում է հիմնականում ծրագրային հիմքի վրա, քանի որ ՔՀԿ-ների մեծամասնությունը չունի մշտական աշխատողների վարձատրման հնարավորություն: Ըստ հետազոտության տվյալների՝ հարցված ՔՀԿ-ների ավելի քան մեկ երրորդը հարցման պահին առհասարակ աշխատակից չունեի, իսկ մեկ երրորդն ուներ մինչև հինգ աշխատակից:

Աղյուսակ 4. Քանի՞ աշխատող ունի ձեր կազմակերպությունը ներկա պահին

Պատասխան	%
0	36.7
1-5	34.0

6-10	14.0
11-15	10.7
16 և ավելի	4.7

Աղբյուր՝ «ՍՈՑԻՈՍԵՏԻ» կենտրոնի հարցման տվյալներ, 2014 թ.

Բազմաթիվ ՔՀԿ-ներ հույս են դնում կամավորական աշխատանքի վրա, իսկ ոչ ֆորմալ խմբերը գործում են բացառապես կամավոր անդամների միջոցով: Հետազոտությունը ցույց է տալիս, որ ի տարբերություն վարձատրվող աշխատակիցների պակասի՝ ՔՀԿ-ների միայն 14,7%-ն է, որ չունի որևէ կամավոր, իսկ մեծ մասն ունի ավելի քան 10 կամավոր:

Աղյուսակ 5. Քանի՞ կամավոր ունի ձեր կազմակերպությունը ներկա պահին

Պատասխան	%
0	14.7
1-10	34.0
11-20	20.7
21-40	13.3
41 և ավելի	17.4

Աղբյուր՝ «ՍՈՑԻՈՍԵՏԻ» կենտրոնի հարցման տվյալներ, 2014 թ.

ՔՀԿ-ները նշում են, որ սակավաթիվ ռեսուրսներով ստիպված են աշխատանքի մեծ ծավալ իրականացնել, և հաճախ մեկ աշխատակիցը բազմատեսակ գործառույթներ է կատարում կազմակերպությունում: Մարդկային ռեսուրսների պակասը ստիպում է ՔՀԿ-ներին ավելի շատ կենտրոնանալ ծառայությունների և ծրագրերի իրականացման ուղղությամբ և ավելի քիչ՝ սեփական կարողությունների զարգացման ուղղությամբ, օրինակ՝ կառավարման համակարգերի զարգացման, ռազմավարության մշակման, կարիքների պատշաճ գնահատման, հանրային կապերի զարգացման: Միաժամանակ որպես Հայաստանի ՔՀԿ-ների ուժեղ կողմ է նշվում նրանց նվիրվածությունը գաղափարներին և ակտիվ ներգրավվածությունը, փորձագիտական հմտությունը և վերլուծական կարողությունը:

Հայաստանի ՔՀԿ-ներն ուժեղ են առաջին հերթին իրենց ղեկավարների և անդամների հմտություններով, քան ինստիտուցիոնալ զարգացման մակարդակով, որը խոցելի է դարձնում նրանց՝ որպես կազմակերպության: Մյուս կողմից՝ առավելապես միջազգային աղբյուր-

ներից ֆինանսավորումը նպաստում է առաջին հերթին դոնոր առաջնությունների և ոչ համայնքի կարիքների վրա հիմնվելու և առաջին հերթին դոնորներին և ոչ թե համայնքին հաշվետու լինելու միտումին: Այս իրավիճակում երկարաժամկետ պլանավորումը ու սեփական գերակայությունները առաջ քաշելու հնարավորությունը դժվարանում է, որը բերում է սեփական զարգացման կարիքների անտեսմանը և ՔՀԿ-ների հանդեպ վստահության ցածր մակարդակին:

### Ոչ ֆորմալ խմբերի առանձնահատկությունները


Քաղաքացիական շարժումները, որպես այդպիսին, Հայաստանում սկիզբ առան 80-ականների վերջին՝ նախ և առաջ ծավալվելով էկոլոգիական խնդիրների շուրջ: Ոչ ֆորմալ քաղաքացիական խմբերը զգալիորեն շատացան 2008 թ.-ից հետո, երբ առաջացան մի շարք բնապահպանական և հանրային տարածքների պահպանման շարժումներ: Ոչ ֆորմալ շարժումների ակտիվացմանն ու հանրայնացմանը նպաստեց հայ երիտասարդության շրջանում սոցիալական ցանցերի լայն տարածումը: Բազմաթիվ նախաձեռնություններ սաղմնավորվեցին հենց այս ցանցերում՝ մասնավորապես ֆեյսբուքում: Հանրության շրջանում այս նախաձեռնություններում ընդգրկված անձանց անվանում են «քաղաքացիական ակտիվիստներ»:

Կարելի է առանձնացնել ոչ ֆորմալ շարժումների գործունեության հետևյալ ոլորտները .

- հանրային տարածքների ու մշակութային հուշարձանների պահպանություն,
- իրավունքների պաշտպանություն,
- բնապահպանական խնդիրներ,
- սոցիալական խնդիրներ:

«Քաղաքացիական հասարակությունը, զարգացումը և բնապահպանական ակտիվիզմը Հայաստանում» վերլուծության մեջ Արմինե Իշխանյանը առանձնացրել է քաղաքացիական շարժումների հետևյալ տեսակները:

Գծապատկեր 3. Ոչ ֆորմալ խմբերի գործունեության ուղղությունները




Աղբյուր՝ Ishkhanian A., Civil Society, Development and Environmental Activism in Armenia. Yerevan, 2013

Ըստ այս վերլուծության, քաղաքացիական շարժումների 80%-ը ծավալվել են Երևանում, 17%-ը՝ այլ քաղաքներում, իսկ 3%-ը հստակ տեղակայում չունեն (հիմնականում առցանց են) :

Ակնհայտ է, որ Երևանում քաղաքացիական ակտիվության դրսևորումները առավել աչքի են ընկնում: Միաժամանակ հարկ է նշել նաև համայնքային և մարզային մակարդակով գործող ակտիվ խմբերի մասին, որոնք այդքան տեսանելի չեն լրատվամիջոցներում և սոցիալական ցանցերում: Այսպես, ԱՄՆ ՄԶԳ-ը տարիներ շարունակ ֆինանսավորել է երիտասարդական համայնքային ակումբների զարգացումը, որի արդյունքում ստեղծված համայնքային և երիտասարդական խմբերը բազմաթիվ համայնքներում ակտիվ գործունեություն են ծավալում տեղական քաղաքականության մշակման, երիտասարդների ոչ ֆորմալ կրթության ու ժամանցի կազմակերպման ոլորտներում: Նմանատիպ խմբեր են կազմավորվել նաև ԵՀՀ «Երիտասարդական բանկ» ծրագրի, ԶՀՀ «Քաղաքացիական երկխոսություն և գործնական քայլեր» ծրագրի շրջանակներում: Ծրագրային գործունեության արդյունքում ձևավորված խմբերն ավելի խոցելի կարող են լինել, քան ինքնաբերական քաղաքացիական



նախաձեռնությունները արտաքին աջակցության ավարտի հետ մարելու վտանգի պատճառով: Այնուամենայնիվ, նրանք նշանակալի դեր են խաղում համայնքում փոփոխությունների առաջացման և քաղաքացիական գիտակցության բարձր մակարդակ ունեցող երիտասարդ սերնդի ձևավորման առումով: Մյուս կողմից՝ ցանկացած քաղաքացիական ակտիվիզմ նպատակային բնույթ է կրում և կոնկրետ խնդրի լուծմանն է ուղղված, հետևապես համեմատաբար ավելի կարճաժամկետ է: Ոչ ֆորմալ խմբերը երբեմն գրանցվում են որպես երկարաժամկետ առաքելություն ունեցող կազմակերպություն, իսկ ցրվելու դեպքում նրանց անդամներից շատերը միանում են այլ ՔՀԿ-ների:



## ՔՀԿ ԻՐԱՎԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

### ՔՀԿ գործունեությանն առնչվող հիմնական իրավունքները և ազատությունները

Հայաստանում քաղաքացիական հասարակության միավորումներ ստեղծելու իրավունքը ընձեռված է ՀՀ Սահմանադրությամբ: Սահմանադրության 28-րդ հոդվածը սահմանում է. «Յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմելու, այդ թվում՝ արհեստակցական միություններ կազմելու և դրանց անդամագրվելու իրավունք»: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի «Իրավաբանական միություններ» 5-րդ գլխի 4-րդ բաժինը ներառում է դրույթներ հասարակական կազմակերպությունների, հիմնադրամների ու իրավաբանական անձանց միությունների վերաբերյալ՝ որպես իրավական գրանցում ստացած ոչ առևտրային հասարակական միավորումների: Չգրանցված միավորումների համար հատուկ իրավական կանոնակարգումներ չկան՝ ոչ ֆորմալ խմբերն ու շարժումները անհատների խմբեր են, որոնք պետք է ենթարկվեն առկա իրավական կարգավորումներին:

Շահերի պաշտպանության քարոզարշավների և այլ նախաձեռնությունների իրականացման ընթացքում ՔՀԿ-ներն օգտվում են խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքից, որը սահմանված է ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածով: 2011 թ. ընդունված «Հավաքների ազատության մասին» օրենքը կանոնակարգում է հավաքների կազմակերպման, իրազեկման և դադարեցման կարգը: Ըստ այս օրենքի՝ հանրային հավաք իրականացնելու համար հավաքի կազմակերպիչը պետք է գրավոր իրազեկի համայնքի ղեկավարին՝ բացառությամբ մինչև 100 մասնակիցներ ունեցող, ինչպես նաև ինքնաբերական ու շտապ հավաքների: Իրազեկման նպատակը պետության կողմից հավաքի բնականոն և խաղաղ ընթացքն ապահովելն է, ինչպես նաև այլ անձանց սահմանադրական իրավունքների ու հանրության շահերի պաշտպանության համար անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելը: Իրազեկումը պետք է ներկայացվի նախապես, հավաքի անցկացման օրվանից ոչ ուշ, քան 7 օր, և ոչ շուտ, քան

30 օր առաջ<sup>29</sup>: Հավաքի իրականացման վերաբերյալ իրազեկումը քննարկելիս տեղական իշխանությունները պետք է հաշվի առնեն նաև ոստիկանության կարծիքը, իսկ այն դեպքերում, երբ հավաքը նախատեսվում է անցկացնել պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների տարածքում կամ դրանց հարևանությամբ՝ նաև մշակույթի նախարարության կարծիքը: Հազվադեպ է լինում, երբ տեղական իշխանությունները արգելում են հավաքը, ավելի հաճախ նրանք առաջարկում են հետաձգել միջոցառումը կամ այն կազմակերպել ուրիշ վայրում՝ պատճառաբանելով, որ նույն ժամանակահատվածում կամ տարածքում մեկ այլ միջոցառում է նախատեսված: Հարցման մասնակից ՔՀԿ-ները մեծ մասամբ հասարակական արշավների անցկացման օրենսդրական սահմանափակումներ չեն տեսնում. հարցվողների 60% կարծում է, որ նման սահմանափակումներ չկան, 8% նշել է, որ կան, իսկ 31,7% դժվարացել է պատասխանել այս հարցին: Նրանք, ովքեր խոչընդոտներ են տեսնում, իրենց պատասխանը բացատրել են հավաքների վերաբերյալ օրենքի սահմանափակումներով և ՏԻՄ կողմից հավաքի հանդիպող արգելքներով, սակայն նրանց կեսը չի նշել որևէ կոնկրետ արգելք: Ֆոկուս-խմբերի արդյունքներն ավելի հստակ պատկերացում են տալիս հավաքների ազատության սահմանափակումների վերաբերյալ. մատնանշվել են դեպքեր, երբ մարզային համայնքների բնակիչները չեն կարողացել Երևան մեկնել՝ հավաքներին մասնակցելու համար (որպես կանոն, դրանք ընդդիմության կազմակերպած հավաքներն են եղել) տարբեր պատճառներով՝ սկսած ոստիկանության կողմից ճանապարհների փակումից մինչև պետական հիմնարկներում աշխատող մարդկանց հասցեին հնչած սպառնալիքները: Բացի այդ՝ վերջին 2-3 տարվա ընթացքում ոստիկանության կողմից բողոքի ցույցերի մասնակիցների հանդեպ կիրառված բռնությունների բազմաթիվ դեպքեր են եղել, որոնք հնչեցվել են լրատվամիջոցների ու իրավապաշտպան կազմակերպությունների կողմից:

29. ՀՀ օրենքը «Հավաքների ազատության մասին», 14.04.2011թ.



Հասարակական ակտիվությունը կարգավորվում է նաև կարծիքն ազատ արտահայտելու և խոսքի ազատության իրավունքներով՝ ներառյալ «տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից», ինչպես նաև «անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու» իրավունք<sup>30</sup>:

2003 թ. Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Տեղեկատվության ազատության մասին» օրենքը, որը կարգավորում է տեղեկատվության ստացման ընթացակարգերը, ուղիները ու պայմանները: Մասնավորապես, ըստ այս օրենքի, յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը: Միաժամանակ տեղեկատվություն տնօրինողը տարին առնվազն մեկ անգամ հրապարակում է իր գործունեությանն առնչվող տեղեկությունները և դրանցում կատարված փոփոխությունները, ներառյալ հանրության համար իրականացվող աշխատանքների և ծառայությունների, բյուջեի, հաստիքացուցակի, շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության, քաղաքացիների ընդունելության կարգի մասին և այլն: Գրավոր հարցման պատասխանը տրվում է հարցումը ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, իսկ եթե տվյալ տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները և տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը<sup>31</sup>: «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը յուրաքանչյուր եռամսյակ հրապարակում է տվյալ ժամանակահատվածում մարդկանց տեղեկատվություն ստանալու իրավունքը խախտած գերատեսչությունների ղեկավար պաշտոնատար անձանց «սև ցուցակ»: Ըստ այս կազմակերպության հաշվետվության՝ 2012 թ. ՀԿ-ի անպատասխան մնացած հարցումների թիվը 2 անգամ կրճատվել է՝ նախորդ տարիների 35%-ի փոխարեն կազմելով 15,6%: Ընդ

30. ԳԳ Սահմանադրություն, հոդ. 27, 27.1

31. ԳԳ օրենքը «Տեղեկատվության ազատության մասին», հոդ. 6-9

որում, ինչպես նշված է ՀԿ կայքում, եթե «նախկինում պաշտոնյաները խուսափում էին տրամադրել իրենց կամ իրենց ղեկավարած գերատեսչությունը վատ լույսի ներքո ներկայացնող տեղեկությունները և անպատասխան էին թողում տեղեկատվություն ստանալու հարցումը», այսօր արդեն «խնդրահարույց տեղեկատվություն պահանջող հարցմանը պաշտոնյան նախընտրում է ոչ թե չպատասխանել, այլ տրամադրել թերի, խուսափող, ոչ ըստ էության պատասխան»<sup>32</sup>:

Ըստ ՀՀ Սահմանադրության՝ խոսքի ազատությունը նշանակում է նաև, որ յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն<sup>33</sup>: Հայաստանում ՔՀԿ-ներն ազատ են իրենց կարծիքն արտահայտելու՝ տարատեսակ հայտարարությունների, ելույթների, հրապարակումների միջոցով, որոնք կարող են տարածվել էլեկտրոնային և տպագիր եղանակներով: Բացի այդ՝ ՔՀԿ-ներն օգտագործում են նաև զանգվածային լրատվամիջոցները:

Լրատվամիջոցների և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է ՀՀ Սահմանադրությամբ: Պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանությունն առաջարկող անկախ հանրային ռադիոյի և հեռուստատեսության ամկայությունը և գործունեությունը<sup>34</sup>:

Ըստ «Ֆրիդոմ Հաուզ» կազմակերպության զեկույցի, չնայած սահմանադրական ու իրավական երաշխիքներին, մամուլի ազատությունը Հայաստանում սահմանափակված է, իսկ լրատվամիջոցները շարունակում են գտնվել քաղաքական ուժերի ազդեցության տակ<sup>35</sup>: Լրագրողական ընկերությունների դեմ ժամանակ առ ժամանակ զրպարտության գործեր են հարուցվում, առավելապես պաշտոնյաների կողմից, և վիրավորանքի համար փոխհատուցման գումարներ նշանակվում: «Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե» ՀԿ-ն 2014 թ.-ի առաջին կիսամյակում ԶԼՄ-ների և լրագրողների իրավունքների խախտումների 44 դեպք է արձանագրել՝ ներառյալ լրագրողների նկատմամբ ֆիզիկական բռնության 5 դեպք, ԶԼՄ-ների և նրանց աշխատակիցների նկատմամբ

32. Հայաստանի ինֆորմացիայի ազատության կենտրոնի վեբկայք, Սպիտակ և Սև ցուցակներ՝ չափորոշիչներ, <http://www.foi.am/en/criterias/>

33. ԳԳ Սահմանադրություն, հոդ. 27

34. ԳԳ Սահմանադրություն, հոդ. 27

35. Freedom House, Freedom of the Press 2014: Armenia

ճնշումների 29 փաստ և տեղեկատվություն ստանալու և տարածելու իրավունքի խախտման 10 դեպք<sup>36</sup>:

Լրատվամիջոցների բազմազանությունը սահմանափակվում է նաև հեռուստա- և ռադիոալիքների լիցենզավորման կանոնակարգումներով: Ինչպես նշված է «Ֆրիդոմ Հաուզ»-ի զեկույցում, առավել մեծ լսարան ունեցող լրատվամիջոցների մեծ մասը վերահսկվում է իշխանության կամ իշխանամետ անձանց կողմից: Տպագիր լրատվամիջոցները համեմատաբար բազմակարծիք են, թեև դրանք ևս միտված են ներկայացնելու իրենց սեփականատերերի քաղաքական և գաղափարական տեսակետներն ու կարծիքների հավասարակշռություն չեն ապահովում: Առցանց լրատվամիջոցներն ավելի անկախ են և բազմազան կարծիքներ են տրամադրում, ընդ որում այս լրատվամիջոցների քանակն ու լսարանը ավելանում է: Ինտերնետի տարածման ցուցանիշը բնակչության շրջանում 2013 թ. կազմում էր 46%, իսկ դրա օգտագործման համար որևէ սահմանափակում չկա<sup>37</sup>:

«ՍՈՑԻՈՄԵՏՐ» կենտրոնի իրականացրած հարցման մասնակից կազմակերպությունների մեծ մասը լավ կամ բավարար են գնահատում Հայաստանում հիմնական քաղաքացիական ազատությունների ապահովվածությունը, իսկ մեկ երրորդը իրավիճակը վատ կամ շատ վատ են գնահատում:

Աղյուսակ 6. Ինչպե՞ս կգնահատեք իրավիճակը Հայաստանում հետևյալ տեսանկյուններից (%)

	շատ լավ	լավ	բավարար	վատ	շատ վատ	ԴՊ
Հիմնական քաղաքացիական ազատությունների ապահովվածություն՝ ընդհանուր առմամբ	0	12,7	44,7	30,7	4,7	3,3

36. Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ՋԼՄ-ների իրավունքների խախտումների մասին 2014 թ. առաջին կիսամյակի զեկույց, «Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե» ՀԿ, օգոստոս, 2014թ.  
37. Freedom House, Freedom of the Press 2014: Armenia.

2	Չավաքների և միավորումների ազատության	2,0	16,7	46,7	25,3	2,7	2,0
3	Խոսքի ազատության	12,0	18,7	42,0	18,0	2,0	2,7
4	Տեղական իշխանությունների մակարդակով հասարակական հետաքրքրություններ կայացնող ցանկացած տեղեկատվության մատչելիության	0,7	18,7	37,3	30,7	6,7	2,0
5	Կենտրոնական իշխանությունների մակարդակով հասարակական հետաքրքրություններ կայացնող ցանկացած տեղեկատվության մատչելիության	0	13,3	37,3	36,7	4,0	2,7

Աղբյուր՝ «ՍՈՑԻՈՄԵՏՐ» կենտրոնի հարցման տվյալներ, 2014 թ.

Հիմնական քաղաքացիական իրավունքների ու ազատությունների համեմատ կոնկրետ իրավունքների ապահովվածության իրավիճակն ավելի բարվոք է գնահատվում: Հարցվողների ավելի քան 65%-ը հավաքների և միավորումների ազատությունը գնահատում է «բավարար» կամ «լավ», իսկ 28%-ը՝ «վատ»: Խոսքի ազատության ապահովման մակարդակը ավելի հաճախ է գնահատվում որպես «լավ» կամ «շատ լավ»՝ 30,7%-ի կողմից, «բավարար»՝ 42%-ի կողմից, իսկ հարցվողների 20%-ը այն գնահատել է «վատ» կամ «շատ վատ»: Տեղեկատվության մատչելիության մակարդակը ավելի ցածր է գնահատվել. կազմակերպությունների 50,6%-ը կենտրոնական իշխանությունների մակարդակով հասարակական հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվության մատչելիությունը «բավարար» կամ «լավ» է գնահատել, մինչդեռ 40,7%-ը այն համարում է «վատ» կամ «շատ վատ»: Տեղական իշխանությունների մակարդակով





հասարակական հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվության մատչելիության գնահատականը համեմատաբար ավելի բարձր է՝ 56,7%-ը այն գնահատել է «լավ», «շատ լավ» կամ «բավարար», իսկ 37,4%-ը՝ «վատ»:

## ՔՀԿ գրանցման և գործունեության կանոնակարգումներ

Գրանցված ՔՀԿ-ների (օրենսդրության մեջ կիրառվում է «հասարակական միավորումներ» եզրույթը) ստեղծումը կարգավորվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով: Ինչպես նշվել է, ընթացիկ իրավական դաշտում առկա է գրանցված հասարակական միավորումների երեք հիմնական տեսակ՝ հասարակական կազմակերպություններ, հիմնադրամներ և իրավաբանական անձանց միություններ: Հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների վերաբերյալ կան նաև առանձին օրենքներ, իսկ իրավաբանական անձանց միությունների գրանցումն ու գործունեությունը կարգավորվում է քաղաքացիական օրենսգրքով: Բացի այդ՝ «Բարեգործության մասին» ՀՀ օրենքը ներմուծում է նաև «բարեգործական կազմակերպություն» հասկացությունը՝ ոչ առևտրային կազմակերպություններ (գրանցված որպես ՀԿ կամ հիմնադրամ), որոնք իրականացնում են բարեգործական գործունեություն և իրենց անվանման մեջ պարունակում են «բարեգործական» բառը<sup>38</sup>: Չգրանցված նախաձեռնությունները չեն կարգավորվում հատուկ օրենքով և կարող են ազատ գործել, քանի դեռ ֆինանսական գործարքներ չեն կատարում:

2009 թ. սեպտեմբերին Հայաստանի կառավարությունը հաստատեց «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի փոփոխությունների նախագիծը՝ մշակված ՀՀ արդարադատության նախարարության կողմից, որն այնուհետև ներկայացվեց Ազգային ժողով: Առաջարկվող փոփոխությունները հրապարակայնորեն չէին քննարկվել ՔՀԿ-ների հետ, և հասարակական կազմակերպությունները քարոզարշավ սկսեցին առաջարկվող նախագծի դեմ: Արդյունքում նախագիծը մի քանի անգամ վերանայվեց, և օրենքի նախագծի վերջին տարբերակը ավելի մեծ հավանություն ստացավ ՔՀԿ-ների կողմից: Այնուամենայնիվ, դրա ընդունումը ԱԺ-ում սառեցվեց հետագա

զարգացումների լույսի ներքո: Մասնավորապես, լայնածավալ քննարկումների ու Արդարադատության նախարարության և ՔՀԿ-ների միջև ավելի սերտ համագործակցության արդյունքում նախաձեռնվեց ՔՀԿ իրավական դաշտի հետագա վերանայումը: Նախարարության և տեղական ու միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներից բաղկացած աշխատանքային խումբը մշակեց «Հասարակական կազմակերպությունների օրենսդրական ու ինստիտուցիոնալ բարեփոխումների հայեցակարգ», որն այնուհետև դրվեց շահագրգիռ կողմերի լայն քննարկման: Հայեցակարգը վերջնական տեսքի բերվեց ու 2014 թ. սեպտեմբերի վերջին հաստատվեց ՀՀ կառավարության կողմից: Ակնկալվում է, որ դրան կհետևեն մի շարք օրենսդրական փոփոխություններ, որոնք նշանակալի փոփոխությունների կիսնագեցնեն ՔՀԿ իրավական ձևերի, գրանցման, հաշվետվողականության և ֆինանսավորման հնարավորությունների առումով:


## Գրանցում

ՔՀԿ-ները գրանցվում են ՀՀ արդարադատության նախարարության ներքո գործող իրավաբանական անձանց պետական ռեգիստրում: Պետական ռեգիստրը պարտավոր է գրանցման հայտին պատասխանել քսանմեկ օրվա ընթացքում: Ներկայումս հասարակական կազմակերպությունները պարտավոր են անձամբ ներկայացնել իրենց փաստաթղթերը Երևանում: Սա դժվարություններ է ստեղծում մարզային կազմակերպությունների համար, որոնք պետք է մի քանի անգամ այցելեն Երևան՝ տրանսպորտի համար լրացուցիչ միջոցներ, ինչպես նաև ժամանակ ծախսելով: Գրանցման ընթացքում գրանցող մարմինը հաճախ լրացուցիչ փաստաթղթեր կամ փոփոխություններ է պահանջում կանոնադրության մեջ (եթե դրանում առկա են հակասություններ իրավական պահանջների հետ) կամ կազմակերպության անվանման հարցում (եթե այն հակասում է իրավական պահանջներին կամ համընկնում է գործող կազմակերպության անվանման հետ):

Հարցման մասնակից ՔՀԿ-ները ՔՀԿ գրանցման գործընթացը մեծամասամբ լավ կամ բավարար են գնահատում, իսկ վատ կամ շատ վատ են գնահատում հարցվողների մոտ 19%-ը:

38. ԴՅ օրենքը «Բարեգործության մասին»

Գծապատկեր 4. Ինչպե՞ս կզնահատեք ՔՀԿ գրանցման գործընթացը  
Հայաստանում (%)



Աղբյուր՝ «ՍՈՑԻՈՄԵՏՐ» կենտրոնի հարցման տվյալներ, 2014 թ.

Ֆոկուս-խմբային քննարկումներին մասնակցած ՔՀԿ-ները նշում են, որ մարզային կազմակերպությունների համար գրանցման գործընթացի հիմնական խոչընդոտը Երևան այցելելու անհրաժեշտությունն է, ինչպես նաև փաստաթղթերը մի քանի անգամ վերանայելու պահանջները:

ՔՀԿ 2013 թ. կայունության ցուցանիշի զեկույցում նշվում է, որ 2013 թ.-ին ՔՀԿ-ներն արձանագրել են գրանցման գործընթացի վարչարարության որոշակի նվազում<sup>39</sup>: Ակնկալվում է, որ ՔՀԿ-ների առցանց գրանցման համակարգը հասանելի կլինի մոտակա ապագայում, քանի որ համապատասխան կանոնակարգումները արդեն իսկ առկա են, և միայն որոշ տեխնիկական խնդիրներ պետք է լուծվեն:

Հասարակական կազմակերպությունները կարող են հիմնադրվել երկու և ավելի անձանց կողմից, հիմնադրամները կարող են հիմնվել նաև իրավաբանական անձանց կողմից, իսկ իրավաբանական անձանց միությունները հիմնադրվում են բացառապես իրավաբանական անձանց կողմից:

## Ղեկավարում

Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն է, որի անդամ-

ները չեն կարող լինել աշխատակազմի անդամ և վարձատրվել<sup>40</sup>: Հոգաբարձուների խորհրդի նիստերը գումարվում են ոչ պակաս, քան տարին մեկ անգամ՝ հոգաբարձուների խորհրդի նախագահի կողմից<sup>41</sup>:

Հասարակական կազմակերպության բարձրագույն մարմինը նրա անդամների ժողովն է, որն ունի կազմակերպության գործունեությանն առնչվող ցանկացած հարցի վերջնական լուծման վերաբերյալ որոշում ընդունելու իրավունք: Կազմակերպության հերթական ժողովը հրավիրվում է չորս տարին մեկ անգամից ոչ պակաս<sup>42</sup>: Ժողովների միջև ընկած ժամանակահատվածում հասարակական կազմակերպությունը կարող է կառավարվել անդամների ժողովի կողմից ընտրված խորհրդի կամ վարչության կողմից, եթե նման բան նախատեսված է կանոնադրությամբ: Այս ներկայացուցչական մարմնի համար աշխատակազմում ներգրավվելու կամ վարձատրվելու սահմանափակումներ չկան:

## Հաշվետվողականություն

Հիմնադրամների համար սահմանված են գույքի և հաշվետվողականություն ավելի խիստ պահանջներ, քան հասարակական կազմակերպությունների համար: Այսպես, հիմնադրամի տարեկան շրջանառության մեջ վարչական ծախսերը չպետք է գերազանցեն 20%-ը: Բացի այդ՝ յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտին հաջորդող 6 ամսվա ընթացքում հիմնադրամն իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տեղեկություններ հրապարակող մամուլում պարտավոր է հրապարակել հաշվետվություն իր գործունեության մասին՝ տեղեկություններ ներառելով իրականացված ծրագրերի, ֆինանսավորման աղբյուրների, ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափի և վարչակառավարչական ծախսերի չափի, գույքի օգտագործման մասին, նշելով հոգաբարձուների խորհրդի անդամների, կառավարչի անուններն ու ազգանունները և այլն<sup>43</sup>: Եթե հիմնադրամի ակտիվների արժեքը գերազանցում է 10 միլիոն դրամը, ապա հիմնադրամը պետք է հրապարակի նաև աուդիտորական եզրակացությունը:

Հասարակական կազմակերպության հանդեպ ներկա օրենսդրությամբ հաշվետվողականության պահանջները ավելի մեղմ են: Օրենքը նշում

40. ՀՀ օրենքը «Հիմնադրամների մասին», հոդ. 22

41. ՀՀ օրենքը «Հիմնադրամների մասին», հոդ. 26.4

42. ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», հոդ. 14.2

43. ՀՀ օրենքը «Հիմնադրամների մասին», հոդ. 39

39. ՔՀԿ կայունության ցուցանիշ 2013 - Հայաստան, ՔՀՀՀ/ԱՄՆ ՄԶԳ, հունիս, 2014թ.



է, որ կազմակերպությունը պարտավոր է իր գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունները ներկայացնել կազմակերպության ժողովի հաստատմանը ոչ պակաս, քան երկու տարին մեկ անգամ՝ ապահովելով այդ հաշվետվությունների հրապարակայնորեն մատչելի լինելը<sup>44</sup>, բայց չի կոնկրետացնում հրապարակայնորեն մատչելի լինելու եղանակները: Ինստիտուցիոնալ տեսանկյունից ավելի զարգացած կազմակերպությունները հրապարակում են տարեկան հաշվետվություններ կամ տեղեկատվություն տեղադրում իրենց կայքում, սակայն այդ կազմակերպությունների քանակը մի քանի տասնյակից չի անցնում:

## Ֆինանսավորում

Ըստ ՀԿ մասին օրենքի՝ հասարակական կազմակերպությունների սեփականությունը գոյանում է անդամավճարներից, դրամաշնորհներից, նվիրատվություններից, սահմանված կարգով իրականացված գործունեությունից և օրենքով չարգելված այլ, այդ թվում օտարերկրյա աղբյուրներից<sup>45</sup>: Հասարակական կազմակերպությունը ձեռնարկատիրական գործունեություն չի կարող իրականացնել կամ կարող է իրականացնել միայն առևտրային կազմակերպություններ ստեղծելու կամ դրանց մասնակցելու միջոցով<sup>46</sup>: Ի տարբերություն հասարակական կազմակերպությունների՝ հիմնադրամների գույքը կարող է ձևավորվել թե՛ դրամաշնորհներից և նվիրատվություններից, թե՛ հիմնադրամի և իր ստեղծած կամ իր մասնակցությամբ տնտեսական ընկերությունների ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցներից<sup>47</sup>: Միաժամանակ հիմնադրամի ձեռնարկատիրական գործունեությունը կարող է ծավալվել միայն հիմնադրամի նպատակների շրջանակներում և պետք է նախատեսված լինի կանոնադրությամբ:


Հասարակական կազմակերպությունների կողմից հիմնված ՄՊԸ-ների կամ հիմնադրամների վճարովի ծառայությունների եկամտի համար որևէ հարկային արտոնություն չի սահմանված: Այն հիմնադրամները, որոնք տարեկան ավելի քան 58,3 միլիոն ՀՀ դրամ (մոտավորապես 144 հազ. ԱՄՆ դոլար) եկամուտ ունեն, պետք է ԱԱՀ վճարեն նույն սկզբունքներով, ինչ առևտրային ընկերությունները:

ՔՀԿ-ները կարող են դիմել Պետական մարդասիրական հանձնաժողովին՝ խնդրելով իրենց կողմից իրականացվող որոշ ծրագրեր ճանաչել որպես բարեգործական, որը հնարավորություն կտա նրանց ԱԱՀ-ից ազատել այն գնումները, որ կատարում են այդ ծրագրերի շրջանակներում:

Շահութահարկի մասին օրենքը որոշակի հարկային արտոնություններ է սահմանում այն առևտրային ընկերությունների համար, որոնք ոչ առևտրային կազմակերպություններին և այլ խնամքի կամ առողջապահական կազմակերպություններին միջոցներ կամ ծառայություններ են փոխանցում՝ այդ միջոցների և ծառայությունների արժեքի չափով, բայց ոչ ավելի, քան համախառն եկամտի 0,25 տոկոսի չափով նվազեցնելով հարկման ենթակա համախառն եկամուտը: Միաժամանակ առևտրային կազմակերպությունների ներկայացուցիչները նշում են, որ համապատասխան թղթավարությունը անհամարժեք է առաջարկվող նվազեցմանը, և նախընտրում են չօգտվել այդ արտոնությունից:

Հարցմանը մասնակցած ՔՀԿ-ներն իրենց դժգոհությունն են արտահայտել բարեգործության հարկային արտոնությունների պակասի վերաբերյալ: Նրանց կեսից ավելին առկա արտոնությունները վատ կամ շատ վատ է գնահատել, իսկ մոտ 15%-ը տեղյակ չէր այդ արտոնությունների մասին:

Գծապատկեր 5. Ինչպե՞ս կգնահատեք հարկային արտոնությունները Չայաստանում (%)



Աղբյուր՝ «ՍՈՑԻՈՍԵՏՐ» կենտրոնի հարցման տվյալներ, 2014 թ.

44. ԲԳ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», հոդ. 16.1  
 45. ԲԳ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», հոդ. 17.1  
 46. ԲԳ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», հոդ. 4.3  
 47. ԲԳ օրենքը «Հիմնադրամների մասին», հոդ. 8.4

Ընդհանուր առմամբ, հարցման արդյունքները արտացոլում են Հայաստանում ՔՀԿ ֆինանսավորման խոցելիության խնդիրը: Հարցվողների 34%-ը դժգոհ է ՔՀԿ-ների ֆինանսավորման վերաբերյալ օրենսդրությունից, իսկ 24,7%-ը նշել է, որ նման օրենսդրությունը բացակայում է:

## Կամավորություն

Կամավորական աշխատանքի համար հասարակական կազմակերպությունները կարող են օգտագործել միայն իրենց անդամների աշխատուժը, թեև կազմակերպության անդամ չհանդիսացող կամավորներին թույլատրվում է ընդգրկել բարեգործական ծրագրերի իրականացման ժամանակ<sup>48</sup>: Հայաստանում ներկայումս չկա կամավորական աշխատանքի վերաբերյալ օրենք: Թեև տարիներ առաջ ՔՀԿ-ների և կառավարության շրջանակներում շրջանառվեց նման օրենքի նախագիծ, այդ նախագիծը ՔՀԿ-ների և նախարարությունների կողմից համընդհանուր համաձայնության չարժանացավ: Օրենսդրության պակասը այս ոլորտում մի շարք բացասական հետևանքներ ունի: Նախ հարկային մարմինները երբեմն քննում են ՔՀԿ-ներին կամավորներին որպես թաքնված աշխատուժ պահելու կասկածանքով: Բացի այդ՝ կամավորների համար իրենց աշխատանքը որպես աշխատանքային ստաժ որակելու իրավական հիմքեր չկան, չեն կարգավորված կամավորների իրավունքներն ու պարտականությունները: Վերջապես, օրենսդրական որևէ խթան կամավորության զարգացման համար չկա, բացի «Բարեգործության մասին» օրենքում սահմանված «Տարվա կամավոր» կոչումից, որը շնորհում է ՀՀ նախագահը<sup>49</sup>:

## Լուծարում

Ըստ օրենքի՝ հասարակական կազմակերպությունը կարող է լուծարվել միայն իր բարձրագույն մարմնի որոշմամբ կամ դատական գործընթացի միջոցով. «Կազմակերպությունը կարող է կամավոր լուծարվել իր բարձրագույն մարմնի որոշմամբ՝ ներառյալ այն ժամկետը լրանալու կապակցությամբ, որով ստեղծվել է կազմակերպությունը, կամ այն

նպատակին հասնելու կապակցությամբ, որի համար նա ստեղծվել է: Կազմակերպության հարկադիր լուծարման մասին որոշում կարող է ընդունել միայն դատարանը՝ պետական լիազորված մարմնի պահանջով և միայն օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում»<sup>50</sup>: Հիմնադրամների լուծարումը կարող է կատարվել միայն դատարանի որոշմամբ՝ շահագրգիռ կողմերի պահանջով և բացառապես օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում: Կազմակերպության լուծարումը պետք է գրանցվի պետական գրանցման մարմնում:

Ինչպես նշվել է, բազմաթիվ կազմակերպություններ դադարեցնում են իրենց գործունեությունը, բայց կազմակերպության լուծարման վերաբերյալ որևէ որոշում չեն կայացնում՝ խուսափելով լրացուցիչ թղթաբանությունից: Չգործող կազմակերպությունների խնդրի կարգավորման նպատակով 2011 թ. ընդունվեց մի օրենք, ըստ որի՝ մինչև 2008 թ.-ը հաշվետվություն չներկայացրած, գույքային և հարկային պարտավորությունների չունեցող կազմակերպությունները ենթակա են լուծարման: Այս կազմակերպությունների ցանկը հրապարակվել էր պետոեզիստրի կայքում, և այն կազմակերպությունները, որոնց ներկայացուցիչները երկու ամսվա ընթացքում չէին ներկայացրել որևէ ծանուցում առ այն, որ նրանք գործում են կամ գույք ունեն, պետք է հայտարարվեին լուծարված: Արդյունքում մոտ հարյուր կազմակերպություն 2012 թ.-ին լուծարված հայտարարվեցին:

48. ՔՀԿ կայունության ցուցանիշ 2013 - Հայաստան, ՔՁՀՀ/ԱՄՆ ՄՁԳ, հունիս 2014թ.

49. Հայաստանի ՔՀԿ-ներում կամավորական աշխատանքի հիմքերի և փորձի վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս Մ. Թադևոսյան և Լ. Հակոբյան, Կամավորության մշակույթը Հայաստանում, «Քաունթերփարթ ինթերնեշնլ» և CIVICUS. Քաղաքացիական մասնակցության համաշխարհային միավորում, Երևան, 2010թ.:

50. ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», հոդ. 20



# ՔՅԿ ՅԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄՅՈՒՍ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԻ ՅԵՏ

Քաղաքականության մշակման գործընթացին մասնակցության համատեքստում մյուս դերակատարների հետ համագործակցելու և աջակիցներին համախմբելու ՔՀԿ-ների ունակությունը նրանց հաջողության գրավականներից մեկն է: Զեկույցի այս բաժնում կանդիդատանք ՔՀԿ-ների համագործակցությանը մյուս ՔՀԿ-ների, պետական մարմինների, մասնավոր ընկերությունների և զանգվածային լրատվամիջոցների հետ՝ ուրվագծելով Հայաստանում ՔՀԿ-ների ու մյուս դերակատարների համագործակցության հիմնական միտումները և ներկայացնելով համապատասխան էմպիրիկ տվյալներ:

## ՔՅԿ-ների միջև համագործակցությունը, ցանցեր և կոալիցիաներ

Վերջին տարիներին ՔՀԿ-ներն ավելի հաճախ են կոալիցիաներ ու ցանցեր ձևավորում՝ թե՛ շահերի պաշտպանության կոնկրետ քարոզարշավների շրջանակներում, թե՛ որպես իրենց առաքելության իրականացման ուղղությամբ համատեղ գործունեության պլատֆորմ: Բնապահպանական և հաշմանդամության վերաբերյալ կոալիցիաներն առավել ակտիվ են եղել՝ այս հարցերի շուրջ բազմատեսակ ֆորումներ, ցանցեր ու դաշինքներ են ձևավորվել: Հաշմանդամության հարցերով զբաղվող ՔՀԿ-ների համատեղ ջանքերի շնորհիվ կառավարության ու Ազգային ժողովի կողմից մի շարք օրենսդրական փոփոխություններ են ընդունվել: Կանանց և երեխաների խնդիրներով զբաղվող կոալիցիաները ևս ակտիվ են եղել: «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնությունների» կոալիցիան, օրինակ, ակտիվորեն առաջ է տանում ընտանեկան բռնության դեմ օրենքի նախագիծը և միավորում է ոչ միայն գրանցված կազմակերպությունները, այլև այս ոլորտում գործող ոչ ֆորմալ խմբերը: «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի փոփոխությունների նախագծի շուրջ ձևավորվեց «Քաղաքացիական հասարակության զարգացման ցանցը», որը հաջողության հասավ կառավարության հետ ՔՀԿ

ինստիտուցիոնալ և իրավական բարեփոխումների հայեցակարգի շուրջ համաձայնության գալով:

Հարցման մասնակից ՔՀԿ-ներն առավել հաճախ նշել են հետևյալ ցանցերն ու կոալիցիաները, որոնց մեջ նրանք ընդգրկված են՝ Հանրային ցանց (12 ՔՀԿ), բնապահպանական դաշինք և այլ բնապահպանական ցանցեր (12 ՔՀԿ), կանանց հարցերով ցանցեր (4 ՔՀԿ), հաշմանդամության հարցերով դաշինքներ (3 ՔՀԿ), Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Action by Church Together (ACT) դաշինք (8 ՔՀԿ), Մոր և մանկան առողջության կոալիցիա (4 ՔՀԿ): Տասը ՔՀԿ-ներ նշել են, որ իրենք Արևելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորումի Հայաստանի ազգային պլատֆորմի անդամ են: Հարյուր հիսուն ՔՀԿ-ներից 110-ը չեն նշել որևէ ցանց, պլատֆորմ կամ կոալիցիա, որին իրենց մասնակից են<sup>51</sup>:

Թեպետ մի շարք կոալիցիաների ու ցանցերի գործունեությունը տեսանելի է և հաճախ նաև հաջողված. կոալիցիաներից շատերը ստեղծվել և կամ գործառույթ են իրականացնում դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում, միջազգային կազմակերպությունների աջակցությամբ: Կան նաև մի քանի՝ հիմնականում որևէ խնդրի շուրջ ձևավորված կոալիցիաներ, որոնք ինքնաբերական են ձևավորվել. այս կոալիցիաները հաճախ համակարգման ու ռեսուրսների հայթայթման խնդիրների առաջ են կանգնում:

Ոլորտային հետազոտությունները փաստում են, որ թեև համատեղ ջանքերը ավելի արդյունավետ են, ՔՀԿ-ներն այնքան էլ միտված չեն իրար հետ համագործակցելու<sup>52</sup>: Որոշ փորձագետներ նշում են, որ սակավաթիվ

51. «ՍՈՑԻՈՍԵՏԻՐ» անկախ սոցիոլոգիական կենտրոնի իրականացված ուսումնասիրություն՝ «Եվրոպական ինտեգրացիա» ՅԿ հետ համատեղ, ԵՄ ֆինանսական աջակցությամբ, Երևան, 2014թ.  
52. International Center for Human Development, Supporting Policy, Regulatory and Institutional Reforms for Civil Society Development in Armenia: Existing gaps and recommendations, 2012ամբ, Երևան, 2014թ.

ռեսուրսների համար ՔՀԿ-ների միջև մրցակցության չափազանցված մի պատկերացում կա, որն արհեստական բնույթ ունի. ՔՀԿ-ները ավելի շատ պետք է մտածեն ռեսուրսները միավորելու, քան մրցակցելու մասին, եթե ցանկանում են ավելի արդյունավետ աշխատել քիչ ռեսուրսներով<sup>53</sup>: Մյուս կողմից՝ կարծիք կա, որ ՔՀԿ համայնքը կարող է համախմբվել այն դեպքում, երբ անհրաժեշտ է իրենց համար անբարենպաստ մի որոշում փոխել<sup>54</sup>:

Շահերի պաշտպանությամբ զբաղվող խմբերը ծառայություն մատուցող ՔՀԿ-ների համեմատ ավելի շատ են կարևորում համագործակցությունը: Ֆոկուս-խմբի մասնակիցներից մեկը, ընդգծելով համագործակցության կարևորությունը, նշում է. «Քաղաքացիական հասարակությունը փոքր-փոքր խմբեր են՝ այսպես-այնպես փարսածված, ու ավելի արդյունավետ է ֆեկո սրանայու համար, [...] Էս 100 փոկուր [պետք է] մորիկիզացնել մի համայնքում մի խնդրի շուրջ, չսանք էլի մեր համայնքը չի, չգնանք: Գնանք ու ակնկալենք, որ այդ նայն մարդիկ գալու են մեր համայնք» (ՔՀԿ ներկայացուցիչ, Վանաձոր):

Հարցման մասնակից ՔՀԿ-ները սեկտորում առկա համագործակցությունն ամենաբարձրն են գնահատում՝ մյուս կառույցների հետ համագործակցության համեմատ. ըստ հարցման արդյունքների՝ ՔՀԿ-ների փոխազդեցությունը մյուս ՔՀԿ-ների հետ ամենասերտն է:

**Աղյուսակ 7. Գնահատե՞ք ձեր կազմակերպության համագործակցության մակարդակը այլ կազմակերպությունների հետ (1՝ ոչ մի, 10՝ շատ սերտ համագործակցություն)**

Կազմակերպություն	Միջին
1 Պետական կառավարման մարմիններ	5.61
2 Մարզպետարաններ	5.90
3 Համայնքապետարաններ	6.68
4 Միջազգային կազմակերպություններ	6.89
5 Հայաստանի այլ ՔՀԿ-ներ	7.67

53. «Երիտասարդական կազմակերպությունների քարտեզագրում և պետության կողմից ֆինանսավորվող երիտասարդական դրամաշնորհային ծրագրերի արդյունավետության գնահատում» հետազոտության զեկույց, Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտ, Երևան, 2014թ.  
54. Հայաստանի հասարակական կազմակերպությունների զարգացման հնարավորությունները և ռիսկերը, «Թրանսփարենսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոն, Երևան, 2011թ.

6 Արտասահմանյան ՔՀԿ-ներ	4.94
7 ՉԼՍ-ներ	7.06
8 Գործարարներ	3.91

Աղբյուր՝ «ՍՈՑԻՈՍԵՏՐ» կենտրոնի հարցման տվյալներ, 2014 թ.

Արտասահմանյան ՔՀԿ-ների հետ համագործակցությունն ավելի թույլ է և տեղ է գտնում միջազգային մակարդակի տարբեր միջոցառումներին համատեղ մասնակցության միջոցով: Ստորև ներկայացված Աղյուսակ 8-ում ներկայացված են արտասահմանյան ՔՀԿ-ների հետ համագործակցության ձևերը: Այսպես, առավել հաճախ համագործակցությունը սահմանափակվում է տարբեր միջոցառումներին համատեղ մասնակցությամբ: Միաժամանակ հարցվողների 36%-ը արտասահմանյան ՔՀԿ-ի հետ համատեղ ծրագիր է նախաձեռնել, իսկ 46,7%-ը՝ համատեղ գործունեություն ծավալել, որը բավականին բարձր ցուցանիշ է՝ հաշվի առնելով, որ ոչ բոլոր ՔՀԿ-ներն արտասահմանյան կազմակերպությունների հետ շփման հնարավորություն ունեն՝ լեզվական խնդիրների ու ճանապարհորդելու դժվարությունների պատճառով:

**Աղյուսակ 8. Ի՞նչ ուղիներով եք համագործակցում արտասահմանյան ՔՀԿ-ների հետ:**

Համագործակցության ուղին	%
Հանդիպում ենք միջոցառումների ժամանակ	62,7
Մասնակցում ենք խորհրդակցություններին	51,3
Մշակել ենք առաջարկությունների նախագծեր, համատեղ փաստաթղթեր և այլն	38,7
Միասին դիմել ենք ֆինանսավորման	36,0
Իրականացնում ենք համատեղ ծրագրեր կամ ծառայություններ	46,7
Նույն միավորման / հարթակների մաս ենք	20,7

Աղբյուր՝ «ՍՈՑԻՈՍԵՏՐ» կենտրոնի հարցման տվյալներ, 2014 թ.

ՔՀԿ-ների հաշվետվողականության բարելավումը և արտաքին հարաբերությունների ուղղությամբ ավելի շատ ջանքերի գործադրումը կնպաստի միմյանց մասին տեղեկատվության ավելի լայն տարածմանն ու համագործակցության նոր ուղիների բացահայտմանը:



## Համագործակցություն կառավարման մարմինների հետ

Հայաստանում քաղաքացիական հասարակության և հանրային կառավարման մարմինների միջև համագործակցության համընդհանուր քաղաքականությունը չկա: Այնուամենայնիվ, ՔՀԿ-պետություն համագործակցության համատեքստում կան մի շարք քաղաքականություններ, կանոնակարգեր և խորհրդատվական մարմիններ, որոնք վերջին տարիներին ավելի ու ավելի շատ են դառնում:

- Համաձայն ՀՀ կառավարության որոշման՝ 2008-2010 թթ. բոլոր նախարարություններում ձևավորվեցին կոլեգիալ մարմիններ, որտեղ, բացի նախարարությունների աշխատակազմերի ներկայացուցիչներից, պետք է ներգրավվեն ՔՀԿ ներկայացուցիչներ:
- Մի շարք պետական կառույցներ ստեղծել են համատեղ աշխատանքային խմբեր և հանձնաժողովներ, որոնք ապահովում են տվյալ կառույցի և հանրության միջև տեղեկատվության հոսքերը և հարթակ են ծառայում որոշումների ընդունման գործընթացում ՔՀԿ-ների մասնակցության համար: Օրինակ՝ ՀՀ գլխավոր դատախազը 2012 թ. աշխատանքային խումբ ստեղծեց միջազգային և տեղական ՔՀԿ-ների մասնակցությամբ՝ ազատ ու արդար ընտրությունների ապահովման նպատակով: ՀՀ արդարադատության նախարարությունը 2014 թ. ստեղծեց Հանրային խորհուրդ՝ որպես ՔՀԿ-ներից բաղկացած խորհրդատվական մարմին: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը 2008 թ. ընդունել է ՔՀԿ-ների հետ համագործակցության կանոնակարգ, որտեղ ամփոփված են հանրային մասնակցության վերաբերյալ հիմնական իրավական դրույթները, ՔՀԿ-ների հետ համագործակցության սկզբունքներն ու ձևերը:
- 2008 թ. հիմնադրվեց Հանրային ցանցը, որը ՔՀԿ-ների և Ազգային ժողովի միջև համագործակցության ինստիտուցիոնալ մեխանիզմ է: Հանրային ցանցի գործունեության հիմնական ուղղություններն են օրենսդրական նախաձեռնությունների և նախագծերի վերաբերյալ տեղեկատվության տարածումն ու հանրային լուսման կազմակերպումը:
- Կառավարության, վարչապետի և նախագահի կողմից մի շարք խորհուրդներ են ստեղծվել, ինչպես, օրինակ, Կայուն զարգացման ՀՀ ազգային խորհուրդը, Երիտասարդական քաղաքականության ազգային խորհուրդը, Կանանց հարցերով խորհուրդը և այլն: ՀՀ նախագահի հրամանով 2009 թ. հիմնադրվեց ՀՀ հանրային խորհուրդը,

որը խորհրդատվական մարմնի կարգավիճակ ունի և ստեղծվել է քաղաքացիական հասարակության ու կառավարության մարմինների միջև ուղի ծառայելու համար: Մի շարք իրավական դրույթներ են ընդունվել՝ հնարավորություն տալով հանրային խորհրդին մասնակցելու կառավարության աշխատանքներին և ներկայացնելու ՔՀԿ-ների կարծիքը:

- 2011 թ. սեպտեմբերին Հայաստանը միացավ «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնությանը, որը ՔՀԿ-կառավարություն համագործակցության մեկ այլ պլատֆորմ է: Սա միջազգային նախաձեռնություն է, որն ուղղված է ապահովել կառավարության կողմից քաղաքացիների առջև ստանձնած՝ թափանցիկության խթանման, կոռուպցիայի դեմ պայքարի, քաղաքացիների իշխանագործման, նոր տեխնոլոգիաների ներդրման միջոցով կառավարումն ավելի արդյունավետ և հաշվետու դարձնելու հանձնառությունները<sup>55</sup>:

Միաժամանակ ոչ բոլոր նշված կառույցներն են արդյունավետ համարվում ՔՀԿ-ների կողմից: Նախարարություններին կից ստեղծված կոլեգիաներում ոչ միշտ է, որ ՔՀԿ-ներ են ընդգրկված, իսկ ՔՀԿ ընտրության մեխանիզմը հստակ չէ: Առհասարակ, կարծիք կա, որ պետական մարմինների կողմից ՔՀԿ-ների ներգրավումը հաճախ ձևական բնույթ ունի<sup>56</sup>: ՔՀԿ-ների հետ համագործակցության բազմաթիվ միջոցառումներ իրականացվում միջազգային պարտավորությունների շրջանակներում և կամ որևէ դրամաշնորհային ծրագրի արդյունք են, մինչդեռ պետական մարմիններն իրենք հազվադեպ են համագործակցություն նախաձեռնում: «Ընդհանրապես պետության պարագայում էդ երկու [համագործակցության] մոդելներից գործում է միայն արձագանքելու մոդելը, երբ որ դու դիմեցիր, արձագանքում է, բայց ինչ-որ բան նախաձեռնել, հնարավորությունները մեծացնել, խրախուսել քաղաքացիական հասարակության հզորացումը՝ չկա» (ՔՀԿ ներկայացուցիչ, Գյումրի): Նշվում է նաև ՔՀԿ-ների նկատմամբ ընտրողական վերաբերմունքի մասին, որը հիմնված է անձնական կապերի կամ առանձին կազմակերպությունների հանդեպ կողմնակալ վերաբերմունքի վրա. «Ես անձամբ երկու կազմակերպություն եմ ներկայացնում և եթե դիմում եմ իշխանություններին ինչ-որ մի հարցով, նայն հարցով մի կազմակերպության դեպքում սրանում եմ մեծ աջակցություն, մյուս

55. Open Government Partnership Armenia website, [www.ogp.am](http://www.ogp.am)  
 56. International Center for Human Development, Supporting Policy, Regulatory and Institutional Reforms for Civil Society Development in Armenia: Existing gaps and recommendations, 2012

*ՀԿ-ի դեպքում մեծ խոչընդոտներ է պետք անցնել» (ՔՀԿ ներկայացուցիչ, Վանաձոր): Այսպես թե այնպես, ներկայումս իշխանությունների հետ համագործակցության զգալիորեն ավելի շատ հնարավորություններ կան՝ համեմատած տասը տարի առաջվա իրավիճակի հետ, և ՔՀԿ ներկայացուցիչները նշում են, որ ՔՀԿ-ների ավելի հետևողական ու պրոֆեսիոնալ մոտեցման դեպքում համագործակցությունն ավելի հաջողված է<sup>57</sup>:*

Տեղական իշխանությունների հետ համագործակցության ոլորտում ևս առաջընթաց կա: Մի շարք ՔՀԿ-ներ գործընկերային հարաբերություններ են ձևավորել տեղական ու մարզային իշխանությունների հետ, նրանց հետ խորհրդակցում են առանձին հարցերի շուրջ որոշումների ընդունման ժամանակ: Բացի այդ՝ այս ՔՀԿ-ները մասնակցում են նաև համայնքային ու մարզային ռազմավարական պլանավորման գործընթացին, իսկ որոշ ՔՀԿ-ներ դասընթացներ և խորհրդատվություն են կազմակերպում տեղական իշխանությունների համար պլանավորման թեմայով: ՔՀԿ-ների լոբբինգի ու աջակցության շնորհիվ որոշ համայնքներում տեղական իշխանությունները կիրառում են սոցիալական գործընկերության մեխանիզմը: Այս գործընթացի շրջանակներում համայնքային բյուջեից ՔՀԿ ծրագրերի համար գումարների հատկացման որոշումներ են ընդունվել: Այնուամենայնիվ, սոցիալական գործընկերությունը կանոնակարգող իրավական մեխանիզմներ Հայաստանում չկան:

Ընդհանուր առմամբ, իշխանությունները գնահատում են ծառայություն մատուցող ՔՀԿ-ների աշխատանքը և ավելի շատ են հակված նրանց հետ համագործակցելու՝ ի տարբերություն իրավապաշտպան խմբերի: Ծառայություն մատուցող ՔՀԿ ներկայացնող ֆոկլուս-խմբային քննարկման մասնակիցներից մեկը նշում է. *«Մենք անում ենք այն աշխատանքները, որոնք իրենք որոշ դեպքերում չեն ուզում, որոշ դեպքերում ի պաշտոնե չեն կարող կատարել, և շարք հեշտ է հանձնարարել ՀԿ-ներին, հեղու էլ պատրաստանքները ոնց որ նվազում է: [...] Օրինակ՝ մեզ մոտ մարզպետարանում կա երեխաների և կանանց իրավունքների պաշտպանության բաժին: Ու երբ որ հարց են քննարկում, բոլոր ՀԿ-ներին հրավիրում են, [ասում են] դու էս կանես, դու էս կանես, վերջում հաշվետվությունները հավաքում են, և սրացվում է, որ իրենք են էդ գործը կատարել» (ՔՀԿ ներկայացուցիչ, Վանաձոր):*

Հետազոտությունները փաստում են, որ ՔՀԿ և պետական իշխանությունների միջև արդյունավետ համագործակցության խոչընդոտներից մեկը փոխադարձ անվստահության գործոնն է: Պետական պաշտոնյաները կարծում են, որ ՔՀԿ-ներն ընդհանուր առմամբ չունեն հետևողներ և կոնկրետ կապեր այն համայնքների հետ, ում նրանք ներկայացնում են, և ավելի շատ իրականացնում են իրենց սեփական կամ դոնորների օրակարգը, քան ներկայացնում հանրային շահը<sup>58</sup>: Ավելին՝ երբեմն ՔՀԿ-ներն անգամ ընկալվում են որպես շահույթ հետապնդող կառույցներ. առկա է այն կարծրատիպը, որը ՔՀԿ-ները ստեղծվում են գուտ գումար վաստակելու և բարեկամներին աշխատանքով ապահովելու նպատակով: Իշխանությունները նաև կասկածում են ՔՀԿ պրոֆեսիոնալիզմի և տեղեկատվության վերլուծության կարողության ու ոչ կառուցողական քննադատության փոխարեն հիմնավորված առաջարկներ տալու ունակության վրա: Մյուս կողմից՝ ՔՀԿ-ները երկար մտածում են այս կամ այն պետական մարմնի հետ համագործակցային հարաբերություններ նախաձեռնելիս՝ խուսափելով վարչարարական և անարդյունավետ գործընթացից:

Ստորև պատկերված աղյուսակում ներկայացված են ՔՀԿ հարցման տվյալների արդյունքները, որտեղ թվարկված են ՔՀԿ-ների ընկալմամբ՝ ՔՀԿ-պետություն համագործակցության խոչընդոտները: Առաջին խմբի խոչընդոտները պայմանավորված են պետական մարմինների կարողություններով ու գործելաոճով (60,7%), իսկ երկրորդ խմբում այն խոչընդոտներն են, որոնք ՔՀԿ-ների կարողություններով են պայմանավորված (20%): Այսպիսով՝ ՔՀԿ-ներն առավել հաճախ գտնում են, որ հանրային կառավարման մարմինները քաղաքացիական հասարակության հետ երկխոսության համար բավարար ռեսուրս և պոտենցիալ չունեն: Հաջորդ առավել հաճախ նշված խոչընդոտը կոռուպցիան է:

57. «Երիտասարդական կազմակերպությունների քարտեզագրում և պետության կողմից ֆինանսավորվող երիտասարդական դրամաշնորհային ծրագրերի արդյունավետության գնահատում» հետազոտության զեկույց, Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտ, Երևան, 2014թ.

58. Հայաստանի հասարակական կազմակերպությունների զարգացման հնարավորությունները և ռիսկերը, «Թրանսփարենսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոն, Երևան, 2011թ.





**Աղյուսակ 9. Որո՞նք են պետական իշխանությունների հետ ձեր համագործակցության խոչընդոտները:**

	%
Իշխանությունները չունեն բավարար ռեսուրսներ / ներուժ քաղաքացիական հասարակության հետ երկխոսության համար	26.0
Կոռուպցիան իշխանությունների հետ փոխազդեցության խոչընդոտ է	12.0
Իշխանությունները չեն ցանկանում համագործակցել մեզ հետ	8.7
Պետական մարմինները չեն վստահում մեր կազմակերպությանը	6.0
Մեր կազմակերպությունը չի վստահում իշխանությունն	8.0
Մենք չունենք իշխանություններին մոտենալու և գործընթացներին ներգրավվելու հմտությունը	8.0
Մենք չունենք բավարար տեղեկատվություն	6.0
Մենք չունենք բավարար աշխատակազմ	6.0
<b>Այլ</b>	<b>14.0</b>

Աղբյուր՝ «ՍՈՑԻՈՍԵՏԻ» կենտրոնի հարցման տվյալներ, 2014 թ.

**Աղյուսակ 10. Համագործակցության փորձը**

	ՏԻՄ	մարզպետարան	պետական մարմին
1 Որոշ հարցերի շուրջ խորհրդատվություն ենք տվել	75,3	58,7	43,3
2 Համատեղ ծրագրեր ենք նախաձեռնել	67,3	54,7	42,7
3 Նրանց ռազմավարության և քաղաքականության մշակման գործընթացի վերաբերյալ խորհրդատվություն ենք տվել	57,3	42,0	40,7
4 Որոշումների կայացման գործընթացին ենք մասնակցել	52,0	38,7	32,7
5 Բյուջեի քննարկումներին ենք մասնակցել	37,3	16,0	14,7


Որոշակի գործունեության				
6	իրականացման համար վճարովի ծառայություններ ենք մատուցել	14,0	14,0	7,3
7	Ֆինանսապես աջակցել ենք ծրագրերի համար	24,0	13,3	4,7

Աղբյուր՝ «ՍՈՑԻՈՍԵՏԻ» կենտրոնի հարցման տվյալներ, 2014 թ.

Եթե հարցված բոլոր 150 ՀԿ-ների կողմից համագործակցության բոլոր եղանակների օգտագործումը ընդունենք որպես հնարավորությունների 100%, ապա ստացվում է, որ ՔՀԿ-ներն օգտագործում են համագործակցության հնարավոր պոտենցիալի 21%-ը: Ընդ որում, որքան բարձր է իշխանական ատյանը, այնքան նվազում է համագործակցությունը: Այս բացահայտումը հաստատվում է Աղյուսակ 7-ի տվյալներով, ըստ որի՝ ՔՀԿ-ները համագործակցության ավելի սերտ ցուցանիշ ունեն տեղական իշխանությունների (6,68 միավոր՝ 10 միավորի սանդղակում), քան մարզային ու ազգային մակարդակի կառավարման մարմինների հետ (համապատասխանաբար՝ 5,90 և 5,61 միավոր):

Նմանապես, տեղական իշխանությունների հետ համագործակցությամբ բավարարվածությունը ավելի լավ է գնահատվել, քան մյուս՝ ավելի բարձր ատյանների հետ համագործակցությունը:

**Գծապատկեր 6. Ինչպե՞ս կգնահատեք ձեր կազմակերպության հարաբերությունները տարբեր մակարդակների կառավարման մարմինների հետ (1՝ շատ վատ, 5՝ շատ լավ)**



Աղբյուր՝ «ՍՈՑԻՈՍԵՏԻ» կենտրոնի հարցման տվյալներ, 2014 թ.

Այսպիսով՝ ՔՀԿ-ները համայնքային իշխանությունների հետ ավելի սերտ և ավելի արդյունավետ են համագործակցում, քան պետական կառավարման մարմինների հետ: Այս փաստը, ի թիվս այլ գործոնների, բացատրվում է համայնքային մակարդակում անձնավորված հարաբերությունների և ոչ

Ֆորմալ ցանցերի առկայությանը, որը Հայաստանի մշակույթի համար բնորոշ հատկանիշ է: Մյուս կողմից՝ համայնքներում իրականացվող բազմաթիվ դրամաշնորհային ծրագրեր ֆինանսավորվում են համայնքային ներդրում ունենալու պայմանով: Պահանջվող ներդրումի չափը երբեմն հասնում է մինչև 40%-ի: Առանձին ծրագրերի շուրջ համագործակցության արդյունքում ՔՀԿ-ները և համայնքային իշխանությունները շարունակում են իրենց համագործակցությունը նաև ծրագրային գործողություններից դուրս համայնքային այլ խնդիրների վերհանման և լուծման նպատակով: Օրինակ՝ շահերի պաշտպանության մի քանի ծրագրերի շրջանակներում տեղական ու մարզային իշխանությունների հետ բանակցություններից հետո «Մարտունու կանանց համայնքային միություն» ՀԿ-ին սկսեցին հրավիրել տարբեր ժողովների և խորհրդակցել տեղական ու մարզային մակարդակում ռազմավարական որոշումների ընդունման վերաբերյալ: Նմանատիպ փորձ կա նաև Շիրակի և այլ մարզերում, որտեղ ՔՀԿ-ներն առավել ակտիվ են: Այս միտումներն իրենց դրական ազդեցությունն են ունենում համագործակցության մշակույթի ձևավորման վրա. միաժամանակ այս համագործակցությունն ավելի շատ տարերային բնույթ է կրում և հիմնված է անձնային գործնի վրա՝ չունենալով ինստիտուցիոնալ մեխանիզմներ:

## Համագործակցություն մասնավոր հատվածի հետ

Ձարգացած երկրներում առևտրային ընկերություններն իրենց կարևոր մասնաբաժինն են ունենում ՔՀԿ գործունեության ֆինանսավորման և զարգացման ու շահերի պաշտպանության տարբեր նախաձեռնություններին աջակցության գործում: Սակայն Հայաստանում օրենսդրական դաշտը բարեգործական ներդրումների համապատասխան խթաններ չի տրամադրում, իսկ բարեգործության ու քաղաքացիական ակտիվության մշակույթը բավականաչափ զարգացած չէ՝ ՔՀԿ-ների ու մասնավոր հատվածի միջև արդյունավետ գործընկերության հիմք հանդիսանալու համար:

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը (ԿՍՊ), որը բիզնես հատվածի օրակարգի անբաժան մաս է ամբողջ աշխարհում, դեռևս սոր զարգացող հայեցակարգ է Հայաստանում: Առևտրային հատվածի որոշ ներկայացուցիչներ երբեմն շփոթում են ԿՍՊ գաղափարը բարեգործության հետ<sup>59</sup>, իսկ այն ձեռնարկությունները, որոնք որդեգրել են ԿՍՊ քաղաքականություն, չեն դիտարկում ՔՀԿ-ներին որպես լիարժեք գործընկերներ: Խոշոր ընկերությունները առավել հաճախ նախընտրում են սոցիալական և բարեգործական ծրագրեր իրականացնել՝ առանց ՔՀԿ-ներին որպես միջնորդ կազմակերպություն ընդգրկելու: Ընկերությունները կարծում են, որ շատ ՔՀԿ-ներ պատրաստ չեն բիզնեսի հետ հաղորդակցվելու և ավելի շատ մտածում են ֆինանսավորման հայթայթման, քան առաքելության իրականացման մասին<sup>60</sup>: Ինչպես և պետության հետ համագործակցության դեպքում էր, ՔՀԿ-ների հանդեպ վստահության պակասը այստեղ էլ համագործակցության հիմնական խոչընդոտ է: Համաձայն ՔՀԿ-ների տված գնահատականի՝ մասնավոր հատվածի հետ համագործակցությունը ամենաթույլն է մյուս բոլոր դերակատարների հետ համագործակցության համեմատությամբ՝ ստանալով 10-ից 3,91 միավոր, որտեղ 10-ը համագործակցության ամենաբարձր մակարդակն է նշանակում<sup>61</sup>:

Միևնույն ժամանակ ՔՀԿ-բիզնես համագործակցության որոշակի սերմեր կան: Թեև ընկերությունները հազվադեպ են ֆինանսավորում ՔՀԿ-ների ծրագրերը, այն խոշոր ընկերությունները, որոնք ԿՍՊ քաղաքականություն են որդեգրել, համագործակցում են ՔՀԿ-ների հետ իրենց ծրագրերի շրջանակներում, ինչպես նաև խորհրդակցում նրանց հետ՝ տեղեկատվություն ստանալու համար: Օրինակ՝ «Օրանժ Հայաստանը» համագործակցել է ՔՀԿ-ների հետ առողջապահության, կրթության և խոցելի համայնքներում երեխաների աջակցության մի շարք նախաձեռնություններ իրականացնելիս:

Ըստ հետազոտության տվյալների՝ մասնավոր հատվածի հետ ՔՀԿ-ների համագործակցության փորձը հետևյալն է:

59. Մ. Թադևոսյան և Լ. Հակոբյան, Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն. գործունեության մոնիթորինգի շրջանակ, «Քաունթերփարթ ինթերնեշնլ» և CIVICUS.

Քաղաքացիական մասնակցության համաշխարհային միավորում, Երևան, 2010թ.

60. ՔՀԿ կայունության ցուցանիշ 2013 - Հայաստան, ՔԶԳ/ԱՄՆ ՄԶԳ, հունիս, 2014թ.

61. «ՍՈՑԻՈՍԵՏԻ» անկախ սոցիոլոգիական կենտրոնի իրականացված ուսումնասիրություն՝ «Եվրոպական ինտեգրացիա» ՀԿ հետ համատեղ, ԵՄ ֆինանսական աջակցությամբ, Երևան, 2014թ.



**Աղյուսակ 11. Ինչպե՞ս եք համագործակցում գործարարների հետ**

	<b>Համագործակցության բնույթը</b>	<b>%</b>
1	Համատեղ ծրագրեր ենք նախաձեռնում	18.7
2	Խորհրդակցել են մեզ հետ որոշակի հարցերի շուրջ	18.0
3	Ֆինանսավորել են ՔՀԿ գործունեությունը	15.3
4	Նյութական աջակցություն են ցուցաբերել	14.7
5	Վարձել են ՔՀԿ-ին՝ որոշակի ծառայությունների մատուցման համար	5.3
6	Կամավորներ են տրամադրել համար	5.3
7	ՔՀԿ անդամների ուսուցում ընկերության հաշվին	3.3
8	Այլ	7.3

Աղբյուր՝ «ՍՈՑԻՈՍԵՏՐ» կենտրոնի հարցման տվյալներ, 2014 թ.

Այսպիսով՝ առավել հաճախ համագործակցությունը կառուցված է կոնկրետ հարցերի կամ ծրագրերի շուրջ, իսկ ՔՀԿ-ների մոտ վեցերորդ մասը գործարարներից նաև ֆինանսական աջակցություն են ստացել: Մինևույն ժամանակ 67 ՔՀԿ-ներ (հարցվողների 44,7%-ը) մասնավոր սեկտորի հետ համագործակցության որևէ տարբերակ չեն նշել:

Այն ՔՀԿ-ները, որոնք համագործակցության փորձ ունեն, մեծ մասամբ բավարար են գնահատել այդ համագործակցության արդյունավետությունը (համագործակցության փորձ ունեցող ՔՀԿ-ների 51,3%-ը), մինչդեռ նրանց 31,3%-ը այնքան էլ բավարարված չեն, իսկ 10%-ը ընդհանրապես բավարարված չէ առկա համագործակցության արդյունավետությամբ:

Մարզերում գործարարներն ավելի հաճախ են աջակցություն տրամադրում ՔՀԿ-ներին, թեև այդ աջակցության դրամային արժեքն ավելի քիչ է՝ Երևանի համեմատությամբ: Այս մասին են վկայում թե՛ ֆոկուս-խմբային քննարկումների, թե՛ հարցման արդյունքները:

Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել են նաև ՔՀԿ-ների և գործարարների համագործակցության բարելավման ուղիները: Առաջարկվող լուծումների վերաբերյալ ՔՀԿ-ները տվել են հետևյալ պատասխանները:

**Աղյուսակ 12. Ինչպե՞ս կարելի է բարելավել համագործակցությունը ՔՀԿ-ների ու գործարարների միջև**

		<b>%</b>
1	Անցկացնել համատեղ հանդիպումներ և միջոցառումներ	34,0
2	Մշակել ՔՀԿ-տնտեսվարող սուբյեկտների համագործակցության ռազմավարություն	32,0
3	Բիզնես միջավայրում լուսաբանել ՔՀԿ-ների գործունեությունը	24,7
4	ՔՀԿ-ներին և տնտեսվարող սուբյեկտներին ներկայացնել մասնավոր և ոչ պետական հատվածի միջև գործընկերության սկզբունքներն ու ձևերը	10,7
5	Համատեղ ծրագրեր իրականացնել	21,3
6	Բարեգործությունը /հովանավորությունը խթանելու նպատակով բարենպաստ օրենսդրություն սահմանել տնտեսվարող սուբյեկտների համար	22,7
7	Այլ	3,3

Աղբյուր՝ «ՍՈՑԻՈՍԵՏՐ» կենտրոնի հարցման տվյալներ, 2014 թ.

Ակնհայտ է, որ երկու հատվածների միջև հաղորդակցությունը կօգնի բացահայտել համագործակցության խոչընդոտները և կհստակեցնի փոխադարձ ակնկալիքները: Մինևույն ժամանակ ՔՀԿ և մասնավոր հատվածի համատեղ ջանքերով մշակված համագործակցության ռազմավարությունը, որտեղ կընդգրկվեն համագործակցության սկզբունքները, նպատակներն ու ձևերը, ինստիտուցիոնալ հիմք կստեղծի համագործակցության համար և հետագայում կծառայի ավելի արդյունավետ հաղորդակցության ու համատեղ գործունեության համար: ՔՀԿ-ների տեսանելիության բարելավումը և ՔՀԿ-ների գործունեության մասին իրազեկումը, համագործակցության սկզբունքների ու օգուտների ներկայացումը ևս կնպաստեն ՔՀԿ հատվածի հանդեպ վստահության ընդհանուր մակարդակի բարձրացմանը և գործարարների ավելի արդյունավետ ներգրավմանը:

## Համագործակցություն ՋԼՄ-ների հետ

ՋԼՄ-ների հետ համագործակցությունն էական դեր է խաղում ՔՀԿ-ների գործունեության մասին իրազեկման և շահերի պաշտպանության նախաձեռնություններում աջակցության ու ազդեցության ձեռքբերման գործում: ՔՀԿ-ների հանդեպ վստահության պակասը օրակարգային խնդիր է Հայաստանի քաղաքացիական հասարակության համար<sup>62</sup>, և ՔՀԿ-ների դրական հանրային վարկանիշը առաջին հերթին կախված է ՋԼՄ-ների հետ նրանց արդյունավետ հարաբերություններից:

ՔՀԿ-ներին հաճախ ընկալում են որպես զուտ դրամաշնորհներ հետապնդող կազմակերպություններ, որը վնասում է ՔՀԿ-ների հանրային վարկանիշին, և ՔՀԿ-ները հավատացած են, որ հեռարձակող լրատվամիջոցներն իրենց ներդրումն են ունեցել այսպիսի հեղինակության ձևավորման գործում: Մյուս կողմից՝ ՔՀԿ-ներն իրենք էլ քիչ են աշխատում իրենց գործունեության լուսաբանման ուղղությամբ և հազվադեպ են հանրային կապերի ռազմավարություն մշակում: Կազմակերպություններից շատերը հանրային կապերի ոլորտում կանոնավոր գործունեության համար ռեսուրս կամ կարողություն չունեն<sup>63</sup>:

2014 թ. հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են այն ուղիները, որոնք ՔՀԿ-ները կիրառում են իրենց գործունեության լուսաբանման համար: Ըստ այս տվյալների՝ ՔՀԿ-ների 82%-ը օգտագործում է լրատվամիջոցները, ներառյալ ինտերնետը՝ նորությունները տարածելու նպատակով, 66%-ը հանրային միջոցառումներ է կազմակերպում, 46%-ը հաշվետվություններ է հրապարակում ՋԼՄ-ներում, իսկ 43,3%-ը օգտագործում է տպագիր նյութեր: Հանրային քարոզարշավները՝ որպես իրազեկման միջոց, նշվել են ՔՀԿ-ների մոտ 25%-ի կողմից:

### Աղյուսակ 13. Ինչպե՞ս եք տեղեկացնում հանրությանը ձեր գործունեության մասին

	Պատասխան	%
1	Նորություն և մամուլ հաղորդագրություն (թերթ, ռադիո, հեռուստատեսություն, ինտերնետ)	82.0

62. Կովկասյան հետազոտական ռեսուրսների կենտրոնների իրականացրած ամենամյա «Կովկասյան բարոմետր» հետազոտության 2013թ. արդյունքների համաձայն՝ հանրության միայն 18 տոկոսն է ամբողջովին կամ մասամբ վստահում ՔՀԿ-ներին, ընդ որում նախորդ տարվա տվյալների համեմատ վստահության մակարդակը նվազել է: 63. ՔՀԿ կայունության ցուցանիշ 2013 - Հայաստան, ՔԶՀՀ/ԱՄՆ ՄԶԳ, հունիս, 2014թ.

2	Հրապարակային միջոցառումներ (կլոր սեղաններ, կոնֆերանսներ)	66.0
3	Հաշվետվություններ ՋԼՄ-ների միջոցով	46.0
4	Թռուցիկներ / բուկլետներ	43.3
5	Հանրային արշավներ	24.7

Աղբյուր՝ «ՍՈՑԻՈՍԵՏՐ» կենտրոնի հարցման տվյալներ, 2014 թ.

Ակնհայտ է, որ ՔՀԿ-ների հանրային կապերի գործունեության մեջ ՋԼՄ-ների հետ հարաբերությունները կենտրոնական տեղ են զբաղեցնում:

Համաձայն «Թրանսպարենսի ինտերնեշլ» հակակոռուպցիոն կենտրոնի վերլուծության, լրատվամիջոցների ներկայացուցիչները դրական կարծիք են արտահայտել այն ՔՀԿ-ների մասին, որոնց հետ համագործակցել են, բայց բացասական կարծիք են արտահայտել հատվածի մասին առհասարակ: Նրանք պատրաստակամություն են հայտնել աշխատելու այն ՀԿ-ների հետ, որոնք արդյունավետ են գործում, ասելիք և աշխատանք ունեն ներկայացնելու: Ընդդիմադիր լրատվամիջոցները մասնավորապես գնահատել են համագործակցությունը իրավապաշտպան խմբերի և պրոֆեսիոնալ լրատվական ընկերակցությունների հետ, մինչդեռ կառավարության կողմից վերահսկվող լրատվամիջոցները հիմնականում նշել են կառավարության հետ կապված կազմակերպությունների անուններ:

ՔՀԿ-ՋԼՄ համագործակցության միջին գնահատականը ՔՀԿ-ների կողմից բավականին բարձր է՝ 7,06 միավոր, որին գերազանցում է միայն ՔՀԿ-ների միջև համագործակցության ցուցանիշը (տես Աղյուսակ 7): Ինչ վերաբերում է ՔՀԿ-ՋԼՄ համագործակցության եղանակներին, ապա ՔՀԿ-ների մեծ մասը նշում է, որ հրավիրում է լրատվամիջոցներին իրենց միջոցառումներին և համագործակցում նրանց հետ իրազեկման կամ հանրային արշավների շրջանակներում:

### Աղյուսակ 14. Ինչպե՞ս եք համագործակցում զանգվածային լրատվամիջոցների հետ

	%	
1	Հրավերներ իրադարձությունների լուսաբանման համար	90,7
2	Համագործակցություն իրազեկման և/կամ հանրային արշավների համար	44,7
3	Հետազոտությունների արդյունքների / վերլուծությունների հրապարակումներ	31,4



4	Որպես գործիք՝ լրբբինգի, պետական կառավարման վրա ճնշումներ գործադրելու համար	24,7
5	Դասընթացների կազմակերպում լրագրողների համար	20,0
6	Ֆինանսավորում լրագրողների ռեպորտաժների /հետաքննությունների համար	10,0

Աղբյուր՝ «ՍՈՑԻՈՍԵՏՐ» կենտրոնի հարցման տվյալներ, 2014 թ.

Այստեղ ևս, եթե ընտրանքային համախմբության բոլոր ՔՀԿ-ների կողմից ՋԼՄ-ների հետ համագործակցության բոլոր ուղիների կիրառումը ընդունենք որպես համագործակցության պոտենցիալի 100%-ի օգտագործում, կարելի է հաշվարկել, որ ներկայումս ՋԼՄ-ների հետ հնարավոր համագործակցության 36,9%-ն է կիրառվում: Մինևս ժամանակ պարզ է դառնում, որ ՔՀԿ-ները դիտարկում են ՋԼՄ-ները՝ որպես առաջին հերթին սեփական գործունեության լուսաբանման և իրենց տեսանկյունից ընդլայնման ուղի, այլ ոչ թե շահերի պաշտպանության կամ քաղաքացիական ակտիվության գործընկեր:

ՔՀԿ-ների մեծ մասը՝ 72,7%-ը, լիովին կամ հիմնականում բավարարված է ՋԼՄ-ների հետ իր համագործակցությունից, իսկ 24,6%-ը՝ քիչ բավարարված կամ առհասարակ դժգոհ է:

Այն ՔՀԿ-ները, որոնք բավարարված չէին ՋԼՄ-ների հետ իրենց համագործակցությամբ, նշել են դժգոհության հետևյալ պատճառները:

**Աղյուսակ 15. Եթե բավարարված չեք այդ համագործակցությամբ, նշեք պատճառները**

	%
Մեր կազմակերպության առաքելությունը և գործունեությունը ՋԼՄ-ներում թերի է լուսաբանված	7,3
Մեր կազմակերպության նպատակը և գործունեությունը ՋԼՄ-ներում անբավարար է պարզաբանված է լուսաբանված	5,3
Մեր կազմակերպության մասին որոշակի նորությունների տարածման մեջ ակնհայտ անընդունելի միտումներ կան	1,3

Այլ, ներառյալ՝	
Որպես չեն հասկանում լուսաբանման բուն թեման հաճախ նյութը աղավաղված է լինում՝ լի տերմինաբանական սխալներով	
մեր խնդիրները մեծ հետաքրքրություն չունեն, սենսացիոն չեն միջոցառման գալիս են, եթե պաշտոնյա անձ պետք է լինի որոշ հեռուստաընկերություններ լուսաբանման համար գումար են ուզում	6,7
լրատվամիջոցներն ազատ չեն	
<b>Դժվարանում են պատասխանել</b>	<b>6,0</b>

Աղբյուր՝ «ՍՈՑԻՈՍԵՏՐ» կենտրոնի հարցման տվյալներ, 2014 թ.

Մի շարք հրապարակումներում նշվում է ՔՀԿ-ների այն կարծիքը, որ լրատվամիջոցները հաճախ հետաքրքրված չեն ՔՀԿ-ների իրական գործունեությամբ և լուսաբանում են հիմնականում այն գործողությունները և միջոցառումները, որտեղ հայտնի մարդիկ կան կամ սկանդալային որևէ թեմա: Ըստ ՔՀԿ կայունության ցուցանիշի զեկույցի՝ ծառայություն մատուցող ՔՀԿ-ներն առավելապես դրական լույսի ներքո են լուսաբանվում, մինչդեռ շահերի պաշտպանությամբ և վերահսկմամբ զբաղվող ՔՀԿ-ները բացասական որակավորումներ են ստանում հեռարձակող լրատվամիջոցներում<sup>65</sup>: Մարզային ՔՀԿ-ներն ավելի շատ են համագործակցում տեղական ՋԼՄ-ների հետ՝ հաստատելով գործընկերային հարաբերություններ: Բացի այդ՝ առցանց լրատվամիջոցներն ավելի ակտիվ են ՔՀԿ գործունեության ու միջոցառումների լուսաբանման հարցում:

Ոչ ֆորմալ խմբերի այն գործունեությունը, որն ուղղված է հասարակության լայն շերտերի առաջնային խնդիրների լուծմանը, ավելի շատ է լուսաբանվում ՋԼՄ-ների կողմից: Օրինակ՝ կանանց կողմից բարձրացված՝ մայրության արձակուրդի փոխհատուցման հարցը, երիտասարդների պայքարը պարտադիր կուտակային կենսաթոշակի մասին օրենքի դեմ, բնապահպանական և այլ քաղաքացիական շարժումները ավելի լայն լուսաբանում են ստանում, հատկապես առցանց լրատվամիջոցներում:

Այսպիսով՝ ՋԼՄ-ները հակված են լուսաբանելու այն ՔՀԿ-ների գործունեությունը, որոնց լավ են ճանաչում, որոնց գործունեությունն ավելի տեսանելի է և արդիական խնդիրներին է վերաբերում:

65. ՔՀԿ կայունության ցուցանիշ 2013 - Հայաստան, ՔԶՀՀ/ԱՄՆ ՄԶԳ, հունիս, 2014թ.

Ամփոփելով նշենք, որ թեև ՔՀԿ-ներն ու ՋԼՄ-ները սերտ հարաբերություններ են հաստատել, ՔՀԿ գործունեության լուսաբանումը բավարար չէ ՔՀԿ-ների տեսանկյունից ապահովման և նրանց հանդեպ վստահության խթանման համար: Մյուս կողմից՝ ՔՀԿ-ները ՋԼՄ-ների հետ աշխատանքում ռազմավարական մոտեցում չեն կիրառում՝ ավելի արդյունավետ համագործակցություն ապահովելու համար, և սակավաթիվ են այն ՔՀԿ-ները, որոնք ՋԼՄ-ներին դիտարկում են որպես ոչ միայն իրագեղման միջոց, այլև ռազմավարական գործընկեր ծառայությունների մատուցման գործում և շահերի պաշտպանության քարոզարշավներում:



# ՔՀԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ


Ֆինանսական կայունությունը սահմանվում է որպես կազմակերպության գործունեության համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների տարբերակված աղբյուրների շարունակական առկայություն: Աղբյուրների բազմազանությունը ֆինանսական կայունության առանցքային նախապայման է, քանի որ այն հնարավորություն է տալիս կախված չլինել ֆինանսավորման մեկ աղբյուրից՝ այսպիսով նվազագույնի հասցնելով դոնորների նախընտրությունների փոփոխությունների կամ այլ արտաքին գործոնների հետևանքով առաջացած ռիսկերը:

## Հայաստանի ՔՀԿ-ների ֆինանսական կայունության համապատկերը

Ոլորտային զեկույցներն ու վերլուծությունները և «ՍՈՑԻՈՄԵՏՐ» կենտրոնի 2014 թ. հետազոտության տվյալները վկայում են, որ ֆինանսական կայունությունը Հայաստանի ՔՀԿ-ների ամենաառաջնային խնդիրն է:

Համաձայն 2013 թ. ՔՀԿ կայունության ցուցանիշի՝ Հայաստանի ՔՀԿ-ների ֆինանսական կայունությունը գնահատվում է 5,2 միավոր՝ յոթ նիշանոց սանդղակով, որտեղ 1-ը ամենաբարձր, իսկ 7-ը ամենացածր ցուցանիշն է: Այս ցուցանիշը գտնվում է «Կայունությունը վտանգված է» հատվածում և Հայաստանի ՔՀԿ կայունության ցուցանիշի յոթ ոլորտների ցուցանիշներից ամենացածրն է: Ընդ որում, վերջին 5 տարիների ընթացքում որևէ աճ չի արձանագրվել այս ուղղությամբ:

Գծապատկեր 7. Ֆինանսական կայունության ցուցանիշի դինամիկան՝ ըստ ՔՀԿ կայունության ինդեքսի



Աղբյուր՝ ՔՀԿ կայունության ցուցանիշ 2013 - Հայաստան

Հետազոտության տվյալները ևս հաստատում են այս պատկերը: Հարցման մասնակցած ՔՀԿ-ների 44%-ը Հայաստանում ՔՀԿ ֆինանսական կայունության վիճակը գնահատել է «վատ», իսկ 26,7%-ը պատասխանել է, որ այն գոյություն չունի<sup>66</sup>: Պատասխանելով այն հարցին, թե որոնք

66. «ՍՈՑԻՈՄԵՏՐ» անկախ սոցիոլոգիական կենտրոնի իրականացված ուսումնասիրություն՝ «Եվրոպական ինտեգրացիա» ՀԿ հետ համատեղ, ԵՄ ֆինանսական աջակցությամբ, Երևան, 2014թ.

են կազմակերպությանը հանդիպող հիմնական դժվարությունները՝ հարցված ՔՀԿ-ների 68%-ը նշել է ֆինանսական խնդիրները: Հաջորդ առավել հաճախ նշված տարբերակն է պետական օղակների հետ բանակցությունները, այնուհետև մասնագետների սակավությունը և տարածքի/գրասենյակի բացակայությունը: Կարելի է ենթադրել, որ վերջին երկու խնդիրները ևս կապված են ֆինանսական ռեսուրսների հետ, հետևապես ֆինանսական կայունությունը թիվ մեկ խնդիրն է ՔՀԿ-ների համար: ՀԿ-ների գնահատմամբ իրենց մարդկային ռեսուրսները խիստ սահմանափակ են և չեն բավարարում նախանշված աշխատանքների իրականացման համար, քանզի արհեստավարժ աշխատակազմի համար ավելի շատ ֆինանսական միջոցներ են պետք: Ավելին՝ այն աշխատակազմը, որը սահմանափակ ֆինանսական ռեսուրսների պայմաններում զարգացում է իր մասնագիտական հմտությունները, վերջիվերջո նախընտրում է փոխել սիրված աշխատանքը առավել շատ վարձատրվողի հետ: Այս բոլոր խնդիրները փոխկապակցված են, քանզի արհեստավարժ աշխատակազմի բացակայությունը նորից բերում է ֆոնդի հայթայթման հմտությունների պակասին:

ՔՀԿ-ների 6,7%-ը խնդիրների շարքում նշել է ֆոնդի հայթայթման հմտությունների պակասը՝ այդպիսով հասցեագրելով ֆինանսական խնդիրների պատճառներից մեկը: Փորձագետները նշում են, որ Հայաստանի ՔՀԿ-ները առհասարակ չափից ավելի են կենտրոնանում ֆինանսական դժվարությունների վրա՝ դրանց պատճառները փնտրելու և համապատասխան լուծումներ գտնելու փոխարեն<sup>67</sup>:

## ՔՀԿ ֆինանսավորման աղբյուրները

Հայաստանի ՔՀԿ-ների ֆինանսական կայունության առանձնահատկությունները ավելի լավ հասկանալու համար դիտարկենք նրանց եկամուտի աղբյուրները:

Ջոն Հովիքինսի համալսարանի կողմից իրականացված ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ողջ աշխարհում ՔՀԿ-ների եկամուտների երեք կարևորագույն աղբյուրները ծառայությունների դիմաց ստացվող

վճարներն են (53%), կառավարության ֆինանսավորումը (34%) և մասնավոր նվիրատվությունները կամ բարեգործությունը (12%)<sup>68</sup>:

Հայաստանում պատկերը կտրականապես այլ է: Ըստ հետազոտության արդյունքների՝ ՔՀԿ-ների ֆինանսավորման հիմնական աղբյուրը միջազգային կազմակերպություններն են (75,3%), որոնք առավել հաճախ նշվել են նաև որպես ֆինանսավորման առաջնային աղբյուր (67,3%): Նշումների հաճախականությամբ երկրորդ տեղում են անդամավճարները և նվիրատվությունները (համապատասխանաբար 26,7% և 26,6%): Ինչ վերաբերում է վճարովի ծառայություններից ստացած գումարներին, ապա այն որպես ֆինանսավորման առաջնային աղբյուր ամենևին չի նշվել, իսկ բոլոր նշված աղբյուրների շարքում ամենասակավ հիշատակվածն է (13 ՔՀԿ կամ ՔՀԿ-ների 8,7%-ը)<sup>69</sup>:

### Աղյուսակ 16. Ուսումնասիրված ՔՀԿ-ների վերջին երեք տարվա ֆինանսավորման հիմնական 3 աղբյուրները

	I	II	III	անգամ	%
Միջազգային					
1 կազմակերպություններ, օտարերկրյա դոնորներ	67.3	6.0	2.0	113	75.3
2 Անդամավճար	6.7	14.7	5.3	40	26.7
3 Կառավարության միջոցներ	5.3	6.7	2.0	21	14
4 Տնտեսվարող սուբյեկտներ (գործարարներ)	2.0	5.3	2.7	15	10
5 Նվիրատվություններ	7.3	11.3	8.0	40	26.6
6 Ծառայությունների մատուցում	0	6.0	2.7	13	8.7
7 Այլ	5.3	2.7	1.3	14	9.3

Աղբյուր՝ «ՍՈՑԻՈՍԵՏՐ» կենտրոնի հարցման տվյալներ, 2014 թ.

Ստորև ներկայացնենք ֆինանսավորման աղբյուրներից յուրաքանչյուրի առանձնահատկությունները:

67. «Երիտասարդական կազմակերպությունների քարտեզագրում և պետության կողմից ֆինանսավորվող երիտասարդական դրամաշնորհային ծրագրերի արդյունավետության գնահատում» հետազոտության զեկույց, Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտ, Երևան, 2014թ.

68. Salamon, Sokolowski and Associates, Global Civil Society, Dimensions of the Non profit Sector, Volume 2; 2004: Ուսումնասիրությունն անցկացվել է աշխարհի 36 պետություններում՝ ինչպես զարգացող, այնպես էլ զարգացած:

69. «ՍՈՑԻՈՍԵՏՐ» անկախ սոցիոլոգիական կենտրոնի իրականացված ուսումնասիրություն՝ «Եվրոպական ինտեգրացիա» ԳԿ հետ համատեղ, ԵՍ ֆինանսական աջակցությամբ, Երևան, 2014թ.





## Միջազգային կազմակերպություններ

Միջազգային կազմակերպությունները դեռևս շարունակում են մնալ հաստատանյալ ԲՀԿ-ների հիմնական ֆինանսական աղբյուրը: Խորհրդային համակարգի փլուզումից հետո տարածաշրջան ներթափանցեցին միջազգային ֆինանսական հոսքերը՝ նպատակ ունենալով աջակցել քաղաքացիական հասարակության զարգացմանը, և, քանզի հետխորհրդային երկրներում պետական աջակցության կամ օժանդակության այլ ձևերը, ինչպիսիք են անհատական նվիրատվությունը կամ կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը, գործնականում բացակայում էին, միջազգային ֆինանսավորումը Հայաստանի ԲՀԿ-ների համար եկամտի հիմնական աղբյուր դարձավ<sup>70</sup>: Հայաստանում գործող միջազգային դոնորները ներառում են նախ և առաջ պետական կառույցներ, ինչպիսիք են ԱՄՆ ՄԶԳ-ն, Կանադայի միջազգային զարգացման գործակալությունը, Նորվեգիայի և ԱՄՆ դեսպանատները և Եվրամիությունը: Բացի այդ՝ մի շարք այլ ոչ պետական կազմակերպություններ, ինչպիսիք են «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանը», «Վորլդ Վիժն Հայաստանը» և «Օքսֆամ Հայաստանը», նույնպես դրամաշնորհներ են տրամադրում ԲՀԿ-ներին քաղաքականության հետ կապված աշխատանքի, զարգացման գործունեության և ծառայությունների մատուցման համար<sup>71</sup>:

Ինչպես երևում է վերը ներկայացված աղյուսակից, դոնորների կողմից ֆինանսավորման գերակայությունը հաստատվում է նաև հետազոտության տվյալներով: Հարցման ընթացքում որպես ԲՀԿ-ների ֆինանսավորման հիմնական աղբյուր 227 անգամ նշվել են տարբեր միջազգային կառույցներ, մինչդեռ տեղական աղբյուրներ նշվել են ընդամենը 52 անգամ:

Աղյուսակ 17. ԲՀԿ ֆինանսավորման աղբյուրները՝ ըստ տեսակների

Աղբյուր	Քանակ	%
<b>Արտասահմանյան</b>		
Ամերիկյան կազմակերպություններ	74	26.1%
Համաշխարհային կազմակերպություններ	56	19.8%
Եվրոպական կազմակերպություններ	50	17.7%
Դեսպանատներ	17	6.0%
Այլ արտասահմանյան կազմակերպություններ և / կամ մասնաճյուղեր	23	8.1%
Այլ օտարերկրյա կառավարություններ	7	2.5%
<b>Ընդամենը Տեղական</b>	<b>227</b>	<b>80.2%</b>
ՀՀ նախարարություններ, նախագահ	13	4.6%
Հայաստանյան կազմակերպություններ	14	4.9%
Հայաստանյան գործարարներ	8	2.8%
ՏԻՄ	8	2.8%
Բարերարներ	5	1.8%
Բնակչության միջոցներ	2	0.7%
Սեփական միջոցներ	1	0.4%
Սփյուռք	1	0.4%
<b>Ընդամենը</b>	<b>52</b>	<b>18.4%</b>
Այլ	4	1.4%
<b>Ընդամենը</b>	<b>283</b>	<b>100.0%</b>

Աղբյուր՝ «ՍՈՑԻՈՍԵՏՐ» կենտրոնի հարցման տվյալներ, 2014 թ.

Այսպիսով՝ արտասահմանյան աղբյուրները ԲՀԿ-ների ֆինանսավորման գերակշռող մասն են կազմում: Վտանգ կա, որ կախվածություն ունենալով դոնորից՝ ԲՀԿ-ները չեն կարողանում իրականացնել իրենց առաքելությունից բխող գործունեություն, քանի որ ավելի խոցելի են ֆինանսավորող կազմակերպության օրակարգի փոփոխությունների հանդեպ: Ֆինանսավորման աղբյուրների բազմազանության պակասը հանգեցնում է կայունության նվազմանը, չեզոքության ու պրոֆեսիոնալիզմի պակասի, քանի որ ԲՀԿ-ներին ստիպում է հետամուտ ցանկացած դրամաշնորհային նախագծի: Մինևույն ժամանակ հայաստանյան

70. Մ. Թադևոսյան և Լ. Հակոբյան, Հայաստանի ԲՀԿ-ների ֆինանսական կենսունակությունը. կախվածությունից՝ ինքնավարություն, «Քաունթերփարթ ինթերնեշնլ» և CIVICUS. Քաղաքացիական մասնակցության համաշխարհային միավորում, Երևան, 2010թ.

71. ԲՀԿ կայունության ցուցանիշ 2013 - Հայաստան, ԶԶՀ/ԱՄՆ ՄԶԳ, հունիս, 2014թ.

ԲՀԿ-ների համար արտաքին ֆինանսավորումը աստիճանաբար ավելի է դժվարանում մի շարք միտումների հետևանքով, ինչպես, օրինակ, տարածաշրջանում դրամաշնորհային ֆինանսավորման և դոնոր կազմակերպությունների քանակի նվազումը, դոնոր կազմակերպությունների մեծամասնության կողմից կազմակերպության հիմնական ծախսերի ֆինանսավորման դժվարությունը, որի արդյունքում ԲՀԿ-ները ստիպված են ֆինանսական միջոցներ հայթայթել կարճաժամկետ ծրագրերի համար՝ իրենց առաքելությանն ուղղված երկարաժամկետ ազդեցության վրա կենտրոնանալու փոխարեն<sup>72</sup>:

## Պետական ֆինանսավորում

Ինչպես նշվեց, պետական միջոցները ողջ աշխարհում ԲՀԿ-ների ֆինանսավորման նշանակալի աղբյուր են: Հայաստանում, սակայն, ԲՀԿ-ների միայն 14% է նշել պետական ֆինանսավորումը՝ որպես վերջին երեք տարում ֆինանսավորման հիմնական աղբյուրներից: ԲՀԿ-ներին տեսականորեն կարող է տրամադրվել երկու տիպի պետական ֆինանսավորում՝ դրամաշնորհներ և ծառայությունների մատուցման պայմանագրեր:

Դրամաշնորհների պարագայում կառավարությունը մատնանշում է խնդիրը (կամ ոլորտը), իսկ ԲՀԿ-ն համապատասխան լուծումներ է առաջարկում: Ծրագրերի առանձին տիպերի համար կառավարությունը ֆինանսավորման ծավալի որոշակի վերին շեմ է սահմանում, սակայն կոնկրետ ծրագրի դրամաշնորհի չափը կախված է առաջարկվող գործողություններից: 2012 թ.-ին ԲՀԿ-ներին հատկացված պետական ֆինանսավորումը կազմել է 7,4 մլրդ ՀՀ դրամ (մոտ 18 մլն ԱՄՆ դոլար)<sup>73</sup>: Ըստ «Պրոֆեսիոնալները՝ հանուն քաղաքացիական հասարակության» ՀԿ հետազոտության՝ պետական ֆինանսավորման զգալի մասնաբաժինը հատկացվում է պետության կողմից հիմնադրված հիմնադրամներին և սպորտային ֆեդերացիաներին: Երբեմն ֆինանսավորումը հատկաց-

վում է բյուջեի «պետական ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսավորման» տողով, թեև այդ կազմակերպությունները գրանցված չեն որպես պետական: Ըստ այս զեկույցի և ոլորտային այլ վերլուծությունների՝ պետական մարմինների մեծ մասը դեռևս ֆինանսավորման հստակ մեխանիզմ չունի, դրամաշնորհների հատկացումը մրցութային սկզբունքով չի իրականացվում, իսկ պետական ֆինանսավորմամբ ծրագրերի համար չկա ընտրության, մոնիթորինգի և գնահատման որևէ ստանդարտ համակարգ:

Այսպես թե այնպես, վերջին 3 տարիների ընթացքում կարելի է արձանագրել որոշ դրական տեղաշարժ՝ թափանցիկության, տարբեր ոլորտներ ներառելու և հաշվետվողականության տեսանկյունից: Օրինակ, եթե նախկինում դրամաշնորհները ստացած կազմակերպությունների մասին որևէ հաշվետվություն չկար, ապա 2010 թ.-ից սկսած՝ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը առցանց համակարգ է ստեղծել, որտեղ յուրաքանչյուր եռամսյակ տեղադրվում են դրամաշնորհային մրցույթի հայտարարությունները և նախորդ եռամսյակի մրցույթի արդյունքները: Սկսած 2013 թ.-ից՝ Հայաստանի երիտասարդական հիմնադրամը ևս՝ որպես ՀՀ նախագահի գրասենյակի դրամաշնորհների տրամադրման համար ընտրված գործընկեր կազմակերպություն, իր կայքում տեղադրում է դրամաշնորհային մրցույթի հայտարարությունը և հաղթող ճանաչված ԲՀԿ-ների ցուցակները: Այս երկու դեպքում էլ դրամաշնորհային ծրագրերի ընտրությունը իրականացվում է ԲՀԿ ներկայացուցիչների ներգրավմամբ:

Այնուամենայնիվ, այս կառույցները ավելի շուտ բացառություն են ընդհանուր դաշտում, քանի որ մյուս նախարարությունների և գերատեսչությունների կողմից ԲՀԿ ֆինանսավորման տվյալները բաց ու մատչելի չեն: Հաճախ պետական մարմինը իր հայեցողությամբ է ընտրում ԲՀԿ-ին՝ անհրաժեշտ ծառայություններ մատուցելու համար, և պայմանագիր կնքում նրա հետ: Այսպես, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը բյուջեի առանձին տող է նախատեսում և դրամաշնորհներ (սուբսիդիաներ) տրամադրում առանձին կազմակերպություններին, որոնց անունները նախապես սահմանված են: Միաժամանակ ԲՀԿ-ներին ծառայությունների մատուցումը պատվիրելու վերաբերյալ որևէ պարտադիր իրավական դրույթ չկա:

Ծառայությունների մատուցման պարագայում պետությունը առաջարկում է ծառայությունների մատուցման տեխնիկական առաջադրանք, որտեղ նկարագրված են ակնկալվող գործունեության շրջանակները: Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ ծառայությունների պատվիրման դեպքում հայտարարվում է մրցույթ, որին կարող են մասնակցել թե՛ մասնավոր

72. Մ. Թադևոսյան և Լ. Հակոբյան, Հայաստանի ԲՀԿ-ների ֆինանսական կենսունակությունը. կախվածությունից՝ ինքնավարություն, «Քաունթերփաթ ինթերնեշնլ» և CIVICUS. Քաղաքացիական մասնակցության համաշխարհային միավորում, Երևան, 2010թ.

73. Քաղաքացիական հասարակության կառույցներին պետական ֆինանսական աջակցության տրամադրման գործընթացի առկա վիճակը և հիմնախնդիրները, Պրոֆեսիոնալները հանուն քաղաքացիական հասարակության, Երևան, 2013թ.



հատվածի կառույցները, թե՛ ՔՀԿ-ները՝ մասնավորապես հիմնադրամները և այն ՀԿ-ները, որոնք հիմնադրել են առևտրային կազմակերպություններ: Մինևույն ժամանակ ՀԿ-ները հաճախ չեն մասնակցում այդ մրցույթներին, որովհետև առկա է տնտեսական գործունեության մեջ ուղղակիորեն ներգրավվելու արգելքը, իսկ առևտրային կազմակերպություն հիմնադրելը լրացուցիչ մարդկային և ֆինանսական միջոցներ է պահանջում:

Մարզային ՔՀԿ-ները շահերի պաշտպանության քարոզարշավներ են նախաձեռնել՝ հորդորելով տեղական իշխանություններին ՔՀԿ ծրագրերի համար տեղական բյուջեից հատկացումներ նախատեսել: Որոշ համայնքներում, օրինակ՝ Վանաձորում, Մարտունիում, Գյումրիում, դա հաջողվել է. ՏԻՄ-երը բյուջեի առանձին տող են ստեղծել տարեկան կտրվածքով ՔՀԿ-ների ծրագրերը ֆինանսավորելու համար: Մասնավորապես 2006 թ.-ին Վանաձորի քաղաքապետարանը առաջին անգամ ՔՀԿ-ների ֆինանսավորման մրցույթ կազմակերպեց, թեև հետագայում այս պրակտիկան ոչ միշտ կիրառվեց ՔՀԿ-ների ոչ հետևողական մոտեցման, ինչպես նաև դրամաշնորհային գումարի փոքր չափի պատճառով, որը բերեց ծրագրային դիմումների պակասին: «Բարեգործության մասին» օրենքը դրույթներ է նախատեսում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից բարեգործական կազմակերպություններին նյութատեխնիկական աջակցություն և դրամական օժանդակություն տրամադրելու վերաբերյալ՝ ներառյալ պետական և համայնքային կազմակերպությունների մատուցած ծառայությունների դիմաց վճարումից, պետական և համայնքային գույքի օգտագործման վարձավճարից լրիվ կամ մասամբ ազատելը<sup>74</sup>: Բազմաթիվ մարզային կազմակերպությունների հնարավորություն է տրվում անվճար օգտագործել համայնքային շինությունները՝ որպես գրասենյակային տարածքներ:

## Մասնավոր նվիրատվություններ և անհատական ներդրումներ

Ինչպես ցույց տվեց Աղյուսակ 16-ը, մասնավոր հատվածի և առանձին բարերարների նվիրատվությունները Հայաստանի ՔՀԿ-ների եկամտի շատ փոքր բաժին են կազմում: Այնուամենայնիվ, այս աղբյուրը մեծ կարևորություն ունի ՔՀԿ ֆինանսական կայունության զարգացման տեսանկյունից: Ըստ «Բարեգործության մասին» ՀՀ օրենքի՝ բարեգործությունը դիտարկվում է որպես ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից կամավոր, անշահախնդիր, օրենքով

չարգելված կարգով ֆիզիկական անձանց, առողջապահական և ոչ առևտրային կազմակերպություններին նյութական կամ հոգևոր աջակցության տրամադրում՝ սահմանված բարեգործական նպատակների իրականացման համար<sup>75</sup>:

Ինչպես նշվել է իրավական միջավայրի վերաբերյալ բաժնում, բարեգործական նվիրատվությունների համար հատկացվող հարկային արտոնությունները բավարար չեն մասնավոր հատվածի համար: Մյուս կողմից՝ գործարարները քիչ են վստահում ՔՀԿ-ներին, կարծում են, որ ՔՀԿ-ներն ունակ չեն արդյունավետ ֆինանսական կառավարում իրականացնել, և գերադասում են ուղղակիորեն աշխատել շահառու խմբերի հետ՝ թեև ՔՀԿ-ների հետ համագործակցելով<sup>76</sup>: ՀԿ կենտրոնի կողմից 2008 թ.-ին իրականացված «Առևտրային կազմակերպությունների բարեգործության փորձառությունը» հետազոտության արդյունքները ևս արձանագրել էին այն երևույթը, որ առևտրային կազմակերպությունները հակված չեն համագործակցելու ՔՀԿ-ների հետ: Չնայած գործարարները գիտակցում են, որ համագործակցելով ՔՀԿ-ների հետ՝ կարող են իրենց նվիրատվություններն առավել նպատակային ուղղորդել և գերծ մսալ կազմակերպչական աշխատանքներից<sup>77</sup>, օրենսդրական խթանիչների բացակայությունն ու վարչարարությունը և ՔՀԿ-ների նկատմամբ վստահության ցածր աստիճանը չեն նպաստում այս գործընկերության կայացմանը: Ներկայումս այս գործոնները շարունակում են կարևոր դեր խաղալ՝ որպես մասնավոր ընկերությունների կողմից ՔՀԿ ֆինանսավորման խոչընդոտ:

Այնուհանդերձ, գիտակցելով, որ օրենսդրությունը բարեգործության համար բավարար խթաններ չի տրամադրում, ՔՀԿ-ներն այդ ուղղությամբ օրենսդրական փոփոխություններ չեն նախաձեռնում: Ըստ հետազոտության տվյալների՝ ՔՀԿ-ների 24,7%-ը ՀՀ բարեգործության մասին օրենքը գնահատում է որպես ՔՀԿ հատվածի համար ոչ բարենպաստ, իսկ հարցված ՔՀԿ-ների 40%-ը տեղեկացված չէ բարեգործության ոլորտի օրենսդրությանը<sup>78</sup>: Այսինքն՝ ՔՀԿ-ներն այնքան էլ չեն հետաքրքրվում տեղական աղբյուրներից նվիրատվությունների համար բարենպաստ

74. ԳՅ օրենք «Բարեգործության մասին», հոդ. 16

75. ԳՅ օրենք «Բարեգործության մասին», հոդ. 3

76. ԲՀԿ կայունության ցուցանիշ 2013 - Հայաստան, ԲՀՀ/ԱՄՆ ՄԶԳ, հունիս, 2014թ.

77. «Բարեգործության փորձառությունը առևտրային հատվածի մոտ», «ՀԿ Կենտրոն» ԲՀԶ ՀԿ/Քառնթերփաթ, Երևան, 2008

78. «ՍՈՑԻՈՍԵՏԻ» անկախ սոցիոլոգիական կենտրոնի իրականացված ուսումնասիրություն՝ «Եվրոպական ինտեգրացիա» ՀԿ հետ համատեղ, ԵՍ ֆինանսական աջակցությամբ, Երևան, 2014թ.

օրենսդրական միջավայրի ձևավորմամբ, թեև այն ուղղակիորեն առնչվում է իրենց ֆինանսական կայունության հիմնախնդրին: Բացի դրանից՝ ՔՀԿ-ները պետք է աշխատեն իրենց վարկանիշի բարելավման ուղղությամբ, որպեսզի առևտրային ընկերությունները իրենց ընկալեն որպես հավասար գործընկերներ. «Ոչ առևտրային կազմակերպություններն իրենք անելիք ունեն՝ իրենց դիրքավորելու այն տեսանկյունից, որ իրենք սոցիալական փոփոխություն խթանող կառույցներ են, որ առևտրային կազմակերպություններն էլ հետաքրքրված լինեն ներդրում անել իրենց այդ պատասխանատվության շրջանակներում. սա իսկապես օրակարգային հարց է» (ՔՀԿ ներկայացուցիչ, Վանաձոր):

Հանրային դրամահավաքի նախաձեռնությունները տարածված չեն Հայաստանի ՔՀԿ-ների շրջանում, թեև վերջին տարիներին ավելի հաճախ են դրամահավաքներ կազմակերպվում: Դրամահավաքի ամենահայտնի միջոցառումը Հայաստան համահայկական հիմնադրամի կողմից կազմակերպվող ամենամյա հեռուստամարաթոնն է, որտեղ գումարի զգալի մաս է ներդնում Սփյուռքի բնակչությունը: Երևանում հանրային դրամահավաքի միջոցառումներն ավելի շատ են տարածված, թեև մարզերում ևս որոշ հաջող նախաձեռնություններ են իրականացվում: Օրինակ՝ «Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ-ի մարզային կենտրոնների կողմից կազմակերպված փողոցային դրամահավաքն ուղղված էր կոնկրետ համայնքային խնդիրների լուծմանը և համարյա բոլոր համայնքներում հաջողություն ունեցավ:

Մասնավոր նվիրատվությունները հետազոտության մեջ ընդգրկված ՔՀԿ-ների մոտ մեկ երրորդի (26,6%) համար ծառայում են որպես ֆինանսավորման աղբյուր<sup>79</sup>: Սակայն, ինչպես փաստում են հետազոտությունները, այս նվիրատվությունների գումարը շատ փոքր է. հաճախ ՔՀԿ ղեկավարներն ու անդամները հենց իրենց անձնական միջոցներն են ներդնում կազմակերպության հիմնական ծախսերը հոգալու համար<sup>80</sup>, այդ իսկ պատճառով մասնավոր նվիրատվությունները ՔՀԿ-ների մեծ մասի համար չեն ծառայում որպես ֆինանսական կայունության հիմք:

79. «ՍՈՑԻՈՄԵՏՐ» անկախ սոցիոլոգիական կենտրոնի իրականացված ուսումնասիրություն՝ «Եվրոպական ինտեգրացիա» ԴԿ հետ համատեղ, ԵՄ ֆինանսական աջակցությամբ, Երևան, 2014թ.

80. «Երիտասարդական կազմակերպությունների քարտեզագրում և պետության կողմից ֆինանսավորվող երիտասարդական դրամաշնորհային ծրագրերի արդյունավետության գնահատում» հետազոտության զեկույց, Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտ, Երևան, 2014թ.

## Անդամավճարներ

Հայաստանի ՔՀԿ-ների համար անդամավճարները ֆինանսական կայունության նշանակալի աղբյուր չեն: Թեև հետազոտության մեջ ընդգրկված ՔՀԿ-ների 26,7%-ը նշում է անդամավճարները՝ որպես իրենց կառույցների համար վերջին 3 տարիների հիմնական ֆինանսական աղբյուրներից, հետազոտությունները ցույց են տալիս, որ անդամավճարներից ստացված գումարը շատ չնչին է և չի կարող հոգալ անգամ կազմակերպության վարչական ծախսերը: Այսպես, երիտասարդական կազմակերպությունների վերաբերյալ հետազոտության զեկույցում նշվում է, որ կազմակերպությունների 7,4%-ը անդամավճարը նշել է որպես եկամտի աղբյուր, սակայն այս եկամտի ծավալը կազմում է ՔՀԿ-ների միջին տարեկան բյուջեի 0,3%-ը<sup>81</sup>: Ի լրումն՝ անդամավճարները լրացուցիչ թղթավարություն են պահանջում հաշվապահական համակարգում, որի պատճառով բազմաթիվ ՔՀԿ-ներ նախընտրում են չօգտվել այս աղբյուրից: Այն կազմակերպությունները, որոնք ծառայություններ են մատուցում հենց իրենց անդամների համար կամ անդամներին ներգրավում են ծրագրերի մեջ, ավելի արդյունավետ են կարողանում անդամավճարներ հավաքել: Նրանք անդամավճարների հավաքագրումը կարևորում են ոչ այնքան ֆինանսական ռեսուրսների ապահովման տեսանկյունից, որքան որպես անդամների համախմբման գործիք:

## Վճարովի ծառայություններ

Ինչպես արդեն նշվել է, Հայաստանում հասարակական կազմակերպությունները չեն կարող վճարովի ծառայություններ մատուցել և պետք է ՄԳԸ հիմնադրեն՝ ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու համար: Սակայն քիչ կազմակերպություններ են ՄԳԸ ստեղծում, քանի որ, ինչպես նշում են ՀԿ-ները, նրանք լրացուցիչ կառույց վարելու և պահելու համապատասխան ռեսուրսներ չունեն, առավել ևս, որ բոլոր ծախսերը հոգալուց և հարկերը վճարելուց հետո կազմակերպության կարիքներին ուղղելու համար որևէ շահույթ գործնականում չի մնում: Իրենց ձեռնարկության գործունեության համար ՔՀԿ-ները հիմնականում

81. «Երիտասարդական կազմակերպությունների քարտեզագրում և պետության կողմից ֆինանսավորվող երիտասարդական դրամաշնորհային ծրագրերի արդյունավետության գնահատում» հետազոտության զեկույց, Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտ, Երևան, 2014թ.




օգտագործում են իրենց մարդկային և նյութական ռեսուրսները, որի պատճառով փոխակերպման է ենթարկվում կառույցի ինքնությունը՝ թե՛ գործելաճճի, թե՛ միջավայրի տեսանկյունից, քանզի դժվար է դառնում հստակ տարանջատել բիզնես մտածողությունն ու գործելակերպը քաղաքացիականից: Այս մտահոգությունը ևս ծառայում է որպես ձեռնարկություն ստեղծելու խոչընդոտ:

Այնուամենայնիվ, որոշ ՔՀԿ-ներ կիրառում են այս մոդելը՝ որպես իրենց ծառայությունները հանրության առավել լայն շրջանակներին մատուցելու և հանրայնացնելու հնարավորություն: Ֆոկուս-խմբային քննարկման մասնակիցներից մեկը, ընդունելով, որ սոցիալական ձեռնարկության գործառնության համար մի շարք խոչընդոտներ կան, այսպես նկարագրեց իր կազմակերպության փորձառությունը. «Մենք ստեղծել ենք սոցիալական ձեռնարկություններ, որոնց հիմնական նպատակը, բնականաբար, մեր շահառու կանանց ապահովելն է որոշակի աշխատանքով և մշտական եկամտով, և իրենք էլ արդեն գիտակցում են, որ ոչ միայն զուտ աշխատում են և վերջ, իրենք իրենց եկամտի տերն են դառնում, այլև դրանից մասհանում են կատարում համայնքին, համայնքային ծրագրի իրականացմանը, որը հենց սոցիալական ձեռնարկության իմաստն է: Եվ սրանով նաև մենք որոշակի շարունակականություն ենք կարողանում ապահովել [կազմակերպության համար]՝ այս մասով դառնալով նաև կայուն» (ՔՀԿ ներկայացուցիչ, Երևան):

Մի շարք սոցիալական ձեռնարկություններ են հիմնադրվել միջազգային կազմակերպությունների աջակցությամբ. օրինակ՝ ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով» ծրագրի շրջանակներում «Մեյվ դը չիլդրեն» կազմակերպությունը աջակցել է ՔՀԿ-ներին սոցիալական ձեռնարկությունների ստեղծման գործում, որտեղ հաշմանդամություն ունեցող մարդիկ ներգրավված են որպես աշխատակիցներ:

Այսպիսով՝ ֆինանսական կայունությունը շարունակում է նշանակալի խնդիր մնալ հայաստանյան ՔՀԿ-ների համար՝ խոչընդոտելով թե՛ կազմակերպությունների ռազմավարական զարգացմանը, թե՛ կառույցների՝ որպես զարգացման գործընթացում լիիրավ գործընկեր հանդես գալու հնարավորությանը և թե՛ շահառուամետ քաղաքականության վարմանը, որը կնպաստեր հասարակության վստահության ձևավորմանն ու հանրային վարկանիշի բարձրացմանը:




# ՔՀԿ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

## Քաղաքականության ձևավորման և շահերի պաշտպանության գործընթացում ՔՀԿ մասնակցության ընդհանուր նկարագիր

Հայաստանի ՔՀԿ-ները զգալի հաջողություններ են գրանցել շահերի պաշտպանության բնագավառում: Ըստ ՔՀԿ կայունության ցուցանիշի՝ շահերի պաշտպանությունը ՔՀԿ կայունության յոթ ոլորտներից ամենաբարձրն է գնահատվում և 2013 թ. բարելավվել է՝ կազմելով 3,3՝ նախորդ տարվա 3,4-ի համեմատ:

Գծապատկեր 8. Շահերի պաշտպանության ցուցանիշի դինամիկան՝ ըստ ՔՀԿ կայունության ինդեքսի



Աղբյուր՝ ՔՀԿ կայունության ցուցանիշ 2013 - Հայաստան

Ընդհանուր առմամբ, ՔՀԿ-ները կարողանում են ներգրավվել քաղաքականության երկխոսության գործընթացում, համախմբել համախոհներին և շահերի պաշտպանության քարոզարշավներ կազմակերպել, թեև նրանց ոչ միշտ է հաջողվում ազդեցություն ունենալ: ՔՀԿ-ները որոշակի խնդիրների շուրջ կոալիցիաներ են կազմում՝ քաղաքականություն փոխելու կամ իրենց կողմից բացասական համարվող փոփոխություններին ընդդիմանալու նպատակով: Բազմաթիվ կազմակերպություններ ներգրավվում են ընտրությունների դիտարկման գործընթացում: Մի քանի թինկ-թանկեր իրականացնում են քաղաքականության վերլուծություններ, սակայն ՔՀԿ-ների սովոր մասը քաղաքականության պրոֆեսիոնալ վերլուծության կարողություն չունի: Առավել հաջողված քաղաքական երկխոսությունները, որպես կանոն, իրականացվում են միջազգային կազմակերպությունների համագործակցությամբ:

Ըստ դոնոր կազմակերպությունների՝ մարզերում տեղական ՀԿ-ների ծավալած՝ հանրային շահերի պաշտպանության աշխատանքը արդյունավետ է տեղական խնդիրները լուծելու առումով, սակայն ավելի բարձր մակարդակի բարեփոխումներ իրականացնելուն ուղղված ջանքերը բավականին հավակնոտ են և ոչ միշտ են տանում դեպի խնդիրների լուծում<sup>82</sup>: Այսինքն՝ ՔՀԿ-ների՝ շահերի պաշտպանության գործունեության իրական ազդեցությունը սահմանափակ է թե՛ ծավալի, թե՛ մակարդակի, թե՛ տևողության առումով: CIVICUS քաղաքացիական հասարակության ինդեքսի արագ գնահատման արդյունքները հաստատում են այս միտումը: Ըստ այդ հետազոտության փորձագետների՝ վերջին հինգ տարիների փորձը ցույց է տվել, որ հետևողական պայքարի դեպքում քաղաքացիական հասարակությունը կարող է հաջողության հասնել: Այնուամենայնիվ, նրանք նշել են, որ դիտարկված հաջողությունները

82. Հայաստանի հասարակական կազմակերպությունների զարգացման հնարավորությունները և ռիսկերը, «Թրամափարենսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոն, Երևան, 2011թ.



համակարգային փոփոխությունների չեն բերել, այլ ավելի շուտ ժամանակավոր լուծումներ են հանդիսացել, իսկ ՔՀԿ հատվածի ներուժն ավելի շատ ուղղվել է խնդիրների հետևանքների վերացմանը, այլ ոչ թե խորքային պատճառների լուծմանը<sup>83</sup>: Ֆոկուս-խմբային քննարկման մասնակիցներից մեկը նշում է, որ քաղաքականության վրա ներազդեցության կարողությունը հաճախ կախված է իշխանությունների մոտիվացիայից. *«Բոլոր հնարավոր ռեֆորմները, բոլոր հնարավոր համագործակցությունները, ՔՀԿ-ների հետ բոլոր հնարավոր այլ հարաբերությունները իշխանությունը դիտարկում է իշխանությունը պահպանելու և վերարտադրելու համարելքսպում: Իմ խոր համոզմամբ, այն ամենը, ինչ առաջ է գնում, տեղի է ունենում այդ վերլուծության արդյունքում, որ սա իրենց չի վստահում, հա՛, բերե՛ք այս ռեֆորմը անենք: Եթե չի տեղավորվում, զանազան գործիքներով, սկսած ուղղակի մերժումով, չհիշելով, չհրավիրելով, մասնակցությունը բացառելով, վերջացրած մանիպուլյացիաներով, իմփրացիաներով [չեն ընդունում]»* (ՔՀԿ ներկայացուցիչ, Գյումրի): Մեկ այլ մասնակից կարծում է, որ ՔՀԿ մոտեցումը ներազդեցության համար առանցքային նշանակություն ունի. *«Ես որոշ ժամանակահատված պետական համակարգում եմ աշխատել, ինքս իմ փորձով ականատես եմ եղել ՀԿ-ների ազդեցությունը պետական համակարգի մարմինների վրա: Դա ակնհայտ փաստ է: Եվ շարք դեպքերում փարիսիների ընթացքում հարգանքը և լրջությունը անել է ՀԿ-ների ճիշտ, ճշգրիտ, հավասարակշռված գործողությունների նկատմամբ»* (ՔՀԿ ներկայացուցիչ, Երևան): Ընդ որում, քննարկումների մասնակիցները նշում են, որ քաղաքականության մշակման ոլորտում ՔՀԿ ազդեցության խոչընդոտները հստակ փոխկապակցված են շահերի պաշտպանության քարոզարշավի ծավալի ու առարկայի հետ, այն առումով, թե արդյո՞ք դրանք պաշտոնյաների շահերին համահունչ են, թե՛ հակառակը: Այս երևույթն առավել արտահայտված է իրավապաշտպան կազմակերպությունների աշխատանքի և բողոքի շարժումների դեպքում. նրանք կարող են զգալի ճնշման ենթարկվել, եթե ընդհարվում են իշխանություն կրողների գործարար կամ իշխանական շահերին:

CIVICUS-ի բնակչության հարցումը ցույց է տալիս, որ մարդիկ թերահավատ են քաղաքացիական հասարակության՝ քաղաքականության վրա ներազդեցության հարցում: Հարցվողների մոտ 58%-ը նշում է, որ քաղաքացիական հասարակությունը, ընդհանուր առմամբ, սահմանափակ ազդեցություն ունի կամ ոչ մի ազդեցություն չունի քաղաքականության

83. CIVICUS Civil Society Index Rapid Assessment: Armenia Country Report, Yerevan, 2014  
84. CIVICUS Civil Society Index Rapid Assessment: Armenia Country Report, Yerevan, 2014

ձևավորման գործընթացում, 27%-ը նշում է, որ կա զգալի կամ որոշակի շոշափելի ազդեցություն, իսկ 15%-ը դժվարացել է պատասխանել<sup>84</sup>: Նույն հետազոտության շրջանակներում հարցված փորձագետները կարծիք են հայտնել, որ երբեմն ՔՀԿ-ները բավարար փորձագիտություն չունեն, երբեմն էլ իշխանությունների կողմից քաղաքական կամքի պակասը խոչընդոտում է քաղաքականության փոփոխության ուղղությամբ գործադրվող ջանքերի հաջողությանը: Ընդհանուր առմամբ, նշվում է, որ ՔՀԿ-ները կարողանում են գնահատումներ իրականացնել, բացահայտել օրենսդրական բացերը և հիմնավորված առաջարկություններ կատարել, բայց հանրությունը տեղյակ չի լինում՝ արդյո՞ք այդ առաջարկները տեղ հասնում են, թե՛ ոչ:

## Քաղաքականության ձևավորման գործընթացում ՔՀԿ մասնակցության և շահերի պաշտպանության փորձը և առկա ինստիտուցիոնալ մեխանիզմները

Հանրային քաղաքականության ձևավորման գործընթացում ՔՀԿ-ների մասնակցության համար մի շարք հնարավորություններ են ընձեռված: Խոսքի և հավաքների ազատությունները ապահովում են կարծիք արտահայտելու՝ ՔՀԿ-ների իրավունքը, բացի այդ՝ պետական և տեղական իշխանությունների հետ համագործակցության և երկխոսության մի շարք մեխանիզմներ և կանոնակարգումներ կան, որոնք ՔՀԿ-ներին հնարավորություն են տալիս դառնալու հանրային քաղաքականության ձևավորման լիարժեք մասնակից:

«ՍՈՑԻՈՄԵՏՐ» կենտրոնի իրականացրած՝ ՔՀԿ-ների հարցման շրջանակներում ուսումնասիրվել են այն գործիքները, որոնք ՔՀԿ-ներն օգտագործում են իրենց նպատակներին հասնելու համար: Ըստ հարցման արդյունքների՝ ՔՀԿ-ների մեծամասնությունը կանոնավոր կերպով օգտագործում է հիմնախնդրի վերլուծությունը, հետազոտությունների և զեկույցների պատրաստումը՝ տեղեկատվության տարածման հետ զուգահեռ: Այսինքն՝ իրենց թիրախ լսարանին հասնելու համար ՔՀԿ-ները մեծ մասամբ միակողմանի գործունեություն են ծավալում: Քաղաքացիական կրթությունը և օգտագործվում է ՔՀԿ-ների մեծամասնության կողմից, թեև ավելի փոքր հաճախականությամբ:

Աղյուսակ 18. Ի՞նչ չափով եք կիրառում հետևյալ գործիքները՝ ձեր նպատակներին հասնելու համարև առկա ինստիտուցիոնալ մեխանիզմները

	կանոնավոր	հաճախ	հազվադեպ	երբեք	չգիտեմ/դՊ
Հիմնախնդրի վերլուծություն, հետազոտությունների և զեկույցների պատրաստում	53.3	25.3	9.3	4.7	7.4
Տեղեկատվության տարածում	46	36	8.7	4	5.3
Քաղաքացիների ուսուցում (թրեյնինգներ, հանրային արշավներ և այլ միջոցներ)	28	38	20	8	6
Հանրային արշավներ և միջոցառումներ / գործողություններ	16.7	32.7	22	16	12.7

Աղբյուր՝ «ՍՈՑԻՈՍԵՏՐ» կենտրոնի հարցման տվյալներ, 2014 թ.

ՔՀԿ-ների մոտ կեսը նշում է, որ կանոնավոր կամ հաճախ հանրային արշավներ և այլ հանրային միջոցառումներ է կազմակերպում: Նման գործունեությունը սովորաբար ծավալվում է շահերի պաշտպանության քարոզարշավների շրջանակներում և հիմք է ծառայում որոշում կայացնողների վրա ներազդելու համար: Մինևույն ժամանակ մասնակցությունը քաղաքականության երկխոսությանը այնքան էլ տարածված չէ ՔՀԿ-ների շրջանում: ՔՀԿ-ների կեսը առնվազն երբեմն օգտագործում է քաղաքական երկխոսությունը քաղաքականության ցիկլի տարբեր փուլերում:

Աղյուսակ 19. Ի՞նչ չափով եք կիրառում քաղաքական երկխոսությունը՝ ձեր նպատակներին հասնելու համար (%)

	կանոնավոր	հաճախ	հազվադեպ	երբեք	չգիտեմ/դՊ
քաղաքականության նախնական փուլում	14	24.7	10.7	25.3	25.4
քաղաքականության մշակման փուլում	15.3	23.3	10.7	24	26.7
քաղաքականության իրականացման փուլում	13.3	24	10.7	26	26
քաղաքականության մոնիթորինգի և գնահատման փուլում	10	20.7	10	30.7	28
գործընկերության ստեղծման շրջանակում	13.3	20.7	10	28	28
«կլոր սեղանների» կազմակերպման միջոցով	22	28.7	8	22.7	18.7
աշխատանքային խմբերի միջոցով	16.7	22.7	11.3	27.3	22
չալանավորված հանրահավաքների միջոցով	2	9.3	11.3	51.3	26
ծառայությունների մատուցման շրջանակում	15.3	18	10	34	22.7

Աղբյուր՝ «ՍՈՑԻՈՍԵՏՐ» կենտրոնի հարցման տվյալներ, 2014 թ.

Հարկ է նշել, որ քաղաքական երկխոսության մեխանիզմի օգտագործման հարցում նկատելի տարբերություն կա Երևանի և մարզային ՔՀԿ-ների պատասխանների միջև: Երևանյան ՔՀԿ-ների միջինում մոտ 27%-ը նշել է, որ կանոնավոր ընդգրկվում է քաղաքականության երկխոսության գործընթացում դրա տարբեր փուլերում, մինչդեռ մարզային ՔՀԿ-ների միայն 4%-ն է այդպես նշել: Համեմատած երևանյան ՔՀԿ-ների հետ՝ ավելի շատ մարզային ՔՀԿ-ներ են նշել, որ հազվադեպ են ներգրավվում կամ երբեք չեն ներգրավվում քաղաքականության երկխոսության գործընթացում (43-50%-ը՝ 23-27%-ի դիմաց): Քանի որ ՔՀԿ-ների ու տեղական իշխանությունների միջև քաղաքական երկխոսության հաջողված փորձի





բազմաթիվ օրինակներ կան, որոնք կներկայացվեն հաջորդիվ, կարող ենք ենթադրել, որ այս հարցում խոսքը պետական կառավարման մակարդակով քաղաքական երկխոսության մասին է եղել:

Ներկայացնենք քաղաքականության մշակման գործընթացում ՔՀԿ-ների մասնակցության մեխանիզմները, փորձը, հաջողություններն ու խոչընդոտները պետական կառավարման ու համայնքային մակարդակով:

## Քաղաքական երկխոսություն. պետական կառավարման մակարդակ

Իրավական ակտերի մշակման ընթացքում հանրությունն իր կարծիքը ներկայացնելու հնարավորություն է ստանում հանրային քննարկումների միջոցով: Ըստ օրենքի՝ ցանկացած իրավական ակտի նախագիծ, փորձագիտական գնահատականի ներկայացնելուն զուգահեռ, պետք է անցնի հանրային քննարկումներ հանրությանը իրազեկելու և կարծիքներ հավաքագրելու և դրանց հիման վրա նորմատիվ իրավական ակտի նախագծում անհրաժեշտ բարեփոխումներ կատարելու նպատակով: Հանրային քննարկումներն իրականացվում են նորմատիվ իրավական ակտի նախագիծը հրապարակելու միջոցով, մասնավորապես նախագիծը մշակող մարմնի ինտերնետային կայքում, իսկ նախագիծ մշակող մարմնի նախաձեռնությամբ կարող են իրականացվել նաև հանրային կամ շահագրգիռ անձանց հետ հանդիպումների, բաց լսումների, քննարկումների, հասարակական հարցումների, ինչպես նաև հեռահաղորդակցության հնարավոր միջոցներով: Հանրային քննարկումների իրականացման ժամկետն առավազն 15 օր է<sup>85</sup>:

Թեև օրենսդրական նախագծերը պետք է մատչելի լինեն հանրային քննարկումների համար, սակայն խորհրդարանի կանոնակարգում չկան պարտադիր հանրային լսումներ պահանջող դրույթներ: Քաղաքացիական հասարակության մասնակցությունը օրենսդրական գործընթացներին կանոնակարգվում է կամ ՔՀԿ-ների հետ կնքված հուշագրերով, կամ միջազգային կազմակերպությունների և ԱԺ-ի համատեղ ծրագրերով, կամ ՀՀ ԱԺ-ի մշտական հանձնաժողովների հետ համագործակցության միջոցով<sup>86</sup>: Բացի դրանից՝ այդ նախագծերը առկա են խորհրդարանի

ինտերնետային կայքում, սակայն լսումներին մասնակցելու համար ՔՀԿ-ներն իրենք պետք է ակտիվ ջանքեր գործադրեն:

Մոտ 150 ՔՀԿ-ներից բաղկացած «Հանրային ցանցը» 2008 թ.-ին փոխըմբռնման հուշագիր է կնքել ԱԺ-ի հետ, և այն հանրությանը օրենքների նոր նախագծերի մասին տեղեկացնելու ու ՔՀԿ-ներին հանրային քննարկումներում ներգրավելու միջոց է ծառայում: Այնուամենայնիվ, նրա ներկայացրած կարծիքները զուտ խորհրդատվական բնույթ են կրում: Բացի այդ՝ հուշագրում քննարկումների ընթացակարգերի, փորձագիտական և խորհրդատվական կարծիքների տրամադրման, ինչպես նաև հանձնաժողովների նիստերի և լսումների մասնակցության վերաբերող դրույթները միշտ սկսվում են «ըստ անհրաժեշտության» բառակապակցությամբ՝ թողնելով այս գործընթացների իրականացումը ԱԺ-ի հայեցողությանը<sup>87</sup>: 2013 թ.-ին հանրային ցանցի անդամները մասնակցեցին առողջապահության բյուջեի, Հայաստանի զարգացման երկարաժամկետ ծրագրի և մի քանի օրենքների, այդ թվում՝ զբաղվածության, կրթության և սոցիալական աջակցության մասին օրենքների նախագծերի քննարկումներին: Հնչած առաջարկություններն ուղարկվեցին պետական մարմիններին, որոնք մեծ մասամբ համաձայնեցին հաշվի առնել այդ առաջարկությունները<sup>88</sup>:

Բացի հանրային ցանցի միջոցով տեղեկատվության տարածումից և ինտերնետային կայքում այն տեղադրելուց՝ խորհրդարանական հանձնաժողովները հազվադեպ են ջանք գործադրում ՔՀԿ-ների կամ հանրության կարծիքներին տեղեկանալու համար: Հանձնաժողովների նիստերը սովորաբար բաց են, և ցանկացած անձ կարող է հրավիրվել մասնակցելու նիստին՝ իր փորձագիտական վերլուծությունը տրամադրելու համար: Այնուամենայնիվ, քանի որ լրացուցիչ աշխատանք չի իրականացվում տվյալ բնագավառում մասնագիտացած ՔՀԿ-ների հետ կապ հաստատելու ուղղությամբ՝ որոշակի օրենքների նախագծերի քննարկման համար, ուստի ՔՀԿ-ների մասնակցությունը նիստերին կախված է հանձնաժողովի նախագահից, ինչպես նաև հենց իրենց՝ ՔՀԿ-ների ակտիվությունից և աշխրջությունից: Եթե ՔՀԿ-ները դիմում են հանձնաժողովին՝ նիստին մասնակցելու և որոշակի օրենքի նախագծի քննարկմանը մասնակցելու պահանջով, այդ հնարավորությունը նրանց սովորաբար տրամադրվում է, պայմանով, որ նրանք քննարկվող բնագավառում փորձ ունեն և/կամ առաջարկներ են ներկայացնելու նախագծի

85. ԳՅ օրենք «Իրավական ակտերի մասին», հոդ. 27.1

86. Eduardo Lorenzo Ochoa, Policy Paper on Strengthening Civil Society and Its Interaction with State Institutions, European Union Advisory Group to the Republic of Armenia, 2012

87. Նույն տեղում

88. ՔՀԿ կայունության ցուցանիշ 2013 - Հայաստան, ՔԶԳ/ԱՄՆ ՄԶԳ, հունիս, 2014թ.

վերաբերյալ: Ինչ վերաբերում է հանրային լուսմներին, ապա դրանց մասնակցելու համար կարող է դիմել ցանկացած շահագրգիռ անձ: Միաժամանակ ՔՀԿ-ների այն ներկայացուցիչները, որոնք մասնակցում են հանդիպումներին կամ լուսմներին, մեխանիզմներ չունեն իրենց մասնակցության արդյունքը պարզելու համար և, որպես կանոն, գրավոր պատասխան չեն ստանում՝ արդյո՞ք իրենց առաջարկությունները հաշվի են առնվել, թե՛ ոչ, և եթե ոչ, ինչո՞ւ: Որոշ դեպքերում օրենքի նախագծի քննարկման համար հանձնաժողովները նաև աշխատանքային խմբեր են ձևավորում՝ ըստ անհրաժեշտության:

Կառավարության կողմից քաղաքականության մշակման գործընթացում ՔՀԿ-ների մասնակցության առաջնային մեխանիզմը նույնն է, ինչ խորհրդարանի դեպքում՝ յուրաքանչյուր իրավական ակտի նախագիծ հանրային քննարկումների գործընթաց պետք է անցնի: Եվ նորից հաճախ կոնկրետ պետական մարմնի հայեցողությունից է կախված՝ քաղաքականության քննարկման գործընթացում ՔՀԿ-ների ներգրավման համար ջանքեր կգործադրվեն, թե ոչ: Որպես կանոն, քաղաքականության նախագիծը տեղադրվում է ինտերնետային կայքում, և ՔՀԿ-ներն իրենք պետք է հետևեն տեղեկատվությանն ու առաջարկություններ ներկայացնեն:

Բացի հրապարակված նախագծերի վերաբերյալ քննարկումներին մասնակցելուց՝ ՔՀԿ-ները քաղաքականության ձևավորման գործընթացին մասնակցում են նաև ՔՀԿ-ների և պետական մարմինների ներկայացուցիչներից բաղկացած համատեղ աշխատանքային խմբերի և խորհուրդների միջոցով: Այս աշխատանքային խմբերը ստեղծվում են որոշակի օրենքների կամ ոլորտների շուրջ: Հաջողված համագործակցության օրինակ կարող է ծառայել կառավարության և ՔՀԿ-ների ներկայացուցիչներից բաղկացած աշխատանքային այն խումբը, որը մշակեց ՔՀԿ-ների զարգացման ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների հայեցակարգը: Այս հայեցակարգը հիմնված է հանրային քննարկումների արդյունքների և այդ ոլորտում կատարած մի շարք հետազոտությունների վրա, և նախաձեռնվել է ՔՀԿ-ների ցանցի կողմից, որոնք համախմբվել էին «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի փոփոխությունների նախագծի դեմ: 2014 թ.-ին հաշմանդամության հարցերով զբաղվող ՔՀԿ-ները նախաձեռնեցին հաշմանդամություն ունեցող աշխատողների համար քվոտայի հաստատումը: Ձևավորվեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, կառավարության այլ ներկայացուցիչների և ՔՀԿ-ների ընդգրկմամբ համատեղ աշխատանքային խումբ, որը քննարկեց այս հարցը և համապատասխան օրենսդրական փոփոխություններ մշակեց:

Որպես արդյունք՝ քվոտայի սահմանման գաղափարը հաստատվեց և ընդգրկվեց «Ջրաղվածության մասին» ՀՀ օրենքում. այն կիրառվելու է 2015 թվականից:

Օրենսդրական օրակարգի քննարկման օրերը (ՕՕՔՕ), որոնք կազմակերպվում էին 2011-2014 թթ. «Քաունթերփարթ ինթերնեշլ»-ի՝ ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության ծրագրի շրջանակներում, իշխանությունների և ՔՀԿ-ների միջև քաղաքական երկխոսության արդյունավետ մեխանիզմ հանդիսացան: ՕՕՔՕ-ի հիմնական նպատակն էր յուրաքանչյուր տարվա օրենսդրական ցիկլի սկզբում հարթակ տրամադրել ՔՀԿ-երին՝ նախաձեռնող լինելու և ԱԺ համապատասխան մշտական հանձնաժողովների հետ հանդիպումների և քննարկման միջոցով օրենսդրական օրակարգի ձևավորման գործընթացի վրա ներազդելու համար<sup>89</sup>: Այն հնարավորություն տվեց ՔՀԿ-ներին, ակտիվիստներին, տեղական իշխանությունների ներկայացուցիչներին օրենսդրական առաջարկություններ մշակել իրենց հուզող մի շարք ոլորտներում, ինչպես, օրինակ, առողջապահություն, սոցիալական խնդիրներ և այլն: Այս հնարավորությունը ՔՀԿ-ների համար որոշակի մեխանիզմ ապահովեց՝ օրենսդրական գործընթացների մեջ ընդգրկվելու և յուրաքանչյուր առաջարկի վերաբերյալ հետադարձ կապ ստանալու համար: Որպես այս գործընթացի արդյունք՝ մի շարք առաջարկներ ընդունվել են խորհրդարանի կողմից՝ ներառյալ նոր օրենսդրական ակտերի մշակում և ընդունում, օրենքի փոփոխությունների ընդունում: Օրինակ՝ 2013 թ. ՔՀԿ-ների մասնակցությամբ մշակվել, այնուհետև ընդունվել է տղամարդկանց և կանանց հավասար իրավունքների և հնարավորությունների մասին օրենքը: ՕՕՔՕ-ի միջոցով «Մոր և մանկան առողջության» դաշինքը ԱԺ առողջապահության, մայրության և մանկության հարցերի մշտական հանձնաժողովին է ներկայացրել 2012 թ. պետական բյուջեի փոփոխությունների նախագիծը՝ կոչ անելով ավելացնել առողջապահական ծախսերը՝ Հայաստանի գյուղական համայնքներում բուժօգնությունը բարելավելու նպատակով: Արդյունքում առողջապահական ծախսերը պետբյուջեում ավելացան ավելի քան 3 000 000 ՀՀ դրամով (մոտ 7 500 ԱՄՆ դոլար)<sup>90</sup>:

89. «Քաունթերփարթ Ինթերնեշլ» հայաստանյան ներկայացուցչության վեբկայք, [http://program.counterpart.org/Armenia/?page\\_id=6453&lang=hy](http://program.counterpart.org/Armenia/?page_id=6453&lang=hy), վերջին դիտումը՝ 13.11.2014թ.

90. Նույնը



ՔՀԿ-ները նաև հետազոտական աշխատանքներ են իրականացնում: Մեծամորում գործող «Կայուն զարգացման նախաձեռնություն» ՀԿ-ն 2013 թ. հրապարակեց Հայաստանում միջուկային էներգիայի դրական և բացասական ազդեցության մասին մի հետազոտություն, որն առաջարկում էր ներդրումներ կատարել ոչ թե նոր ատոմակայան կառուցելու, այլ ներկայիս ատոմակայանի անվտանգությունն ապահովելու ու գործունեության ժամկետը երկարացնելու նպատակով: Հետազոտության արդյունքները քննարկվեցին կյոթ սեղանի ընթացքում, որին մասնակցում էին ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության, Մեծամորի քաղաքապետարանի և մարզպետարանի ներկայացուցիչներ: Կազմակերպվեցին նաև հանրային լուսամտեր՝ ուսումնասիրության արդյունքները Մեծամորի բնակիչների հետ քննարկելու նպատակով: Ուսումնասիրությունը և քննարկումները նպաստեցին, որ կառավարությունը որոշում ընդունի գործող ատոմակայանի անվտանգությունը ապահովելու և ենթակայանի գործունեությունը շարունակելու՝ 150 մլն ԱՄՆ դոլարի ներդրում պահանջող ծրագրի մասին, որը կավարտվի 2016 թ.-ին:

Ինչպես երևում է վերը ներկայացված օրինակներից, կոալիցիաները և ցանցերը շահերի պաշտպանության իրենց ջանքերի արդյունքում հաճախ կարողանում են փոփոխությունների բերել և հաջողության հասնել: Կան շատ ցանցեր և միավորումներ, որոնք աշխատում են շրջակա միջավայրի, մարդու իրավունքների, հաշմանդամության ոլորտներում: Բազմաթիվ կոալիցիաներ ստեղծվել են կոնկրետ հարցերի շուրջ՝ նպատակ ունենալով պաշտպանել որոշակի շահեր: Օրինակ՝ 2010 թ. ձևավորվեց «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիան, որը խնդրագրեր է հղում, նստացույցեր և ցույցեր է կազմակերպում՝ ընտանեկան բռնությունների վերաբերյալ բնակչության իրազեկությունը բարձրացնելու համար՝ պահանջելով, որ Հայաստանում ընտանեկան բռնության մասին օրենք ընդունվի: Ընտրությունների ժամանակ ստեղծվում են ընտրությունների հետ կապված կոալիցիաներ, որոնք միավորում են իրենց ռեսուրսները՝ ընտրությունների ընթացքի արդյունավետ դիտարկման և ընտրողների իրազեկության բարձրացման նպատակով:

## Քաղաքական երկխոսություն. համայնքային մակարդակ

Հայաստանում տեղական ինքնակառավարման մարմինը (ՏԻՄ) ընտրվում է համայնքի անդամների կողմից և բաղկացած է ավագանուց

և համայնքի ղեկավարից, որը նշանակում է ՏԻՄ աշխատակազմի անդամներին: Ավագանին կառավարման համայնքային մակարդակի գերագույն մարմինն է, որը կայացնում է համայնքի զարգացման ծրագրի, բյուջեի և համայնքի հետ կապված այլ ռազմավարական հարցերի վերաբերյալ հիմնական որոշումները, ինչպես նաև վերահսկում է որոշումների կատարումը և համայնքի ղեկավարի որոշումների համապատասխանությունը օրենքին: Ավագանու նիստերը սովորաբար բաց են և ցանկացած մարդ կարող է ներկա լինել: Բացի այդ՝ ավագանին կարող է կազմել աշխատանքային խմբեր և հանձնաժողովներ՝ համայնքի հետ կապված որոշակի հարցերի լուծում տալու նպատակով:

Այսպիսով՝ ավագանու ինստիտուտը հենց այն մարմինն է, որն ապահովում է հանրային մասնակցությունը և ներկայացնում համայնքի ձայնը: Մինևնայն ժամանակ Հայաստանի շատ համայնքներում՝ մասնավորապես գյուղական տարածքներում, այս մարմինը պատշաճ ձևով չի գործում: Ավագանու անդամների աշխատանքը չի վարձատրվում, և հաճախ ավագանու անդամները «նշանակվում են» համայնքի ղեկավարի կողմից՝ առանց այլընտրանքային թեկնածուների տեղի ունեցող ընտրությունների արդյունքում: Համայնքների մեծամասնությունում համայնքի ղեկավարը իրականում հիմնական որոշումների կայացման մենաշնորհ ունի: Ֆոկուս-խմբային քննարկման մասնակիցները նշել են, որ ավագանին չի կատարում իր դերը. *«Ավագանին ակտիվ չէ, չի համագործակցում բնակիչների հետ, չգիտեն իրենց իրավունքներն ու պարտականությունները»* (ՔՀԿ ներկայացուցիչ, Գավառ):

Բացի ավագանու և նրա հանձնաժողովների նիստերի մասնակցությունից՝ տեղական ինքնակառավարման մասին օրենքը սահմանում է հանրային մասնակցության մի քանի այլ հնարավորություններ, ներառյալ հանրային լուսամտերը: Համաձայն վերջին փոփոխության՝ օրենքում ներառված է մի դրույթ, ըստ որի՝ համայնքի ղեկավարը կազմակերպում է տեղական ինքնակառավարմանն առնչվող կարևորագույն նախաձեռնությունների և նախագծերի հանրային լուսամտեր կամ քննարկումներ, դրանց վերաբերյալ ընդունում է առաջարկություններ, որոնք ներկայացնում է նախաձեռնությունների և նախագծերի հեղինակներին<sup>91</sup>: Հանրային մասնակցության վերաբերյալ դրույթներն ընդունվել են 2013 թ.-ին՝ որպես ՔՀԿ-ների նախաձեռնության և կառավարության, ՔՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների համատեղ աշխատանքի արդյունք:

91. ԳՅ օրենք «Տեղական ինքնակառավարման մասին», հոդ. 33.1

Թեև քաղաքացիների մասնակցությունը պարտադիր դրույթ է տեղական ինքնակառավարման օրենսդրության մեջ, հանրային մասնակցությունը հիմնականում սահմանափակվում է հանրության իրազեկմամբ և որոշ դեպքերում քննարկումներով, մինչդեռ մասնակցությունը և ազդեցությունը որոշումներ կայացնելու մակարդակում դեռևս իրենց զարգացման փուլում են և մեծապես կախված են տեղական ՔՀԿ-ների, այդ թվում կազմակերպված համայնքային խմբերի ակտիվությունից և կարողություններից:

Ընդհանուր առմամբ, վերջին 5 տարիների ընթացքում նկատվում են ՔՀԿ-ների մասնակցության ընդլայնում և համայնքային որոշումների կայացման գործընթացում ազդեցության աճ: Տեղական իշխանությունների կողմից կազմակերպվող ձևական բնույթ կրող քննարկումներից և անձնական կապերի միջոցով լուծվող հարցերից անցում է կատարվում դեպի մասնակցության ավելի ինստիտուցիոնալ և արդյունավետ մեխանիզմների կիրառում, թեև այս ուղղությամբ դեռևս երկար ճանապարհ կա անցնելու: Կրկին պետք է նշել, որ այս փոփոխությունը կատարվում է մեծ մասամբ միջազգային կազմակերպությունների և/կամ նրանց կողմից ֆինանսավորվող դրամաշնորհային ծրագրերի շնորհիվ, միևնույն ժամանակ այն աստիճանաբար նպաստում է տեղական ինքնակառավարման ոլորտում տեղական գործելակերպի և մշակույթի փոփոխությանը: Զեկույցները վկայում են, որ ՔՀԿ-ների աշխատանքի շնորհիվ որոշ մարզերում մարդիկ ավելի լավ են իրազեկված տեղական իշխանությունների պարտականությունների մասին, մասնակցում են ՏԻՄ և ավագանու նիստերին և իշխանություններից հաշվետվողականություն են պահանջում<sup>92</sup>:

Համայնքի կարևորագույն խնդիրների քննարկման համար բազմաթիվ մարզային համայնքներում կիրառվում են համայնքային ժողովները՝ որպես հանրային մասնակցության մեխանիզմ: Որպես կանոն, այս պրակտիկան նախաձեռնում են տեղական և միջազգային կազմակերպությունները. այնուամենայնիվ, համայնքներում սա պահանջված և աշխատող մեխանիզմ է դարձել, և տեղական իշխանություններն ու կազմակերպությունները շարունակում են կազմակերպել նմանատիպ ժողովներ՝ որպես կարիքների գնահատման և հանրային մասնակցության մեխանիզմ: Մարդկային զարգացման միջազգային կազմակերպությունը (ՄՋՄԿ) այն կազմակերպություններից է, որը համայնքային ժողովներ է նախաձեռնել ավելի քան 60 համայնքներում՝ որպես համայնքային մասնակցության մեխանիզմ: Այս ժողովների ընթացքում տարբեր հատ-

վածների ներկայացուցիչներ քննարկում են «սցենարներ»՝ նկարագրելով խնդիրը, դրա լուծումները և առկա ռեսուրսները: Փորձագետները շահագրգիռ կողմերի հետ հարցազրույցների հիման վրա նախապես մշակում են այդ սցենարները, իսկ համայնքային ժողովների ընթացքում քննարկման արդյունքում ընտրվում է առաջնահերթ սցենարը, որը ներկայացվում է ավագանու քննարկմանը: Գյուղական համայնքներում ժողովներին են մասնակցում ավելի քան 100 բնակիչներ, մինչդեռ քաղաքային վայրերում հնարավոր է հանդիպում կազմակերպել մինչև անգամ 500 մարդու մասնակցությամբ: Ըստ ՄՋՄԿ ներկայացուցիչների՝ առաջնահերթ սցենարը հաճախ կարող է չհամընկնել տեղական կառավարման մարմինների առաջնահերթությունների հետ, սակայն տեղական իշխանությունները սովորաբար ընդունում են այն տարբերակը, որն արժանացել է հանրության համաձայնությանը: Հետագա ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ, որպես կանոն, այդ խոստումների 80 տոկոսը կատարվում է, իսկ մնացած 20 տոկոսի չկատարման պատճառների վերաբերյալ լինում են հստակ բացատրություններ: Բացի այդ՝ այս գործընթացը շարունակվում է տեղական ՔՀԿ-ների աջակցությամբ. «Հիմա կնքում ենք հուշագիր, որպեսզի մեր կարողությունը փոխանցենք այլ կազմակերպությունների, որ իրենք էլ կարողանան դա կազմակերպել և իրականացնել: Այսինքն՝ դա գործող և առողջ գործող մեխանիզմ է» (ՄՋՄԿ ներկայացուցիչ):

Համայնքային մակարդակում քաղաքական երկխոսության մեկ այլ դրական փորձի օրինակ են երիտասարդական խմբերը Գյումրիում, Արթիկում և Մարալիկում, որոնք համայնքային մակարդակով երիտասարդական քաղաքականության իրականացման ռազմավարական ծրագրեր մշակեցին և ներկայացրին: Համայնքապետարանները հաստատել են այդ ռազմավարական ծրագրերը, իսկ Մարալիկում առաջին անգամ որոշվեց տարեկան 100 հազար դրամ (մոտ 250 ԱՄՆ դոլար) հատկացնել համայնքային բյուջեից որևէ երիտասարդական միջոցառման համար<sup>93</sup>: Հաջողված մեկ այլ օրինակ վերաբերում է Վանաձորում համայնքային բյուջեից ՔՀԿ-ներին տրամադրվող ֆինանսավորման թափանցիկության բարելավմանը, որի մասին նշեց ֆոկլու-խմբային քննարկման մասնակիցներից մեկը. «Մեր քաղաքապետը բյուջեով նախատեսված 1,5-2 մլն դրամ գումար ունի, որը՝ որպես դրամաշնորհ, կարող է տրամադրել ՀԿ-ներին կամ ԶԼՄ-ներին: Թե այդ գումարը ում է գնում, ինչպես է գնում, ինչի համար է գնում, որ ՀԿ-ին է գնում, ոչ մեկս չգիտեմք: [...] Մենք մեր ճշումների արդյունքում, արտապեզիայի հաշվին, եկանք, այն բանին

92. CIVICUS Civil Society Index Rapid Assessment: Armenia Country Report, Yerevan, 2014

93. ՔՀԿ կայունության ցուցանիշ 2013 - Հայաստան, ԶԶՀՀ/ԱՄՆ ՄԶԳ, հունիս 2014թ.



հասանք, որ վերջին նիստի ժամանակ, բյուջեի հասարակում էր, այդ կետի վերաբերյալ ճնշումների ազդեցության փակ իրենք ասեցին՝ սրանից հետո ԶԼՄ-ները, ՀԿ-ները կգան ծրագիր կներկայացնեն, բաց քննարկում կլինի, կրենանք, թե որն է ավելի լավ, նրան էլ գումարը կտանք» (ԲՀԿ ներկայացուցիչ, Վանաձոր):

Այս օրինակները վկայում են, որ ԲՀԿ-ների կազմակերպված, ինստիտուցիոնալ և հետևողական գործողությունները կարող են ազդեցություն ունենալ ՏԻՄ մակարդակում որոշումներ կայացնելու գործընթացում: Մյուս կողմից՝ տարբեր տեղական և միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող համայնքային զարգացման ծրագրերը կարևոր դեր են խաղում մասնակցային մշակույթի ստեղծման և ԲՀԿ-ների, տեղական իշխանությունների և քաղաքացիների միջև քաղաքական երկխոսության ներուժի ամրապնդման գործում:

Ողջ աշխարհում համայնքային ծրագրերը առանցքային դեր ունեն սոցիալական քաղաքականության ծրագրերում, քանի որ համայնքը դիտարկվում է առաջին հերթին իբրև ինքնուրույն գործելու իրավունք և հնարավորություն ունեցող հասարակական վարչական միավոր, որը կարող է սեփական ջանքերով գնահատել և փոխել իր կյանքը: Ապացուցված է, որ համայնքի սեփական ներուժի օգտագործումը շատ օգտակար և արդյունավետ է զարգացման համար:

Այս մոտեցումը գերիշխող է նաև վերջին 10 տարվա ընթացքում տեղական և միջազգային ԲՀԿ-ների կողմից Հայաստանի համայնքներում իրականացվող ծրագրերում: «Ջինիշյան հիշատակի հիմնադրամի», «Հայկական Կարիտաս»-ի, «Վորլդ Վիժն»-ի, «Քաունթերփարթ Ինթերնեշլ Հայաստանի» և այլ կազմակերպությունների մի շարք ծրագրեր անդրադարձել են համայնքային զարգացման հիմնախնդիրներին տեղական քաղաքական երկխոսության և քաղաքացիական մասնակցության խթանման միջոցով: Համայնքի անդամներն ակտիվորեն ներգրավվում են հիմնախնդիրների լուծման գործում, սովորաբար տեղական ոչ ֆորմալ խմբերի միջոցով, որոնց նպատակն է ապահովել քաղաքացիների և տեղական իշխանությունների միջև կապը և նպաստել երկխոսության կայացմանը: Այդ ծրագրերի շրջանակում հաջողության բազմաթիվ օրինակներ կան, որոնք վերաբերում են, օրինակ, համայնքային բյուջեի փոփոխություններին, համայնքի հետ կապված որոշումների ընդունմանը, համատեղ մշակված կանոնակարգերին և ռազմավարություններին: Համայնքային քաղաքականության երկխոսության ոլորտում ձեռքբերումները, անշուշտ, մեծ ազդեցություն են գործում քաղաքականության մշակման մասնակցային մշակույթի ձևավորման, ինչպես նաև քաղաքական երկխոսության կարողությունների երկկողմանի

զարգացման վրա: Մասնակցային մոտեցման վերաբերյալ նոր դրույթների ներառումը ՏԻՄ օրենքում նույնպես կարելի է համարել տեղական քաղաքական երկխոսության կիրառման բարելավման արդյունք:

## Ոչ ֆորմալ շարժումներ

Ինչպես ներկայացված էր զեկույցի առաջին մասում, Հայաստանում հասարակական շարժումների մեծամասնության թիրախ են բնապահպանության, մարդու իրավունքների և քաղաքաշինության վերաբերյալ հարցերը: Առաջին շարժումներից մեկը՝ «Փրկենք Թեղուտը», պահանջում էր դադարեցնել պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագիրը Թեղուտում, քանի որ այն կործանարար էր տեղի անտառների, ջրային ռեսուրսների և կենդանիների ու բույսերի համար: Թեև այս քարոզարշավը հաջողության չհասավ, և արդյունահանումը շարունակվեց, շարժումը շարունակեց իր գործունեությունը՝ այլ խմբերի հետ միասին ընդգրկվելով բնապահպանական այլ քարոզարշավներում, որոնք որոշ դեպքերում հաջող ավարտ ունեցան: Հաջողություններից մեկը, որը բնապահպանների հաղթանակը դարձավ, ջրվեժի համար վտանգ ներկայացնող մի փոքր հիդրոէլեկտրակայանի շինարարության կասեցումն էր: Այդ որոշումը բազմաթիվ ԲՀԿ-ների և անհատ քաղաքացիների ձեռքբերումն էր, որոնք համախմբված ջանքեր գործադրեցին դիմումների, ցույցերի և նույնիսկ տեղում հերթապահող ճամբարներ կազմակերպելու միջոցով: Ավելին՝ շահերի պաշտպանության արշավի արդյունքում կառավարությունը 2011 թ.-ին ջրվեժին շնորհեց հատուկ պաշտպանության կարգավիճակ:

«Մենք ենք այս քաղաքի տերերը» նախաձեռնությունը մեկ այլ ոչ ֆորմալ շարժում է, որը շարունակաբար անդրադառնում է Երևանի կանաչ տարածքներին վնասող պետական և մասնավոր նախաձեռնություններին: Այս շարժումը մյուս ակտիվ խմբերի և քաղաքացիների հետ 2012 թ.-ին մասնակցում էր Մաշտոցի այգու պաշտպանության քարոզարշավին, որն ուղղված էր այգում սկսված շինարարության դեմ: Եռամյա նստացույցից, խնդրագրերից և տարբեր պետական մարմինների դիմելուց հետո շինարարությունը դադարեցվեց, իսկ առկա շինությունները ապամոնտաժվեցին նախագահի հրամանով<sup>94</sup>:

94. Քաղաքացիական շարժումների վերաբերյալ ավելի շատ տեղեկատվություն կարելի է գտնել <http://organize-now.am/am/> կայքում, որը ստեղծվել է Մարդու իրավունքների և ժողովրդավարության ինստիտուտ (ՄԻԺԻ) 74-ի կողմից և թարմացվում է մի փունք երիտասարդ ակտիվիստների ջանքերով:

Բացի բնապահպանական հարցերից՝ քաղաքացիական շարժումներ են ձևավորվում տարբեր այլ խնդիրների շուրջ, որոնք վերաբերում են բանակին, տրանսպորտի ուղեվարձի թանկացմանը, մշակութային արժեքների կայացնող շենքերի ապամոնտաժմանը, հարկային օրենքներին և այլն:

Վերջերս ծավալված՝ շահերի պաշտպանության առավել հիշարժան քարոզարշավը, որը կազմակերպվել էր 2013-2014 թթ.-ին ոչ ֆորմալ խմբերի կողմից, «Դեմ են» շարժումն էր՝ կենսաթոշակային պարտադիր կուտակային համակարգի վերաբերյալ օրենքի դեմ: Շարժումը հազարավոր անդամներ հավաքագրեց՝ Երևանում և մարզերում կազմակերպելով ստորագրահավաքներ, քննարկումներ, քայլերթեր և այլ բողոքի ակցիաներ: 2014 թ. ապրիլին Մահմանադրական դատարանը կասեցրեց օրենքի որոշ դրույթների կատարումը, որոնք հակասահմանադրական ճանաչվեցին: Այնուհետև ընդունվեցին օրենքի փոփոխություններ, որոնք թեև ամբողջովին չեն ընդգրկում շարժման պահանջները, սակայն հետաձգում են պարտադիր համակարգի կիրառումը նրանց համար, ովքեր պետական հիմնարկներում չեն աշխատում:

Ոչ ֆորմալ շարժումների բնորոշ առանձնահատկություններն են քաղաքացիների համախմբումը հանրային հետաքրքրության որևէ հարցի շուրջ, ինքնաֆինանսավորումը և կառավարման հորիզոնական կառուցվածքը:

## ՔՀԿ-ների կարողությունները և կարիքները՝ քաղաքականության մշակմանը մասնակցելու համար

### Հանրային քաղաքականության վրա ՔՀԿ-ների ազդեցության ռազմավարությունը

ՍՈՑԻՈՄԵՏՐՈՒՄ կենտրոնի հետազոտությունը անդրադարձել է այն մեխանիզմներին, որոնք օգտագործվում են ՔՀԿ-ների կողմից՝ պետական ծրագրերի և հանրային քաղաքականության վրա ազդելու նպատակով: Ամենահաճախ հիշատակվող մեթոդը կոնկրետ հարցի վերաբերյալ տեղեկատվության տարածումն է համապատասխան լսարանի շրջանում, որին հետևում է մասնակցությունը հավաքներին, կոնֆերանսներին և քննարկումներին: Մարզային և տեղական մակարդակի քարոզարշավներն էլ են նշվում, սակայն որպես չափավոր օգտագործվող ազդեցության մեխանիզմներ:

### Աղյուսակ 20. Ի՞նչ մեխանիզմներով է ձեր կազմակերպությունը ազդում պետական ծրագրերի մշակման և քաղաքականության վրա (միջին արժեք, 1-5 սանդղակով՝ 1-քիչ, 5-շատ)

Պատասխան	միջին
Որոշակի տարածքում հիմնական խնդիրների մասին տեղեկատվության տարածում	3.54
Մասնակցություն հանրապետական հավաքներին, կոնֆերանսներին, քննարկումներին	3.27
Ուսումնասիրությունների, ռազմավարության, օրինագծերի մշակում	3.20
Մարզային/համայնքային արշավների իրականացում այլ ՔՀԿ-ների հետ	3.05
Մասնակցություն տեղական խորհուրդների աշխատանքներին	2.97
Մասնակցություն խորհրդարանական հանձնաժողովների աշխատանքին	2.85
Մասնակցություն մարզային խորհուրդների աշխատանքներին	2.84
Հանրապետական արշավների իրականացում այլ ՔՀԿ-ների հետ	2.76
Մասնակցություն հանրապետական խորհուրդների միջոցով	2.61

Աղբյուր՝ «ՍՈՑԻՈՄԵՏՐՈՒՄ» կենտրոնի հարցման տվյալներ, 2014 թ.


Համաձայն CIVICUS-ի գեկույցի՝ երկրի հարավում տեղակայված ՔՀԿ-ների ներկայացուցիչները նշում են, որ ՔՀԿ-ները բավական համեստ թիրախներ և հաջողության ցուցիչներ են սահմանում՝ իրազեկում, քննարկումներ և ներգրավում, այլ ոչ թե սահմանված նպատակների իրականացում<sup>95</sup>: Այս կարծիքը ուրվագծում է այն միտումը, որ ՔՀԿ-ներն ավելի շատ ընդգրկված են լայնածավալ միջոցառումների իրականացման գործում, որոնք հազվադեպ են քաղաքականության փոփոխություն առաջացնում: Այնուամենայնիվ, իրազեկումը ևս դերակատարում ունի մտածելակերպի փոփոխության և հասարակական կարծիք ձևավորելու գործում, և այս տեսակետից այն պետք չէ թերագնահատել: Փորձագետների կարծիքով՝ որոշ դեպքերում քաղաքացիական հասարակությունը չունի փորձ և կարողություն՝ քաղաքականության այլընտրանքներ առաջարկելու համար, ինչպես նաև ունի կարողության պակաս՝ քաղաքականության իրականացման վերահսկման բնագավառում<sup>96</sup>:

95. CIVICUS Civil Society Index Rapid Assessment: Armenia Country Report, Yerevan, 2014  
96. CIVICUS Civil Society Index Rapid Assessment: Armenia Country Report, Yerevan, 2014



Վերադառնալով հետազոտության արդյունքներին՝ պետք է նկատել, որ մասնակցության ինստիտուցիոնալ մեխանիզմները, ինչպես, օրինակ, տեղական, մարզային և հանրապետական խորհուրդներում, խորհրդարանական հանձնաժողովների աշխատանքում ընդգրկվելը, ավելի քիչ են կիրառվում ՔՀԿ-ների կողմից: Եթե համեմատենք երևանյան և մարզային ՔՀԿ-ները, ապա ակներև է, որ մարզային ՔՀԿ-ներն ավելի ակտիվ են մարզային և համայնքային խորհուրդներում, նաև ավելի շատ են մասնակցում մարզային ու համայնքային արշավներին, մինչդեռ երևանյան կազմակերպությունները ավելի հաճախ են մասնակցում խորհրդարանական և հանրապետական խորհուրդների աշխատանքին:

**Գծապատկեր 9. Ի՞նչ մեխանիզմներով է ձեր կազմակերպությունը ազդում պետական ծրագրերի մշակման և քաղաքականության վրա (միջին արժեք, 1-5 սանդղակով՝ 1-քիչ, 5-շատ)**



Աղբյուր՝ «ՍՈՑԻՈՍԵՏՐ» կենտրոնի հարցման տվյալներ, 2014 թ.

Այս տարբերությունը կարող է բացատրվել ոչ միայն կազմակերպության տեղակայման վայրով, որը նպաստում է տեղական կամ հանրապետական մակարդակով պետական մարմինների աշխատանքին մասնակցելու դրսևությունը, այլ նաև քաղաքական երկխոսության ոլորտում ՔՀԿ-ների կարողությունների տարբերությամբ: Մարզային ՔՀԿ-ները հաճախ նշում են, որ իրենք կարողությունների զարգացման ավելի քիչ հնարավորություններ ունեն, քան երևանյան ՔՀԿ-ները, թեև որոշ քաղաքներ, ինչպես, օրինակ, Գյումրին, Վանաձորը, Գորիսը բացառություն են այս առումով՝ այնտեղ առկա ռեսուրս կենտրոնների և կարողությունների զարգացման միջոցառումների շնորհիվ: Վերևի գծապատկերը ցույց է տալիս նաև, որ երևանյան ՔՀԿ-ները ավելի հաճախ են ուսումնասիրություններ, ռազմավարություն և օրենքների նախագծեր մշակում՝ համեմատած մարզային կազմակերպությունների հետ, որը տվյալ դեպքում չի կարող պայմանավորված լինել տեղակայմամբ, և կարելի է բացատրել միայն կարողությունների տարբերությամբ: Քաղաքականության մշակման ոլորտում երևանյան և մարզային ՔՀԿ-ների գործունեության ակտիվության տարբերությունը ավելի ակնառու է դառնում ՔՀԿ-ների ձեռքբերումների մասին տրված հարցի պատասխաններից: Ընդհանուր առմամբ, որպես առավել կարևոր ձեռքբերում՝ կազմակերպությունների 13,6%-ը նշում է համագործակցությունը և ազդեցությունը պետական կառույցների վրա, իսկ 10,9%-ը՝ օրենսդրական փոփոխությունները: Միևնույն ժամանակ այս ՔՀԿ-ների մեծամասնությունը մայրաքաղաքից է, օրենսդրական փոփոխությունները որպես իրենց ձեռքբերում նշած ՔՀԿ-ների 87,5%-ը և պետական կառուցվածքների վրա ազդեցություն ունեցածների 75%-ը երևանյան ՔՀԿ-ներ են:

Մարզային կազմակերպությունների ուսուցման և հանրային կապերի գործունեության հնարավորությունները զգալիորեն ընդլայնվել են նոր տեխնոլոգիաների օգտագործման աճի հետ: Ավելի ու ավելի շատ կազմակերպություններ են օգտագործում սոցիալական ցանցերը՝ որպես իրենց աշխատանքը հանրայնացնելու և աջակիցներին համախմբելու անվճար հնարավորություն: Ըստ երիտասարդական կազմակերպությունների վերաբերյալ հետազոտության զեկույցի՝ հետազոտված կազմակերպությունների 28,2%-ը ունեն ինտերնետային կայք, իսկ 50,7%-ը որպես տեղեկատվության տարածման գործիք են օգտագործում սոցիալական ցանցերը՝ հիմնականում ֆեյսբուքը<sup>97</sup>:

97. «Երիտասարդական կազմակերպությունների քարտեզագրում և պետության կողմից ֆինանսավորվող երիտասարդական դրամաշնորհային ծրագրերի արդյունավետության գնահատում» հետազոտության զեկույց, Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտ, Երևան, 2014թ.

CIVICUS-ի 2014 թ. իրականացված ուսումնասիրությունը մեջբերում է Հայաստանի ամերիկյան համալսարանի Թուրփանջեան կենտրոնի կողմից իրականացված մեկ այլ ուսումնասիրության արդյունքներ, ըստ որի՝ ակտիվ գործող ՔՀԿ-ների 72%-ն ունի ինտերնետային կայք, 65%-ը՝ ֆեյսբուքյան էջ, իսկ ՔՀԿ-ների առնվազն մեկ քառորդը օգտվում են նաև սոցիալական այլ ցանցերից, ինչպես, օրինակ, «յութուբ»-ը և բլոգները<sup>98</sup>:

«Յութուբ»-ը և բլոգները առանցքային դեր են խաղացել ոչ ֆորմալ շարժումների և քարոզարշավների ժամանակ ակտիվ խմբերի մոբիլիզացման գործում: Առցանց միջոցներն ապահովել են կազմակերպչական, տեղեկատվական, բանակցային գործառնություններ և նույնիսկ վերահսկող դեր են խաղացել՝ ցույց տալով պետական պաշտոնյաների խախտումները, քանի որ տեսանյութերը անմիջապես հրապարակվում էին «յութուբ»-ում<sup>99</sup>: Որոշ առցանց լրատվամիջոցներ, ինչպես, օրինակ, «Ազատությունը» և «Միվիլներ»-ը, ուղիղ եթեր են ապահովում քաղաքացիական բողոքների ժամանակ: Այնուամենայնիվ, փորձագետները նշում են, որ նոր սոցիալական մեդիայի առկայության պայմաններում իրական պայքարը առցանց հարթակ տեղափոխելու միտում կա, և շատ մարդիկ, ովքեր ակտիվորեն մասնակցում են առցանց քարոզարշավին, ֆիզիկապես չեն դառնում քարոզարշավների իրական մասնակիցներ<sup>100</sup>: Այսպես թե այնպես, առցանց գործիքների օգտագործումը նպաստում է տեղեկատվության արագ տարածմանը և ավելի մեծ քանակով մարդկանց՝ հատկապես երիտասարդների ընդգրկմանը հանրային գործունեության մեջ, և ՔՀԿ-ները գնալով ավելի շատ են գիտակցում նոր տեխնոլոգիաների անփոխարինելի դերը հանրության մոբիլիզացիայի և քարոզարշավների իրականացման գործում: Փորձագետները նշում են, որ ՔՀԿ-ները պետք է զարգացնեն առցանց հարթակում քննարկումները կազմակերպելու և կառավարելու իրենց ունակությունները՝ աջակիցներին ավելի արդյունավետ համախմբելու համար<sup>101</sup>:

## ՔՀԿ կարիքներն ու կարողությունները քաղաքականության մշակման գործընթացում արդյունավետ մասնակցության համար

Զեկույցի շրջանակներում բազմիցս անդրադարձ է արվել ՔՀԿ-ների կարողություններին և զարգացման կարիքներին, ներառյալ ընդհանուր առմամբ կազմակերպչական զարգացման և մասնավորապես քաղաքականության մշակման ոլորտում: Վերլուծության հիման վրա կարելի է առանձնացնել ՔՀԿ կարողությունների զարգացման հետևյալ ուղղությունները՝

- կազմակերպչական կարողությունների զարգացում ընդհանուր առմամբ՝ ղեկավարում, ռազմավարական կառավարում, կարիքների գնահատում, հանրային կապեր,
- համագործակցություն մյուս հատվածների հետ՝ հաղորդակցության հմտություններ, տեսանելիություն, հաշվետվողականություն, ռազմավարական մոտեցում,
- ֆինանսական կայունություն՝ հանրային դրամահավաք, մասնավոր սեկտորից ֆոնդերի հայթայթում, ռազմավարական մոտեցում,
- մասնակցություն քաղաքականության մշակմանը՝ քաղաքականության վերլուծության, ներկայացման հմտություններ, պրոակտիվ և հետևողական մոտեցում, տեսանելիություն, բյուջեի և քաղաքականության մոնիթորինգի կարողություններ, առցանց գործիքների օգտագործում:

Ստորև դիտարկենք հարցմանը մասնակցած ՔՀԿ-ների կողմից նշված դասընթացների թեմաները և նախընտրելի ձևաչափը:

Հետազոտության տվյալները փաստում են, որ ՔՀԿ-ները նախընտրում են դասական ուսուցումը առցանց ուսուցումից: Որպես այս նախընտրության պատճառներ են նշվում առցանց ուսուցման ժամանակ նյութի ընկալման դժվարությունը, տեխնիկայի և ինտերնետի հետ կապված խնդիրները, ինչպես նաև ավանդական դասընթացի համեմատ անմիջական շփման պակասը: Այսպիսով՝ դասընթացի նախընտրելի թեմաները նշելիս, ՔՀԿ-ները մեծ մասամբ նախընտրել են դասական ուսուցման ձևաչափը (նշված թեմաների 58%-ի դեպքում), և միայն 10 թեմայի դեպքում է նշվել առցանց ուսուցումը՝ որպես նախընտրելի տարբերակ (պատասխանների 5,3%):

98. CIVICUS Civil Society Index Rapid Assessment: Armenia Country Report, Yerevan, 2014

99. Ա. Թադևոսյան, Քաղաքացիական նախաձեռնությունները և նոր տեխնոլոգիաները Հայաստանում, Երևան, 2013թ.


100. CIVICUS Civil Society Index Rapid Assessment: Armenia Country Report, Yerevan, 2014

101. CIVICUS Civil Society Index Rapid Assessment: Armenia Country Report, Yerevan, 2014





Գծապատկեր 10. Դասընթացի նախընտրելի ձևաչափը (պատասխանների %)




Աղբյուր՝ «ՍՈՑԻՈՍԵՏՐ» կենտրոնի հարցման տվյալներ, 2014 թ.

ՔՀԿ-ների կողմից պահանջարկ ունեցող ոլորտների շրջանակներում առավել հաճախ նշվել են հետևյալ թեմաները՝

- կազմակերպական զարգացման կարողություններ/ հանրային կապեր (43 անգամ),
- մասնագիտական կարողությունների զարգացում (32 անգամ),
- դրամաշնորհային ծրագրի կազմում (30 անգամ),
- մարդու իրավունքներ (18 անգամ),
- համագործակցություն ՏԻՄ հետ (14 անգամ),
- համագործակցություն միջազգային ՀԿ-ների հետ (11 անգամ):

ՔՀԿ-ներին հարց է տրվել նաև այն մասին, թե արդյո՞ք կցանկանային մասնակցել կազմակերպական զարգացման և քաղաքականության գնահատման/հասարակական արշավների/մոնիթորինգի վերաբերյալ առցանց դասընթացներին: Ստացած պատասխանները ներկայացված են ըստ ՔՀԿ-ների՝ Երևան-մարզ բաշխվածությամբ:

Գծապատկեր 11. Կցանկանալի՞ք արդյոք մասնակցել առցանց դասընթացների:



Աղբյուր՝ «ՍՈՑԻՈՍԵՏՐ» կենտրոնի հարցման տվյալներ, 2014 թ.

Երևանյան ՔՀԿ-ներն ավելի մեծ պատրաստակամություն են հայտնում մասնակցել առցանց դասընթացներին: Քանի որ դասընթացների վերաբերյալ նախորդ հարցում մարզային ՔՀԿ-ներն ավելի շատ թեմաներ էին նշել, քան Երևանում տեղակայված ՔՀԿ-ները, կարելի է ենթադրել, որ այս հարցում դասընթացներին մասնակցելու համեմատաբար նվազ ցանկությունը հավանաբար կապված է դասընթացի ձևաչափի, այլ ոչ թե ուսուցման բուն գործընթացի հետ: Տվյալները ցույց են տալիս նաև, որ ընդհանուր առմամբ, ավելի քիչ ՔՀԿ-ներ են ցանկություն հայտնել մասնակցել քաղաքականության վերաբերյալ դասընթացներին:

Կազմակերպական զարգացման ոլորտում դասընթացների առավել պահանջված թեմաներն են ֆինանսների կառավարումը և դրամահավաքը, արդյունավետ հաղորդակցությունը և հանրային կապերը, մարդկային ռեսուրսների կառավարումը և առաջնությունը: Այս տվյալներն արտացոլում են սույն զեկույցի՝ ՔՀԿ կազմակերպական կարողությունների և ֆինանսական կայունության վերաբերյալ բացահայտումները: Հաջորդ առավել պահանջված թեմաներն են ռազմավարական պլանավորումը և կամավորների կառավարումը, որը վկայում է ՔՀԿ-ների կողմից ռազմավարական պլանավորման և իրենց աշխատանքում կամավորների դերի կարևորման մասին:

**Աղյուսակ 21. Ընտրե՛ք առցանց ուսուցման թեմաներ, որոնք առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում ձեր կազմակերպության համար**

	<b>Կազմակերպական զարգացում</b>	<b>քանակ</b>	<b>%</b>
1	Ֆինանսների կառավարում, համակատարների ծառայություններ, դրամահավաք	45	30.0
2	Շահույթ չհետապնդող կազմակերպության PR, արդյունավետ հաղորդակցությունը, on-line և off-line գործիքների օգտագործում	44	29.3
3	Առաջնորդության հմտություններ, մարդկային ռեսուրսների կառավարում, պլանավորում, հանձնառության փոխանցում, պատվիրակում և դրված նպատակների նվաճում	42	28.0
4	Ուղղված արական պլանավորում. ինչո՞ւ է դա պարտադիր	34	22.7
5	Կամավորության կառավարում, կամավորական ծրագրերի պլանավորում	33	22.0
6	Ծրագրերի կազմում և իրականացում	31	20.7
7	ՔՀԿ-ների հանրային հաշվետվողականությունը. ինչպե՞ս ներգրավել թիրախային խմբերը քաղաքացիական հասարակության որոշումների կայացմանը	30	20.0
8	Ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության չափորոշիչները, ստանդարտները, քաղաքականությունը, ընթացակարգերը և հրահանգները: Որակի կառավարման, այդ թվում ներքին գնահատման գործիքներն ու միջոցները	27	18.0
9	Ինչպե՞ս սկսել ոչ կառավարական (ոչ առևտրային) կազմակերպության գործունեությունը, որոշել թիրախային խմբերը, սահմանել առաքելությունը, որոշել հեռանկարը և ռազմավարություն մշակել	20	13.3
10	Այլ	5	3.3

**Քաղաքականության գնահատում / հասարակական արշավներ / մոնիթորինգ**

1	Տեղեկացնել հասարակությանը քաղաքական բարեփոխումներում նրա դերի մասին	41	27.3
2	Հանրային մոնիթորինգ և գնահատում: Պետական ծառայությունների և կառավարության այլ գործունեության քանակական և որակական չափումներ	40	26.6
3	«Արևելյան գործընկերություն» և բարեփոխումների գործընթացները, նպատակները, մեխանիզմները և պատճառները, քաղաքացիական հասարակության դերը այդ բարեփոխումների գործընթացներում	39	26.0
4	Պետական քաղաքականության բոլոր մակարդակների մոնիթորինգ	39	26.0
5	Բանակցություններ՝ ինստիտուցիոնալ երկխոսություն	38	25.3
6	Լոբբինգ և պաշտպանություն	34	22.6
7	Պետական բյուջե՝ վերլուծությունից դեպի գործողություններ	30	20.0
	Կուլիցիաների և ցանցերի ստեղծում	18	12.0
9	Շահառուների, իշխանության կառուցվածքի վերլուծություն	16	10.7
10	Այլ	1	0,7

Աղբյուր՝ «ՍՈՑԻՈՍԵՏՈՒ» կենտրոնի հարցման տվյալներ, 2014 թ.


Քաղաքականության մշակման ոլորտում դասընթացների նշված թեմաներից առաջին տեղում է քաղաքական բարեփոխումներում ՔՀԿ դերի մասին տեղեկատվության տարածման թեման, որին հետևում են հանրային մոնիթորինգն ու գնահատումը, «Արևելյան գործընկերություն» պատճառը և բարեփոխումների գործընթացները ու քաղաքացիական հասարակության դերը այդ բարեփոխումների գործընթացներում, պետական քաղաքականության բոլոր մակարդակների մոնիթորինգը:

Ուսումնասիրության շրջանակներում իրականացրած ֆոկլուս-խմբային քննարկումների մասնակիցները նշում են, որ ՔՀԿ-ներն առաջին հերթին պետք է իրենք գնահատեն իրենց գործունեությունը և ավելի շատ ջանք կիրառեն սեփական կարողությունների զարգացման ուղղությամբ. «Բոլորից ամեն ինչ պահանջում ենք, բայց մենք երբեք չենք անդրադառնում մեր գործունեությանը: Ես կարծում եմ, որ ՔՀԿ-ներն էլ իրենք իրենց զարգացման, իրենց առաքելության, իրենց արժեքների ճշգրտման



*ուղղությամբ մեծ անելիք ունեն» (ՔՀԿ ներկայացուցիչ, Երևան): ՔՀԿ ներկայացուցիչներն ընդգծում են երիտասարդների կարողությունների զարգացմանն ուղղված ջանքերի կարևորությունը: Տարբեր մարզերից ակտիվ երիտասարդներից կազմված խմբի մոդելը բերվում է որպես հաջող փորձի օրինակ. «Տասը մարզերից երեքական երիտասարդներ, [...] ոլորտը լավ չպարկերացնող, դա իրենց առավելությունն էր, եկել էին Ծաղկաձոր և էդ 3 օրվա ընթացքում խորացված ձևով այս ոլորտի ամենագլխավոր ուղղությունների վերաբերյալ հրավիրված փորձագետները դա անում էին շատ ազատ քննարկումների միջոցով, ոչ մեկը դասահոսություն չէր, և վերջում էլ նաև այդ փոփոխություններ առաջացնելու փոքր դրամաշնորհներ: Աշխարհող մեխանիզմ է» (ՔՀԿ ներկայացուցիչ, Գյումրի):*

ՔՀԿ-ների ավելի լայն խմբի համար կարողությունների զարգացման միջոցառումներ իրականացնելու նպատակով դասընթացավարների խմբի վերապատրաստումը կնպաստի ՔՀԿ-ների միջև գիտելիքի ու կարողությունների տարածմանն ու բազմապատկմանը: Հարցման արդյունքների համաձայն՝ ընդգրկված ՔՀԿ-ների 58,7%-ը հետաքրքրված է մասնակցելու քաղաքացիական հասարակության որոշումների կայացման դերի վերաբերյալ դասընթացավարների ուսուցմանը, որը հիմնավորվում է հմտությունների բարելավման, մյուսներին դասավանդելու և կազմակերպության ազդեցության շրջանակների ընդլայնելու անհրաժեշտությամբ:



# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

## Ընդհանուր միջավայրը և ՔՀԿ գործունեությունը

Հայաստանի քաղաքական, տնտեսական և սոցիալական միջավայրն այնքան էլ բարենպաստ չէ ՔՀԿ-ների սահուն գործունեության համար: Կոռուպցիան նշվում է որպես առավել նշանակալի գործոն, որն ազդեցություն է գործում Հայաստանի քաղաքացիական հասարակության վրա՝ համատարած աղքատության, սոցիալական և տնտեսական ճգնաժամի և սոցիալական ու տնտեսական անհավասարության հետ մեկտեղ: Անդամակցությունը Եվրասիական տնտեսական միությանը շատ ՔՀԿ-ների կողմից դիտվում է որպես ՔՀԿ կանոնակարգումների հետագա զարգացումների վերաբերյալ մտավախության առիթ: Միևնույն ժամանակ ՔՀԿ-ները ներկա միջավայրը դիտում են որպես իրենց աշխատանքի համար մարտահրավեր և երկրում դրական փոփոխություններ առաջացնելու ջանքերի ավելացման խթան:

Համեմատած ժողովրդավարության այլ ցուցիչների հետ՝ Հայաստանում քաղաքացիական հասարակության զարգացման մակարդակը միջազգային զեկույցների կողմից բարձր է գնահատվում: Թեև կազմակերպությունների միայն 15-20 տոկոսն է ակտիվ համարվում, և նրանց մեծ մասը դեռևս իրենց ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման փուլում են, արժեքավորվում են Հայաստանի ՔՀԿ-ների նվիրվածությունն ու ներգրավվածությունը, փորձագիտությունն ու վերլուծական կարողությունները:

Ֆինանսական կայունության խնդիրը ՔՀԿ-ների կողմից առավել շատ է կարևորվում, և դրամաշնորհներից զատ այլընտրանքային ֆինանսավորման բացակայությունը Հայաստանի ՔՀԿ-ներին ավելի խոցելի է դարձնում համայնքի կարիքներին արձագանքելու և նախ հանրության առջև հաշվետու լինելու կարևորման տեսանկյունից, որը կազմակերպության կառավարման հարցում պրոֆեսիոնալ ու ռազմավարական մոտեցման պակասի հետ բերում է հայաստանյան ՔՀԿ-ների ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակի:

Մի շարք ՔՀԿ-ների, ներառյալ չգրանցված կազմակերպությունների հաջողվում է փոփոխություններ առաջացնել և ազդել հանրային քաղաքականության վրա՝ համախոհներին մոբիլիզացնելու և շահերի պաշտպանության քարոզարշավ կազմակերպելու իրենց կարողությունների շնորհիվ:

Ստորև ավելի մանրամասն կներկայացնենք ՔՀԿ իրավական միջավայրի, արտաքին համագործակցության, ֆինանսական կայունության և քաղաքականության մշակման գործընթացում մասնակցության վերաբերյալ հիմնական բացահայտումներն ու առաջարկները:

## ՔՀԿ իրավական միջավայր

Ընդհանուր առմամբ, Հայաստանում առկա քաղաքացիական ազատությունները և ՔՀԿ կանոնակարգումները հիմնականում բարենպաստ են ՔՀԿ գործունեության համար: Այնուամենայնիվ, զեկույցում մատնանշվել են ՔՀԿ համար բարենպաստ իրավական միջավայրի հետևյալ խնդիրները.

- հավաքների ազատության հետ կապված սահմանափակումները, ինչպես, օրինակ, բողոքի ցույցերի մասնակիցների հանդեպ ճնշումները և բռնությունների կիրառումը,
- մամուլի ազատության և որոշ լրատվամիջոցների՝ հատկապես հեռուստաընկերությունների նկատմամբ պետական ազդեցության հետ կապված խնդիրները,
- պետական մարմինների կողմից տրամադրվող տեղեկատվության մատչելիության խնդիրները. թեև այս մատչելիությունը սահմանված է օրենքով, և պետական մարմինները հիմնականում հետևում են ընթացակարգերին, սակայն խնդրահարույց հարցերի դեպքում հաճախ խուսափող կամ ոչ լիարժեք պատասխաններ են տրվում հարցումներին,



- ՔՀԿ գրանցման հետ կապված խնդիրներ, որոնք հիմնականում վերաբերում են մարզերում գրանցման հնարավորության բացակայությանը և գրանցման փաստաթղթերի վերանայման հետ կապված թղթավարությանը,
- հասարակական կազմակերպությունների համար ձեռնարկատիրական գործունեության արգելքը,
- սոցիալական ձեռներեցության և բարեգործական նվիրատվությունների համար հարկային արտոնությունների բացակայությունը կամ պակասը,
- կամավորական աշխատանքի խթանման պակասը,
- չգործող կազմակերպությունների լուծարման համար հստակ մեխանիզմների բացակայությունը:

Վերջերս հաստատված «Հասարակական կազմակերպությունների օրենսդրական ու ինստիտուցիոնալ բարեփոխումների հայեցակարգը» մի շարք դրույթներ է պարունակում ՔՀԿ օրենսդրության բարելավման վերաբերյալ, որոնք դրական արձագանք են ստացել բազմաթիվ ՔՀԿ-ների կողմից: Այսպիսով՝ ՔՀԿ կանոնակարգումների ոլորտում ակնկալվում են օրենսդրական փոփոխություններ, որոնք կարող են լուծել վերոնշյալ խնդիրներից մի քանիսը:

## Համագործակցություն մյուս դերակատարների հետ

Ըստ հարցման արդյունքների՝ ՔՀԿ-ներն իրենց աշխատանքում առաջին հերթին համագործակցում են այլ ՔՀԿ-ների և զանգվածային լրատվամիջոցների հետ: Մասնավոր հատվածի հետ համագործակցությունն ամենից թույլն է, իսկ պետական մարմինների հետ ՔՀԿ-ները չափավոր են համագործակցում՝ ավելի սերտ առնչվելով տեղական իշխանությունների, քան պետական կառավարման մարմինների հետ: ՔՀԿ արտաքին համագործակցության ուժեղ և թույլ կողմերի վերաբերյալ կարելի է առանձնացնել հետևյալ բացահայտումները:

- ՔՀԿ-ները լիարժեք չեն օգտագործում միմյանց միջև համագործակցության ներուժը, թեև համատեղ ջանքերն ավելի մեծ հաջողությունների են բերում, որի մասին են վկայում մի շարք կոալիցիաների ու ցանցերի հաջողության պատմությունները:
- Շատ կոալիցիաներ ստեղծվում են դրամաշնորհային ծրագրերի

շրջանակներում, միջազգային կազմակերպությունների աջակցությամբ, իսկ մի քանի կոալիցիաներ ձևավորվել են ինքնաբերական կոնկրետ հարցերի շուրջ, և օգտագործում են անդամ կազմակերպությունների ռեսուրսները:

- Մյուս ՔՀԿ-ների գործունեության և ՔՀԿ համայնքում առկա ռեսուրսների վերաբերյալ տեղեկատվության պակասը ՔՀԿ-ների միջև ավելի արդյունավետ համագործակցության խոչընդոտներից մեկն է:
- ՔՀԿ-պետություն համագործակցության զարգացման համատեքստում մի շարք քաղաքականություններ, կանոնակարգումներ և մարմիններ են ստեղծվել, թեև նրանցից ոչ բոլորն են արդյունավետ համարվում, և դրանք երբեմն կարող են ձևական բնույթ կրել: Պետության և ՔՀԿ-ների միջև համագործակցության բազմաթիվ նախաձեռնություններ նախատեսված են միջազգային պայմանագրերով և/կամ դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում են ծավալվել, մինչդեռ պետական մարմինները հազվադեպ են համագործակցության նախաձեռնությամբ հանդես գալիս:
- Ըստ ՔՀԿ-ների՝ իշխանությունների կողմից քաղաքացիական հասարակության հետ երկխոսության ռեսուրսների կամ ներուժի պակասը կոռուպցիայի հետ ՔՀԿ-պետություն համագործակցության հիմնական խոչընդոտն է: Բացի այդ՝ ՔՀԿ-ների սեփական կարողություններն ու հմտությունները ևս սահմանափակ են այս առումով. նրանք չունեն գիտելիքներ, թե ինչպես մոտենալ պաշտոնյաներին և ներգրավվել քաղաքականության մշակման գործընթացում, հստակ տեղեկատվություն չունեն համագործակցության մեխանիզմների մասին: Վստահության երկկողմանի բացակայությունը և համագործակցության կարևորման պակասը ևս խոչընդոտում են համագործակցության կայացմանը:
- ՔՀԿ-բիզնես համագործակցության որոշ դրական դինամիկա կա, բայց համագործակցության ներուժի օգտագործումը դեռևս շատ ցածր մակարդակի վրա է: ՔՀԿ-ների հանդեպ վստահության պակասը, ԿՄՊ ավանդույթների բացակայությունը այս հատվածների միջև համագործակցության հիմնական խոչընդոտներն են, որոնք զուգակցվում են ՔՀԿ-ների ինքնաներկայացման հմտությունների, ռազմավարական մոտեցման և բիզնեսի հետ համագործակցության բարելավման

մոտիվացիայի պակասի հետ:

- Թեև ՔՀԿ-ները սերտ հարաբերություններ ունեն ՋԼՄ-ների հետ, ՋԼՄ-ների կողմից ՔՀԿ գործունեության լուսաբանումը բավարար չէ ՔՀԿ-ների տեսանելիության բարելավման և ՔՀԿ-ների ու նրանց աշխատանքի հանդեպ վստահության խթանման համար:
- ՋԼՄ-ներն ավելի հակված են լուսաբանելու այն ՔՀԿ-ների գործունեությունը, որոնց լավ են ճանաչում, որոնց գործունեությունն ավելի տեսանելի է և արդիական խնդիրներին է վերաբերում: ՔՀԿ-ները պետք է բարելավեն հաղորդակցության իրենց հմտությունները՝ ՋԼՄ-ների հետ ավելի արդյունավետ աշխատելու համար:

ՔՀԿ-ների հաշվետվողականության ու տեսանելիության բարելավումը, համագործակցության գործիքների ու մոդելների վերաբերյալ ՔՀԿ-ների հմտությունների ու գիտելիքների զարգացումը, համագործակցության կարևորումն ու ռեսուրսների համախմբումը այս ուղղությամբ՝ հատվածի հանդեպ վստահության ավելի բարձր մակարդակի հետ կնպաստի մյուս դերակատարների հետ ՔՀԿ հարաբերությունների հետագա բարելավմանը: Հաջողության պատմությունների, համագործակցության հնարավոր մեխանիզմների ու մոդելների վերաբերյալ տեղեկատվության տարածումը կնպաստի համագործակցության մոտիվացիայի աճին: Հաղորդակցության, ներկայացման ու բանակցային հմտությունների վերաբերյալ դասընթացները ևս անհրաժեշտ են ավելի արդյունավետ համագործակցության կառուցման համար:

ՋԼՄ-ների հետ աշխատանքի ռազմավարական մոտեցումը կօգնի ՔՀԿ-ներին ապահովել ավելի լավ համագործակցություն: Քանի որ ՋԼՄ-ները համարվում են քաղաքացիական հասարակության մաս, ՔՀԿ-ները կարող են իրենց աշխատանքի արդյունավետությունը բարելավել, եթե լրատվամիջոցները դիտարկեն ոչ միայն որպես հանրային կապերի ապահովման միջոց, այլև ռազմավարական գործընկեր ծառայությունների մատուցման գործում և շահերի պաշտպանության քարոզարշավներում: Մյուս կողմից՝ անհրաժեշտ է նաև խրախուսել ՋԼՄ-ներին համագործակցել և նրանց ներկայացնել հնարավոր օգուտները, ինչպես, օրինակ, ՔՀԿ-ների փորձագիտության, ոլորտային հետազոտությունների և վերլուծությունների օգտագործումը: ՔՀԿ ծրագրերի վերաբերյալ տեղեկատվական բազայի մշակումը կօգնի մյուս դերակատարներին և հենց իրենց՝ ՔՀԿ-ներին համատեղ աշխատանքի հիմքեր գտնել և ընդհանուր առմամբ բարելավել սեկտորի վերաբերյալ իրազեկվածությունը:

## ՔՀԿ ֆինանսական կայունություն

Թե՛ հետազոտության տվյալները, թե՛ այլ աղբյուրներ հաստատում են, որ ֆինանսական կայունությունը Հայաստանի ՔՀԿ-ների գլխավոր խնդիրներից մեկն է: Ինչպես նշվել է գեկույցում, այս խնդիրը կարևոր դեր է խաղում որպես կազմակերպությունների ինս տիտուցիոնալ զարգացման խոչընդոտ, որն ի վերջո բացասաբար է անդրադառնում նրանց գործունեության վրա: ՔՀԿ ֆինանսավորման աղբյուրների ուսումնասիրությունից կարելի է կատարել հետևյալ եզրակացությունները:

- Հայաստանի ՔՀԿ-ների ֆինանսավորման գերակշռող աղբյուրը միջազգային կազմակերպություններն են: Դրամաշնորհային ֆինանսավորումից կախվածությունը սահմանափակում է ՔՀԿ-ների աշխատանքը և բացասաբար ազդում նրանց վարկանիշի վրա:
- ՔՀԿ-ների պետական ֆինանսավորումը սահմանափակ է, իսկ պետական մարմինների մեծ մասը ֆինանսավորման հստակ և մրցութային մեխանիզմ չունի, չկան մոնիթորինգի ու գնահատման հստակ մեխանիզմներ: Պետական ֆինանսավորման զգալի մասնաբաժինը հատկացվում է սոցիալական ծառայություններ մատուցող ՔՀԿ-ներին, պետության կողմից հիմնադրված հիմնադրամներին և սպորտային ֆեդերացիաներին: Շատ ՔՀԿ-ներ նույնիսկ չեն էլ փորձում դիմել պետական ֆինանսավորման համար համակարգի հանդեպ վստահության պակասի պատճառով: Հասարակական կազմակերպությունները չեն կարող մասնակցել հանրային գնումների գործընթացին օրենսդրական սահմանափակումների պատճառով:
- Մասնավոր հատվածի ֆինանսավորումը ՔՀԿ ֆինանսավորման շատ փոքր մասնաբաժին է կազմում: Հիմնական խոչընդոտներն են հարկային խթանների բացակայությունն ու ՔՀԿ-ների պրոֆեսիոնալիզմի նկատմամբ վստահության ցածր աստիճանը, ինչպես նաև ՔՀԿ-ների կողմից բիզնես ֆինանսավորման հայթայթման սահմանափակ ջանքերը:
- Հանրային դրամահավաքը վերջերս ավելի տարածված է դարձել, սակայն այն դեռևս փոքր ծավալ է կազմում և ՔՀԿ-ների կողմից չի դիտարկվում որպես ֆինանսական կայունության աղբյուր:
- Վճարովի ծառայությունների տրամադրումը ևս հազվադեպ է օգտագործվում ՔՀԿ-ների կողմից որպես եկամտի միջոց



օրենսդրական սահմանափակումների ու առանձին ձեռնարկության գործարկման համար հմտությունների ու ռեսուրսների բացակայության պատճառով:

- Թեև բազմաթիվ ՔՀԿ-ներում գործում է անդամավճարների համակարգը, սակայն դրանք շատ փոքր ծավալ են կազմում ՔՀԿ գործունեության համար կայուն եկամուտ ապահովելու առումով:

Ֆինանսավորման աղբյուրների բազմազանեցումը ՔՀԿ կայունության զարգացման առաջնային խնդիրն է, իսկ կայուն եկամուտ ապահովելու հարցում նրանց կօգնի ինստիտուցիոնալ զարգացումը, հաշվետվողականության բարելավումը, ֆինանսական կայունության ապահովման նկատմամբ ռազմավարական մոտեցումը և ֆոնդի հայթայթման հմտությունների զարգացումը:

## ՔՀԿ մասնակցությունը և կարողությունները քաղաքականության մշակման ոլորտում

Վերջին տարիներին որոշակի առաջընթաց է գրանցվել հանրային քաղաքականության մշակման գործընթացում ՔՀԿ-ների մասնակցության տեսանկյունից. մասնակցությունը պարտադրող տարբեր կանոնակարգումներ, համատեղ աշխատանքային խմբեր և խորհուրդներ են ստեղծվել, իսկ ՔՀԿ կոալիցիաները և ոչ ֆորմալ խմբերը շահերի պաշտպանության բազմաթիվ քարոզարշավներ են ձեռնարկել՝ օգտագործելով առցանց գործիքներ և համախմբելով բազմաթիվ մարդկանց: Այնուամենայնիվ, հանրային քաղաքականության վրա ՔՀԿ-ների ազդեցությունը դեռևս սահմանափակ է և չհամակարգված: Զեկույցի հիման վրա առանձնացնենք քաղաքականության մշակման ոլորտում ՔՀԿ-ների մասնակցության և կարողությունների վերաբերյալ հետևյալ բացահայտումները:

- Քաղաքականության երկխոսության առավել հաջողված գործընթացները իրականացվել են միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությամբ և դժվար թե հնարավոր լինեին առանց դոնորների ֆինանսական ու տեխնիկական աջակցության:
- ՔՀԿ-ները կարող են հաջողության հասնել, եթե հետևողական լինեն շահերի պաշտպանության իրենց գործունեության մեջ. այնուամենայնիվ, դիտարկված հաջողությունները համակարգային փոփոխությունների չեն բերել, այլ ավելի շուտ ժամանակավոր

լուծումներ են եղել և հասցեագրել են երևույթների հետևանքները, այլ ոչ խորքային պատճառները:

- Քաղաքականության ձևավորման ոլորտում ՔՀԿ ազդեցությունը կախված է շահերի պաշտպանության քարոզարշավի ծավալից ու առարկայից: Այսպես, իրավապաշտպան կազմակերպությունները և բողոքի շարժումները կարող են զգալի ճնշման ենթարկվել, եթե բախվում են իշխանություն կրողների գործարար կամ իշխանական շահերին:
- Պաշտոնյաների քաղաքական կամքը կարևոր դեր ունի քաղաքականության մշակման և իրականացման մոնիթորինգի գործընթացում ՔՀԿ-ների մասնակցության հնարավորության ստեղծման հարցում և հաճախ վճռորոշ է շահերի պաշտպանության քարոզարշավի արդյունքի համար: Կոնկրետ պետական մարմնի հայեցողությունից է հաճախ կախված՝ քաղաքականության քննարկման գործընթացում ՔՀԿ-ների ներգրավման համար ջանքեր կգործադրվեն, թե ոչ: Այնուամենայնիվ, պրոակտիվ մոտեցման և հետևողականության դեպքում ՔՀԿ-ներն ավելի մեծ ազդեցություն կարող են ունենալ:
- Համայնքային մակարդակով որոշումների ընդունման գործընթացում հանրային մասնակցությունը պարտադրված է օրենքով, սակայն հաճախ հանրային մասնակցությունը սահմանափակվում է հանրության իրազեկմամբ և քննարկումներով, մինչդեռ որոշումների կայացման գործընթացում լիարժեք մասնակցությունը և իրական ազդեցությունը մեծապես կախված է տեղական ՔՀԿ-ների, այդ թվում կազմակերպված համայնքային խմբերի ակտիվությունից և կարողություններից:
- ՔՀԿ-ները սահմանափակ փորձագիտություն ու կարողություններ ունեն քաղաքականության այլընտրանքների մշակման գործում, ինչպես նաև համախոհների մեծածավալ խմբեր մոբիլիզացնելու, շահերի պաշտպանության քարոզարշավներ պլանավորելու, իրականացնելու ու արդյունքներին հետևելու առումով: Թիրախ լսարանին հասնելու համար ՔՀԿ-ներն առավել հաճախ միակողմանի գործողություններ են կիրառում, ինչպես, օրինակ, տեղեկատվության տարածումը կամ հաշվետվությունների հրապարակումը: ՔՀԿ-ներն ավելի շատ ընդգրկված են լայնածավալ միջոցառումների իրականացման գործում, որոնք սահմանափակ ազդեցություն ունեն քաղաքականության վրա:
- Երևանի և մարզային ՔՀԿ-ների միջև տարբերություն է նկատվել

պետական մակարդակով քաղաքական երկխոսության մասնակցության աստիճանի և դրա համար առկա կարողությունների հարցում. մարզային ՔՀԿ-ներն ավելի քիչ են ընդգրկված պետական մակարդակով քաղաքականությունների մշակման գործընթացում: Միևնույն ժամանակ նրանք ուսուցման ավելի շատ թեմաներ են նշել, որոնցով հետաքրքրված են՝ թեև նախընտրելով դասական ուսուցումը առցանց ուսուցումից:

- ՔՀԿ-ներն ավելի շատ հետաքրքրված են կազմակերպական զարգացման, քան քաղաքականության մշակման ոլորտի դասընթացներով, որն արտացոլում է այն ենթադրությունը, որ շատ ՔՀԿ-ներ իրենց չեն դիտարկում որպես քաղաքականության մշակման գործընթացի դերակատարներ:


Որպես կանոն, կոպիցիաներն ու ցանցերը, ինչպես նաև մի շարք խմբեր ու կազմակերպություններ միավորող քաղաքացիական շարժումները ավելի հաջողակ են լինում փոփոխություններ առաջացնելու և շահերի պաշտպանության իրենց ջանքերում հաջողության հասնելու գործում: Այսինքն՝ ՔՀԿ-ների միջև համագործակցության ընդլայնումը կնպաստի քաղաքականության մշակման ոլորտում ՔՀԿ-ների ազդեցության մեծացմանը: Ակնհայտ է, որ ՔՀԿ-ների կազմակերպված, ինստիտուցիոնալ ու հետևողական գործունեությունը համայնքային մակարդակում ավելի մեծ ազդեցություն է գործում: ՔՀԿ-ների համատեղ ջանքերը՝ մասնակցային մշակույթի կերտման ու կարողությունների զարգացման նախաձեռնությունների հետ մեկտեղ, կնպաստեն Հայաստանում քաղաքացիական մասնակցության արդյունավետության ու ազդեցության աճին:





# ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՂՈՒՄՆԵՐ

1. «ՄՈՑԻՈՄԵՏՐ» անկախ սոցիոլոգիական կենտրոնի իրականացված ուսումնասիրություն՝ «Եվրոպական ինտեգրացիա» ՀԿ հետ համատեղ, ԵՄ ֆինանսական աջակցությամբ, Երևան, 2014 թ.
2. Ա. Թադևոսյան, Քաղաքացիական նախաձեռնությունները և նոր տեխնոլոգիաները Հայաստանում, Երևան, 2013 թ.
3. Բարեգործության փորձառությունը առևտրային հատվածի մոտ, «ՀԿ Կենտրոն» ՔՀԶ ՀԿ/Քաունթերփարթ, Երևան, 2008 թ.
4. ԵՄ ԱլԳ ՔՀՖ Հայաստանի ազգային պլատֆորմի հայտարարությունը Հայաստանի՝ ԵՏՄ-ին անդամակցելու վերաբերյալ, 2014 թ. նոյեմբերի 10, <https://eaparmenianews.wordpress.com/2014/11/11/%D5%A9%D5%B8%D5%B2%D5%A1%D6%80%D5%AF%D5%B8%D6%82%D5%B4-194/> (վերջին դիտումը՝ 05.11.2014 թ.)
5. Երիտասարդական կազմակերպությունների քարտեզագրում և պետության կողմից ֆինանսավորվող երիտասարդական դրամաշնորհային ծրագրերի արդյունավետության գնահատում հետազոտության զեկույց, Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտ, Երևան, 2014 թ.
6. Կովկասյան հետազոտական ռեսուրսների կենտրոնների իրականացրած ամենամյա «Կովկասյան բարոմետր» հետազոտության 2013 թ. արդյունքներ
7. Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2014 թ., ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն <http://armstat.am/am/?nid=82&id=1621> (վերջին դիտումը՝ 27.11.2014 թ.)
8. Հայաստանի ինֆորմացիայի ազատության կենտրոնի վեբկայք, Մայիսակ և Սև ցուցակներ՝ չափորոշիչներ, <http://www.foi.am/hy/criterias/> (վերջին դիտումը՝ 27.11.2014 թ.)
9. Հայաստանի հասարակական կազմակերպությունների զարգացման հնարավորությունները և ռիսկերը, «Թրանսպարենսի ինթերնեշլ» հակակոռուպցիոն կենտրոն, Երևան, 2011 թ.
10. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2014 թ., ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, <http://armstat.am/am/?nid=45&year=2014> (վերջին դիտումը՝ 27.11.2014 թ.)
11. Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ՋԼՄ-ների իրավունքների խախտումների մասին 2014 թ. առաջին կիսամյակի զեկույց, «Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե» ՀԿ, օգոստոս 2014 թ. <http://khosq.am/wp-content/uploads/2014/08/1-CPFE-Zekuyc-2014-Arm.doc> (վերջին դիտումը՝ 13.11.2014)
12. ՀՀ իրավական անձանց ռեզիստրի գործակալության գրանցված կազմակերպությունների վիճակագրություն 01.10.2014 թ. դրությամբ, [http://moj.am/storage/files/legal\\_acts/legal\\_acts\\_1224865184711\\_stat2014-10\\_1\\_.pdf](http://moj.am/storage/files/legal_acts/legal_acts_1224865184711_stat2014-10_1_.pdf)
13. ՀՀ Սահմանադրություն
14. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք
15. ՀՀ օրենքը «Բարեգործության մասին»
16. ՀՀ օրենքը «Իրավական ակտերի մասին»
17. ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին»
18. ՀՀ օրենքը «Հավաքների ազատության մասին»
19. ՀՀ օրենքը «Հիմնադրամների մասին»
20. ՀՀ օրենքը «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին»
21. ՀՀ օրենքը «Տեղեկատվության ազատության մասին»
22. Մ. Թադևոսյան և Լ. Հակոբյան, Կամավորության մշակույթը Հայաստանում, «Քաունթերփարթ ինթերնեշլ» և CIVICUS.



- Քաղաքացիական մասնակցության համաշխարհային միավորում, Երևան, 2010 թ.
23. Մ. Թադևոսյան և Լ. Հակոբյան, Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն. գործունեության նոր շրջանակ, «Քաունթերփարթ ինթերնեշնլ» և CIVICUS. Քաղաքացիական մասնակցության համաշխարհային միավորում, Երևան, 2010 թ.
24. Մ. Թադևոսյան և Լ. Հակոբյան, Հայաստանի ՔՀԿ-ների ֆինանսական կենսունակությունը. կախվածությունից՝ ինքնավարություն, «Քաունթերփարթ ինթերնեշնլ» և CIVICUS. Քաղաքացիական մասնակցության համաշխարհային միավորում, Երևան, 2010 թ.
25. Քաղաքացիական հասարակության կառույցներին պետական ֆինանսական աջակցության տրամադրման գործընթացի առկա վիճակը և հիմնախնդիրները, Պրոֆեսիոնալները՝ համուն քաղաքացիական հասարակության, Երևան, 2013 թ.
26. ՔՀԿ կայունության ցուցանիշ 2013 - Հայաստան, ՔԶՀՀ/ԱՄՆ ՄԶԳ, հունիս, 2014 թ., սուկա է՝ <http://www.cdpc.am/file/Armenia+final.pdf> (վերջին դիտումը՝ 28.11.2014 թ.)
27. 2013 CSO Sustainability Index for Central and Eastern Europe and Eurasia, USAID, June 2014, available at: <http://www.usaid.gov/sites/default/files/documents/1863/E%26E%202013%20CSOSI%20Final%2010-29-14.pdf> (վերջին դիտումը՝ 28.11.2014 թ.)
28. Armenia HDI values and rank changes, Human Development Report 2014, [http://hdr.undp.org/sites/all/themes/hdr\\_theme/country-notes/ARM.pdf](http://hdr.undp.org/sites/all/themes/hdr_theme/country-notes/ARM.pdf) (վերջին դիտումը՝ 28.11.2014 թ.)
29. CIVICUS Civil Society Index Rapid Assessment: Armenia Country Report, Yerevan, 2014, [http://program.counterpart.org/Armenia/wp-content/uploads/2013/09/Civicus-Report\\_August-2014\\_FFfinal.pdf](http://program.counterpart.org/Armenia/wp-content/uploads/2013/09/Civicus-Report_August-2014_FFfinal.pdf) (վերջին դիտումը՝ 28.11.2014 թ.)
30. Code of Good Practice on Policy Dialogue, Developed by the Joint Accord Table of the Voluntary Sector Initiative, October 2002, [http://www.vsi-isbc.org/eng/policy/policy\\_code.cfm](http://www.vsi-isbc.org/eng/policy/policy_code.cfm) (վերջին դիտումը՝ 07.11.2014 թ.)
31. Eduardo Lorenzo Ochoa, Policy Paper on Strengthening Civil Society and its Interaction with State Institutions, European Union Advisory Group to the Republic of Armenia, 2012
32. Freedom House, Freedom of the Press 2014: Armenia, <https://freedomhouse.org/report/freedom-press/2014/armenia#> (վերջին դիտումը՝ 20.11.2014 թ.)
33. Freedom House, Nations in Transit 2014: Armenia, <https://freedomhouse.org/report/nations-transit/2014/armenia#> (վերջին դիտումը՝ 20.11.2014 թ.)
34. Freedom of Information Center of Armenia website: White and Black Lists, Criteria, <http://www.foi.am/en/criterias/>
35. International Center for Human Development, Supporting Policy, Regulatory and Institutional Reforms for Civil Society Development in Armenia: Existing gaps and recommendations, 2012
36. Ishkhanian A., Civil Society, Development and Environmental Activism in Armenia. Yerevan, 2013
37. Manual on Advocacy and Policy Influencing for Social Change, Technical Assistance for Civil Society Organisations – TACSO Regional Office, 2011, [http://www.tacso.org/doc/doc\\_manual\\_5.pdf](http://www.tacso.org/doc/doc_manual_5.pdf) (վերջին դիտումը՝ 27.11.2014 թ.)
38. National Human Development Report 2009: Migration and Human Development, UNDP Armenia, [http://www.am.undp.org/content/dam/armenia/docs/Migration\\_and\\_Human\\_development\\_eng.pdf](http://www.am.undp.org/content/dam/armenia/docs/Migration_and_Human_development_eng.pdf) (վերջին դիտումը՝ 27.11.2014 թ.)
39. Open Government Partnership Armenia website, [www.ogp.am](http://www.ogp.am)
40. Salamon, Sokolowski and Associates, Global Civil Society, Dimensions of the Nonprofit Sector, Volume 2; 2004
41. The World Bank, Armenia Overview, <http://www.worldbank.org/en/country/armenia/overview>
42. Transparency International Corruption Perceptions Index 2013, <http://www.transparency.org/cpi2013/results> (վերջին դիտումը՝ 05.11.2014 թ.)